

ԼՐԱՏՈՒ
ՀԱՅԿԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ
ԸՍՈՑԱՅԻՆՈՒԹՅՈՒՆ

1(3)



2024

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ARMENIAN LIBRARY ASSOCIATION

ԼՐԱՏՈՒ

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Կիսամյա գիտա-տեղեկատվական հանդես

HERALD

OF THE ARMENIAN LIBRARY ASSOCIATION

A Biannual Scientific-Informative Journal

2024

1(3)

ԵՐԵՎԱՆ- YEREVAN

2024

Հանդեսը լույս է տեսնում 2023 թվականից
տարին երկու անգամ (էլեկտրոնային)
The journal has been published since 2023
twice a year (electronic)

Հրատարակումը երաշխավորված է
Հայկական գրադարանային ասոցիացիայի կողմից
Publication is recommended by
Armenian Library Association

Խ մ ք ա գ ռ ա կ ա ն խ ո ղ ու թ ղ
Նախագահ՝ *Ռուզան Տոնոյան*
Գլխավոր խմբագիր՝ *Մայա Գրիգորյան*
Պատասխանատու խմբագիր՝ *Արմինե Հովհաննիսյան*
Անդամներ՝ *Գևորգ Բարդակչյան, Լևոն Ավդոյան, Արա Ղազարյան,
Ալբերտ Խառատյան, Տիգրան Զարգարյան, Վահե
Թորոսյան, Գագիկ Սուքիասյան, Վիկտորիա Խուրշուդյան,
Արարատ քին. Պողոսյան, Ավագ Հարությունյան,
Համո Սուքիասյան, Միհրան Մինասյան, Ռաֆիկ Ղազարյան*

E d i t o r i a l B o a r d

Chair: Ruzan Tonoyan

Editor-in-Chief: Maya Grigoryan

Executive Secretary: Armine Hovhannisyan

Members: Gevorg Bardakchyan, Levon Avdoyan, Ara Ghazaryan, Albert
Kharatyan, Tigran Zargaryan, Vahe Torosyan, Gagik Sukiasyan,
Viktoria Khurshudyan, Priest Ararat Poghosyan, Avag Harutyunyan,
Hamo Sukiasyan, Mihran Minasyan, Rafik Ghazaryan

e-ISSN 2953-8092

DOI: 10.54503/2953-8092

ԳԼԽԱՎՈՐ ԽՄԲԱԳՐԻ ՍՅՈՒՆԱԿ

Սիրելի՛ ընթերցող

Հայկական գրադարանային ասոցիացիան ընթերցողի սեղանին է դնում «Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» գիտա-տեղեկատվական հանդեսի 2024 թ. առաջին համարը:

Սույն համարում հոդվածները ներկայացնում ենք «Տեսություն և պրակտիկա», «21-րդ դարի գրադարան», «Մշակութային ժառանգություն», «Մարզային և համայնքային գրադարաններ», «Մատենագիտական ճշգրտումներ», «Գրադարանային իրադարձություններ» խորագրերի ներքո:

Հավատարիմ ամսագրի որդեգրած քաղաքականությանը՝ ամսագրում ներառված հոդվածները լավագույնս արտացոլում են ոլորտի ձեռքբերումներն ու խնդիրները, ինչպես նաև մարտահրավերները, որոնց բախվում են գրադարաններն իրենց ամենօրյա գործունեության ընթացքում: Տեղեկատվական տեխնոլոգիաները, որոնք արդեն վաղուց մուտք են գործել գրադարաններ, շարունակում են զարգանալ՝ առաջարկելով նոր գործիքներ, որոնց կիրառումն առավել դյուրին կդարձնի աշխատանքը: Մեր ուշադրության կենտրոնում այդ գործիքակազմի ներկայացումն է, քանի որ յուրաքանչյուր գրադարանավար օգտագործում է այն ամենօրյա աշխատանքի ընթացքում:

21-րդ դարում խիստ կարևորվում են կայքէջերն ու սոցիալական հարթակները, որոնք միջոցներ են՝ գրադարանների ձեռքբերումները հանրահռչակելու համար: Սոցիալական հարթակների հետ աշխատանքը պահանջում է առանձին հմտություններ և ունակություններ, որոնց պետք է տիրապետեն բոլոր գրադարանավարները:

ԼՐԱՏՈՒ ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԱՍՈՑԻԱՑԻԱՅԻ

Ահա ինչու ամսագրում պարբերաբար անդրադառնում ենք այս թեմային:

ՀՀ մարզային և համայնքային գրադարանները միշտ ուշադրության կենտրոնում են: Նրանց նվիրված վերլուծությունները հրաշալի հարթակ են փորձի փոխանակման և նորությունները յուրացնելու տեսանկյունից:

Գրադարաններում պարբերաբար իրականացվում են մատենագիտական ճշգրտումներ, որոնց արդյունքում ի հայտ են գալիս տպագիր նոր անուններ կամ բացակա միավորներ: Հայերեն տպագիր ժառանգությանը նվիրված հետազոտությունները դառնում են միջոց՝ մշակութային արժեքները հանրայնացնելու համար: Մատենագիտական ձեռքբերումները վստահաբար ունեն սկզբնաղբյուրի արժեք և խիստ կարևոր են տարբեր գիտական ոլորտների մասնագետների համար:

Ներկայացնելով հանդեսի երրորդ համարը՝ ակնկալում ենք ստանալ մեր ընթերցողների և ոլորտի մասնագետների ակտիվ արձագանքները առաջադրված տեսակետների շուրջ:

**ԹՎԱՅԻՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ
ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՊԱՏՐԱՍՏԵԼԻՍ***

ՀՏԴ: 004+01

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-5

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Տեխնիկական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

Նյութի մատենագիտական նկարագրությունը կազմելիս գրադարանավարը շատ հաճախ դժվարությունների է հանդիպում դրա չափսերի ճիշտ արձանագրման հարցում: Լայն ձևաչափով թերթերի, մեծ քարտեզների չափսերի ճշգրիտ արձանագրումը հաճախ դժվար է լինում մեծ քանոնի բացակայության պատճառով, վերցված չափսերում էլ սխալի տոկոսը բարձր է: Հոդվածում անդրադարձ է արված թե ինչպես կարելի է լուծել այս խնդիրը թվային տեխնոլոգիաների կիրառման օգնությամբ:

When compiling a bibliographic description of an item, the librarian very often encounters difficulties in correctly measuring its dimensions. Accurate recording of the dimensions of wide-format newspapers and large maps is often difficult due to the lack of a large ruler, and the percentage of errors in the dimensions taken is high. The article discusses how to solve this problem with the help of digital technologies.

* Հոդվածը ներկայացվել է 08.02.2024, գրախոսվել է 11.04.2024, ընդունվել է տպագրության 29.05.2024:

The article was submitted on 08.02.2024, reviewed on 11.04.2024 accepted for publication on 29.05.2024.

Բանալի բառեր՝ Նյութի մատենագիտական նկարագրություն, նյութի ֆիզիկական բնութագրիչներ, թվային տեխնոլոգիաներ, չափորոշիչներ, ծրագրեր:

Ինչպես հղել՝ Զարգարյան, Տ. (2024), Թվային տեխնոլոգիաների կիրառումը մատենագիտական նկարագրություն պատրաստելիս, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 5–18.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-5)

How to cite (APA style): Zargaryan, T. (2024), Using digital technologies during preparation of bibliographic description, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 5-18. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-5](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-5)

Ներածություն

Նյութի մատենագիտական նկարագրությունը մասնագիտական առումով միշտ էլ եղել է հրապուրիչ աշխատանք. որքան նկարագրությունը ճշգրիտ է, որքան նկարագրության շատ դաշտեր են լրացված, այնքան նյութը ընկալելի է օգտվողին: Իսկ ձեռագիր մատյանների, արխիվային փաստաթղթերի և խանձարուրային ու հնատիպ հրատարակությունների պարագայում պահանջվում է առավել մանրակրկիտ նկարագրություն և բժախնդիր մոտեցում: Շատ հաճախ պահանջվում է նշել որոշ տառերի չափսերը, շարվածքի հեռավորությունը վերին, ստորին և կողային լուսանցքներից, միջտողային հեռավորությունները, կազմի չափսը, շարվածքի չափսը և այլն: Բնական է, որ թանգարանային արժեք ներկայացնող նյութերի պարագայում անթույլատրելի է մեխանիկական գործիքներով սկսել այդ չափումները: Առկա են տարբեր վտանգներ՝ ֆիզիկական վնասվածքների առաջացում, մանրէների ներթափանցում, տեքստի միտումնավոր աղճատում, սխալ չափսերի ստացում: Թվարկեցի տեսանելի խնդիրներից միայն մի քանիսը, սակայն դրանք շատ ավելին են: Իսկ ինչպե՞ս արձանագրել նյութի չափսերը, եթե մատենագետին այն տրամադրվել է թվային ձևաչափով:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Թվային տեխնոլոգիաները տալիս են վերոհիշյալ հարցերի պատասխանները (ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ, 2023, 14): Ստորև ներկայացված է դրանց լուծման բանալին:

ՀՍ 361-2013 ստանդարտի պահանջները

Համաձայն ՀՍ 361-2013 «Տեղեկատվության, գրադարանային և հրատարակչական գործի ստանդարտների համակարգ. Մատենագիտական գրառում. մատենագիտական նկարագրություն. Ընդհանուր պահանջներ եւ կազմման կանոններ» Հայաստանի ազգային ստանդարտի (ՀՍ 361-2013)՝ մատենագիտական նկարագրությունը կազմված է հետևյալ հատվածներից.

1. վերնագրի և պատասխանատվության մասին տեղեկությունների հատված,
2. հրատարակության հատված,
3. առանձնահատուկ տեղեկությունների հատված,
4. ելքային տեղեկությունների հատված,
5. ֆիզիկական բնութագրիչների հատված,
6. մատենաշարի հատված,
7. ծանոթագրությունների հատված,
8. ստանդարտ համարի (կամ դրա այլընտրանքայինների) և հասանելիության պայմանների հատված:

Ինչպես նշված է ստանդարտում (ՀՍ 361-2013), «Ֆիզիկական բնութագրիչների հատվածը սահմանվում է որպես տեղեկույթ էջերի, անհրաժեշտության դեպքում՝ դրանց չափսերի, պատկերազարդումների և ուղեկցող նյութի մասին» և պարունակում է ֆիզիկական ձևի նշագիրը, որում ներկայացված է նկարագրման օբյեկտը՝ զուգակցված փաստաթղթի ծավալի, անհրաժեշտության դեպքում նաև չափսերի, դրա նկարազարդումների և նկարագրման օբյեկտի մաս հանդիսացող ուղեկից նյութի նշումով: Ընդսմին, նկարագրման

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

օբյեկտի չափսը նշվում է անհրաժեշտության դեպքում՝ կետ ստորակետից հետո:

86 էջ. : նկար. ; 30x24 սմ

1 կ. :գուն. ; 44x52 սմ գում. 22x13 սմ

4 գլանափաթ. մկֆ ; 35 մմ

1 ձայն. սկավ. (56 թույ.) : թվային ; ստերիո ; 12 սմ

Եթե նկարագրման օբյեկտը տուփի մեջ է, կարող են բերվել օբյեկտի և տուփի չափսերը կամ միայն տուփի չափսերը:

4 էլեկտրոն. օպտ. սկավառ. (CD-ROM) : ձայն.; գուն.; տուփի մեջ 15x15 սմ>

Ստանդարտը չի պահանջում չափել նյութը սանտիմետրի տասնորդական կամ հարյուրերորդական նիշերի ճշտությամբ, սակայն տեխնոլոգիական նվաճումները թույլ են տալիս լրացնել այդ բացը, քանի որ շատ հաճախ հարկ է լինում չափսերը տրամադրել հնարավորինս բարձր ճշգրտությամբ:

Պատկերների մշակման համակարգերի ներկայացում

Սույն հոդվածում անդրադարձ կարվի նկարագրման օբյեկտի չափսերի ստացման երկու համակարգերի, որոնք իրենց ճկունությամբ և օգտագործման պարզությամբ հեշտ է սովորելը և առօրյայում օգտագործելը:


ա. Adobe-Photoshop: Ծրագրային միջոցների շուկայում առկա են պատկերների մշակման բազմաթիվ համակարգեր, որոնցից Հայաստանի գրադարանավարների շրջանում ամենատարածվածը Adobe ֆիրմայի Photoshop փաթեթն է: Photoshop-ը պատկերների ստեղծման, գրաֆիկական դիզայնի և լուսանկարների խմբագրման ծրագիր է, որը տրամադրում է նկարների խմբագրման բազմաթիվ հնարավորություններ պիքսելների վրա հիմնված պատկերների,

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ռաստերային և վեկտորային գրաֆիկայի համար: Photoshop-ն թողարկվել է 1988 թ.: Այն ի սկզբանե մշակվել է Macintosh դասի համակարգիչների համար, սակայն այժմ հասանելի է Windows և macOS հարթակների համար ևս: Փաթեթը կոմերցիոն է, և հասանելի հետևյալ հղումով՝ <https://www.adobe.com/products/photoshop.html> (29.05.2024):

Եթե ձեր համակարգչում արդեն տեղադրված է Photoshop փաթեթը, ապա հետևելով ստորև բերված հրահանգներին՝ կարող եք հեշտությամբ տիրապետել նյութի տարբեր հատվածների չափագրման տեխնիկային: Փորձնական աշխատանքի համար Ձեզ անհրաժեշտ կլինի ունենալ TIFF ձևաչափով նկարված նյութ: Դա կարող է լինել ամբողջական տպագրի նյութ, հատված նյութից կամ նյութի մեկ էջ¹:

Որպես օրինակ՝ ներկայացնենք Թիֆինսի «Հայկական աշխարհի կոունկ» ամսագրի վերնագրային էջը (նկ. 1).



Նկ. 1.

**«Հայկական աշխարհի կոունկ»
ամսագրի առաջին էջի
պարկերը նկարահանումից հետո**

¹ Կարող եք օգտագործել նաև նյութեր JPEG կամ PDF ձևաչափերով, բայց պետք է վստահ լինեք, որ դրանք ստացվել են մասնագիտացված նկարահանող սարքերի կիրառմամբ:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

➤ Առաջին քայլով հարկավոր է ակտիվացնել Adobe-Photoshop ծրագիրը, ապա File -> Open ընտրությամբ գտնել պահանջվող նիշքը և բացել այն: Կունենաք նկ. 1-ում բերված պատկերը:


➤ Ուղղահայաց գործիքագոտու վահանակից մկնիկի սեղմումով նշում ենք «Rectangular Marquee Tool»-ը² որպես ընտրության գործիք (նկ. 2).



Նկ. 2

«Ուղղանկյուն ընտրության գործիք»-ի նշում

➤ Մկնիկի ծախ ստեղնը սեղմած պահելով՝ կատարում ենք անհրաժեշտ հատվածի ընտրությունը: Ընտրության գծիկները կետագծերն են (ընտրված տարածքի պատկերը տե՛ս նկ. 3-ում).



Նկ. 3

Ընտրված տարածք

² Ուղղանկյուն ընտրության գործիք:


ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

➤ Edit-> Copy քայլով ընտրված տարածքը տեղափոխում ենք՝ հետագա մշակման համար:

➤ File -> New -> OK քայլով բացում ենք նկարի զետեղման նոր տարածք:

➤ Edit -> Paste քայլով ընտրված պատկերը ժամանակավոր հիշողությունից տեղափոխում ենք նկարի զետեղման նոր տարածք:

➤ Image -> Image Size... քայլով արտածվում են մեր կողմից ընտրված պատկերի չափսերը (նկ. 4.): Պետք է ուշադիր լինել, որ պեսզի չափման միավորը լինի սանտիմետր: Եթե այն այլ մեծություն է՝ percent, inchs, mm, points, picas, columns³, ապա չափսերի բացվող ընտրացանկից, պետք է ընտրել «սանտիմետր»՝ cm:




Նկ. 4

**«Հայկական աշխարհի կոռունկ»
ամսագրի առաջին էջի
չափսերը՝ ստացված Photoshop
ծրագրով (23.02x14.56 սմ)**

Քայլերի նույն հաջորդականությամբ կարելի է ստանալ «Հայկական աշխարհի կոռունկ» ամսագրի շարվածքի հատվածի չափսերը (նկ. 5).

³ Տոկոս, դյույմ, մմ, կետ, պիկա, սյունակ: Տպագրության մեջ պիկան չափման միավոր է, որը համապատասխանում է մոտավորապես 1/6 դյույմի:


ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ



Նկ. 5

«Հայկական աշխարհի կոունկ» ամսագրի առաջին էջի շարվածքի չափսերը՝ ստացված Photoshop ծրագրով (17.39x10.81 սմ)

Կարելի է ստանալ որոշակի տառը չափսերը (նկ. 6).




Նկ. 6

«Հայկական աշխարհի կոունկ» ամսագրի վերնագրի 3 տառի չափսերը՝ ստացված Photoshop ծրագրով (0.98x0.49 սմ)

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Կարելի է ստանալ միջտողային հեռավորությունը (նկ. 7).



Նկ. 7

«Հայկական աշխարհի կոունկ» ամսագրի վերնագրի միջտողային չափսը՝ 0.52 սմ

բ. GIMP: Եթե կոմերցիոն փաթեթների օգտագործումը խնդրահարույց է, ապա նույնը կարելի է իրականացնել «Ազատ/Բաց կոդերով ծրագրերի» ընտանիքին պատկանող GIMP փաթեթի կիրառմամբ:


GIMP-ը GNU Image Manipulation Program⁴-ի հապավումն է: Այն անվճար և ազատ տրամադրվող ծրագիր է, նախագծված է պատկերների մշակման և նկարների ստեղծման համար: Կարելի է ազատորեն ներբեռնել <https://www.gimp.org/downloads/> կայքից, տեղադրել համակարգչում և առանց որևէ արտոնագրային խախտման՝ շարունակաբար օգտագործել այն: Ներկայացնենք պահանջվող պատկերի չափսերը ստանալու քայլերի հաջորդականությունը GIMP ծրագրի օգնությամբ:

➤ Ծրագրի ակտիվացումից և File -> Open գործողությամբ «Հայկական աշխարհի կոունկ» ամսագրի առաջին էջի ներբեռնումից

⁴ GNU Image Manipulation Program <https://www.gimp.org/> (29.05.2024):

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

հետո, հարկավոր է ընտրել էջի այն հատվածը, որի չափսը պետք է վերցվի: Դրա համար «Rectangle Select Tool» գործիքով ընտրում ենք ամսագրի առաջին էջի պահանջվող հատվածը (նկ. 8).



Նկ. 8

«Rectangle Select Tool» գործիքի ընդրություն


➤ Այնուհետև Edit -> Copy քայլով կատարած ընտրությունը տեղափոխում ենք համակարգչի ժամանակավոր հիշողություն՝ հետագա մշակման համար:

➤ File -> Create -> From Clipboard քայլով ժամանակավոր հիշողություն տեղափոխված պատկերը միանգամից արտածվում է որպես նոր փաստաթուղթ:

Image -> Canvas Size... քայլով, կբացվի ձեր ընտրված էջը՝ չափսերի ցուցադրությամբ (նկ. 9, 10): Պետք է ուշադիր լինել, որպեսզի չափման միավորը լինի սանտիմետր: Եթե այն այլ մեծություն


ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Է՝ pixels, inches, millimeters, points, picas, meter, feet, yards⁵, ապա չափսերի բացվող ընտրացանկից պետք է ընտրել «սանտիմետր»՝



Նկ. 9

**«Հայկական աշխարհի կոռնկ»
ամսագրի առաջին էջի
չափսերը՝ ստացված GIMP ծրագրով
(23.004x14.580 սմ)**



Նկ. 10

**«Հայկական աշխարհի կոռնկ»
ամսագրի առաջին էջի շարվածքի
չափսերը՝ ստացված GIMP
ծրագրով (23.004x14.580 սմ)**

Եթե համեմատենք Photoshop-ով և GIMP-ով ստացված չափսերը, կունենանք հետևյալ պատկերը (աղյս. 1).



Չափսերը Photoshop-ով		Չափսերը GIMP-ով	
Նկար 4	23.02x14.56 սմ	Նկար 9	23.00x14.58 սմ
Նկար 5	17.39x10.81 սմ	Նկար 10	17.45x10.88 սմ

Տեսնում ենք, որ առկա է չափսերի տարբերություն սանտիմետրի հարյուրերորդական մասով: Սա աննշան շեղում է և պայմանավորված է մկնիկով պատկերի ընտրության հետ:

⁵ փիքսել, դյույմ, միլիմետր, կետեր, պիկա, մետր, ոտնաչափ, կանգուն:

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

Եվս մեկ դիտարկում՝ կապված Photoshop և GIMP համակարգերով պատկերների արտաձևանը: Եթե համակարգչի պաստառի վրա պատկերը շատ փոքր է արտաձևած, ապա երկու համակարգերի դեպքում էլ դրանց ներքևի ձախ հատվածում կա խոշորացույց, որը ցույց է տալիս թե պատկերը իր իրական չափսի որ տոկոսով է ցուցադրվում: Եթե չափսը շատ փոքր է, ինչը դժվարացնում է պատկերի առանձին հատվածների հնարավորինս ճշգրիտ ընտրությունը, ապա փոխելով խոշորացման տոկոսը՝ կարող եք ստանալ պատկերի ցուցադրման ցանկալի չափը (նկ. 11)։

Խոշորացում Photoshop-ով	Խոշորացում GIMP-ով
	

Նկ. 11

Խոշորացույցի դիրքը Photoshop և GIMP համակարգերում

Ամփոփում

Առաջնորդվելով «Ազատ/Բաց կոդերով ծրագրերի» բնագավառում նախագծման, փորձարկման, տեղայնացման և հանրահոշակման աշխատանքներում ունեցած մեր երկարամյա փորձով՝ խորհուրդ ենք տալիս օգտվել այս ընտանիքին պատկանող ծրագրային փաթեթներից: Դրանք տարածվում են անվճար, ծրագրային սկզբնական կոդը տրամադրվում է անարգել, հնարավոր է ծրագրային սկզբնական կոդի ձևափոխում ըստ օգտվողի պահանջների, օգտագործման պարագայում առկա է խտրականության բացակայություն առանձին մարդկանց կամ խմբերի հանդեպ, ինչպես նաև օգտագործման նպատակների հանդեպ և այլն: Նման ծրագրերն իրենց

որակով ոչնչով չեն զիջում, իսկ հաճախ էլ գերազանցում են նմանատիպ կոմերցիոն փաթեթներին:

Անկախ այն հանգամանքից, թե նկարներ մշակող ինչպիսի համակարգից կօգտվեք, պետք է վստահ լինեք, որ ձեռքի տակ առկա է նկարահանման պրոֆեսիոնալ սարքով իրականացված պատկեր: Այդ պատկերից ստացված այլ ձևաչափի նիշքերը՝ tiff, jpeg, pdf և այլն, ևս ընդունելի են, քանի որ նման սարքով ստացված պատկերը, որպես ծառայողական տեղեկատվություն, ներառում է նաև պատկերի իրական չափսերի մասին տվյալները:

Բջջային հեռախոսներով արված նկարները, ինչ խոսք, պիտանի չեն նման աշխատանքներում:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ 2023 – Հայրապետյան, Ն. (2023), Թվանշային գրադարանների ստեղծման անհրաժեշտությունը: Բաց/ազատ կոդերով ծրագրաշարերի ներկայացում, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի* (Երևան), 1(1), 9-21 [Hayrapetyan, N. (2023), The importance of creating digital libraries: presentation of free/open source software, *Herald of the Armenian Library Association* (Yerevan), 1(1), 9-21];

ՀՍ 361-2013 (2013, 1 հունվար), Տեղեկատվության, գրադարանային և հրատարակչական գործի ստանդարտների համակարգ. մատենագիտական գրառում, մատենագիտական նկարագրություն, ընդհանուր պահանջներ և կազմման կանոններ [(2013, 1 January), Teghekatvutyan, Gradaranayin ev Hratarakchakan Gorts'i Standartneri Hamakarg: Matenagitakan Grarum. Matenagitakan Nkaragrutyun. Yndhanur Pahanjner ev Kazmman Kanonner] (29.05.2024):

**USING DIGITAL TECHNOLOGIES
DURING THE PREPARATION OF THE BIBLIOGRAPHIC
DESCRIPTION**

TIGRAN ZARGARYAN

Fundamental Scientific Library of NAS RA

Ph. D. (Technical Sciences)

Keywords: Bibliographic description, physical characteristics of material, digital technologies, standards, programs.

When compiling a bibliographic description of an item, the librarian very often encounters difficulties in correctly measuring its dimensions. This article discusses how to solve this problem with the help of digital technologies.

Guided by our long-term experience in design, testing, localization, and popularization in the field of "free/open-source software", we recommend using the software packages belonging to this family: they are distributed free of charge, the source code is provided freely, it is possible to modify the source code. According to the user's requirements, there is a lack of discrimination against individual people or groups, as well as against the purposes of use, etc. Such programs are not inferior in quality and often surpass similar commercial packages.

Regardless of the type of image processing system you use, you must be sure that you have an image captured by a professional capture device: other format files from that image, such as tiff, jpeg, pdf, etc., are also acceptable because the image obtained with such a device also includes data about the actual dimensions of the image as service information:

Of course, pictures taken with mobile phones are not suitable for such work.

**USER-FRIENDLY LIBRARY WEBSITES:
DESIGN AND BUILDING STANDARDS***

ՀՏԴ: 004+01

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-19

SONA MESROPYAN

Khanko Aper National Children's Library

ORCID: [0009-0002-5057-3731](https://orcid.org/0009-0002-5057-3731)

The library's website allows patrons to navigate the institution's digital domain, facilitating access to a virtual realm of information where patrons can locate the required resources without visiting the library physically. Every library designs its website based on specific requirements, characteristics, financial resources, challenges, etc. However, all websites share some common standards.

The following article examines a website's distinct attributes, required standards, and layout challenges to establish a library-user online link efficiently.

Կայքէջը գրադարան մուտք գործելու առցանց հնարավորություն է, որն օգտատերերին տալիս է գրադարանի թվային տարածք: Այն վիրտուալ տեղեկատվության մի աշխարհ է, որի միջոցով գրադարանը փորձում է օգնել օգտատերին՝ գտնելու իրեն անհրաժեշտ տեղեկությունն առանց գրադարան այցելելու: Հետևաբար, կարևոր է, որ օգտատերերն իրենց զգան հնարավորինս ազատ և հարմարավետ տվյալ տարածքում: Ճիշտ կառուցված և ձևավորված կայքէջը գրադարանի ակտիվության ու գործածելիության գրավականներից է:

Յուրաքանչյուր գրադարան ձևավորում է իր կայքը՝ ելնելով տվյալ գրադարանի կարիքներից, առանձնահատկություններից, բյուջեից, թիրա-

* The article was submitted on 11.05.2024, reviewed on 07.06.2024 accepted for publication on 22.06.2024.

Հոդվածը ներկայացվել է 11.05.2024, գրախոսվել է 07.06.2024, ընդունվել է տպագրության 22.06.2024:

խային խմբից, մարտահրավերներից և այլն, սակայն կան չափորոշիչներ, որոնք ընհանուր են բոլոր կայքերի համար:

Սույն հոդվածում ներկայացնում ենք գրադարանային կայքի կառուցման առանձնահատկությունները, պահանջվող չափորոշիչներն ու ձևավորման խնդիրները՝ ի նպաստ գրադարան-ընթերցող առցանց կապի առավել արդյունավետ իրագործման:

Քանալի բառեր՝ Library, website, information technologies, social media, user, standards.

How to cite (APA style): Mesropyan, S. (2024), User-friendly library websites: design and building standards, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 19-29. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-19](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-19)

Ինչպես հղել՝ Մեսրոպյան, Ս. (2024), Գրադարանային կայքէջի կառուցման և ձևավորման չափորոշիչները, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 19-29.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-19](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-19)

Introduction

Libraries, as significant centers for the distribution of information and knowledge, use modern information technologies to meet the informational requirements of their users efficiently. The rapid development of information technologies, alongside the Internet, social media platforms, and the integration of artificial intelligence tools, has enabled libraries to enhance their service systems to meet contemporary challenges, ensuring that libraries are constantly accessible to their users, for whom digital resources have emerged as essential sources of information.

Users visit library websites more frequently than they visit physical libraries, making them indispensable (SHEVCHENKO 2019, 21). It is essential to acknowledge that the increase in the quantity of relevant and competent information available on library websites has led to a growth in

competition among libraries regarding user satisfaction. This occurrence enables users to broaden their options and swiftly gain knowledge on complex elements of utilizing the World Wide Web and various sources of information.

Libraries compete with the extensive informational resources available on the Internet, aiming to provide innovative pathways for effectively navigating and locating essential information within this realm. Hence, the library website emerges as a valuable innovation, delivering interactive information services that are continuously updated and improved.

Library Website: Essential Features

The present-day user prefers rapid and inflexible access to the library website. The main objective of the user is to fulfill their information needs by using digital resources (NIELSEN 1999, 15). It is, therefore, essential for a library website to be convenient, accessible, compatible, meaningful, and navigable. The utilization of WCAG2¹ (Web Content Accessibility Guidelines) ensures the universal availability of online content by establishing specific regulations, standards, and suggestions to maximize website accessibility. It is accessible to all individuals, irrespective of their technical or physical limitations. According to these principles, the site content should be perceptible, manageable, understandable, and reliable. The font size of the texts on the websites, the color contrast between the letters and the background, and the distance between the lines require particular attention. The WCAG2 guidelines were established to ensure that web content is accessible to everyone, regardless of their technological proficiency or physical disabilities. These guidelines provide standards and best practices for creating highly accessible websites. The website's content must be

¹ The Web Content Accessibility Guidelines.

perceivable, operable, understandable, and trustworthy by these standards. The text displayed on webpages requires careful examination of line spacing, color contrast between text and background, and font size. WCAG2 recommends maintaining a minimum 4:5:1 ratio for visual perception between regular text and image text and a minimum 3:1 ratio for visual perception between large text and its accompanying image(s). In 2022, the RA government emphasized the importance of adhering to these accessibility guidelines for the official websites of both state and local self-government bodies, as stated in draft decision N 1521-N.

One of the principles of WCAG2 is compatibility between websites. In the past, the Internet was accessed mainly through computers, but nowadays, most users prefer to access it through phones or tablets. The library's website should work on any mobile device and be easy to read. Everyone should also be able to access the website from the internet browser that suits them. Access from any device and browser must be fast and convenient; otherwise, users will lose interest in the site. Media resources on the website—video, audio, or photos—should be easy to open.

The design of the library website should satisfy the users' information needs, ensuring simplicity, clarity, and utmost comprehensibility of the language (NAIDENKO 2015, 8–11). The website is a “living entity,” with its content and resources requiring constant updates to remain dynamic and engaging. Studies show that users judge within a mere 50 milliseconds (0.05 seconds) whether they want to stay on the website or not and 25–30 seconds to determine the availability of desired information. Consequently, the website must capture the user's interest almost instantaneously.

The Homepage is what the user's first sight catches. It serves as a virtual guidebook for the library, which contains information about the

library, the services and features provided, the location, and other media resources. Therefore, the site's effectiveness depends on its visual appeal, simplicity, arrangement, and information content. Noteworthy elements on the Homepage include the following:

➤ *Content* - To enhance user engagement, the Homepage should present concise and regularly updated texts, images, and slides. By consistently sharing such materials online, the library can attract a wider audience and provide a comprehensive overview of its operations. Regular updates to these resources are essential.

Libraries must provide advanced notifications to users regarding their wide range of events and content. Hence, the website must include a calendar displaying upcoming events so that users can be informed in advance and have the opportunity to participate if they so desire. Texts and materials that provide information about such events and activities can enhance the activity and entertainment value of the website.

➤ *Navigation* - Moving between pages on a website should be swift and efficient. The library's website navigation system should be as simple as possible to prevent user confusion. The website must notify users in advance about upcoming events and activities. Therefore, the website should incorporate a calendar showcasing scheduled events to enable users to plan their participation. Content and materials related to these events can make the website more captivating.

➤ *Page Layout* – The content and title should be aligned perfectly. The Homepage should contain the minimal information that the user requires to navigate the site and locate essential information swiftly. A homepage with too much information and other resources can annoy and discourage users. It should have some navigation options.

The homepage should contain basic information about the library's location (preferably accompanied by a map), working hours, and contact information, which are of interest to many when accessing the library's website. This information must be placed not only on the homepage but on other pages too. The homepage should provide a quick transition from the library's website to its social media platforms. It is also desirable that this information is present on the site pages.

When accessing the site from a mobile phone, the first thing that appears is the material on the right side of the screen. Therefore, to save the user's time, essential materials must be on the right part of the website.

A page on the site should not be empty, and the content of the page should match the title. All headings and subheadings must be correctly aligned. The headings and subheadings must be appropriately aligned.

An assessment of the Websites of the regional Libraries of the Republic of Armenia

There are ten regional libraries in the RA. They are:

- Aragatsotn Regional Library - <http://aragatsotn.reglib.am/>
- Ararat Regional Library - <http://ararat.reglib.am/>
- Armavir Regional Library - <http://armavir.reglib.am/>
- Gegharkunik regional library - <http://gegharkunik.reglib.am/>
- Lori Regional Library - <http://lmg.am/hy/>
- Kotayk Regional Library - <http://kotayk.reglib.am/>
- Shirak Regional Library - <http://shirak.reglib.am/>
- Vayots Dzor Regional Library - <http://vayotsdzor.reglib.am/>
- Tavush Regional Library - <http://tavush.reglib.am/>
- Syunik regional library - <http://syunik.reglib.am/>

21-ԸՂ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

The examination of the websites of all regional libraries has revealed engaging materials and information that may capture users' interest. However, these resources are not prominently featured on the Homepage, forcing users to invest time in navigating through pages to locate them. Some of the materials need to be updated, and certain sections direct users to blank pages, indicating the need for regular updates and strategic replacement of these resources to refresh the website's content.

Attention must be paid to the font size and color of the text displayed on images throughout the websites of regional libraries to guarantee the maximum legibility of the text within these images. The consistency in the relevance of headings and subheadings across different sections of the web pages is of predominant importance.

Although the websites of the ten regional libraries can be accessed, some issues require attention. Currently, several websites allow users to rectify inaccurate information and ensure accessibility. For example,

- Accessibility Checker - [Accessibility Checker - ADA & WCAG Compliance \(Free Scan\)](#)
- WAVE (Web Accessibility Evaluation Tools)-(wave.webaim.org)
- Accessible- [accessScan - Website Accessibility Checker - Free & Instant - accessible](#)

All websites have a bright and simple color scheme. They do not have attractive pictorial designs. Each website has slide shows and pictures, but they need to be updated more frequently.

Only one of the websites, Lori Regional Library, has posted the *address, phone number, and working hours* of the library on the main page; it is on the right side of the website. On the websites of all other libraries, except for the Kotayk regional library, the working hours of those libraries are posted on the right side of the *homepage*. Such infor-

21-րդ դարի գրադարան

mation needs to be on the *homepage* of the Kotayk Regional Library. The *address* of the library in the regional libraries of Lori, Vayots Dzor, Ararat, Tavush, and Syunik can be found by following the steps on the homepage **about us - Feedback**. The feedback on the websites of the regional libraries of Aragatsotn, Shirak, Kotayk, and Armavir is on the homepage. The address of the Gegharkunik Regional Library can be found by doing the following steps on the homepage **Pages - Feedback**. Neither site contains an *event calendar*.

The pictures and slides posted on the main pages of all websites are mainly related to finished events and often contain old materials. Furthermore, announcements and news could be fresh. In almost all websites, subsection field titles do not correspond to each other semantically, and sometimes they are repeated. The regional libraries of Aragatsotni, Shirak, Ar movie, and Ararat contain a single image that needs a title. There exist pages that currently need to be fixed. Some websites contain exciting materials, and questionnaires that need to be updated and enriched with new fresh ones.

All sites have helpful links and redirects.

[Հայաստանի գրադարանների համահավաք գրացուցակ](#)
/Union Catalog of Armenian Libraries/
[Հայ գիրք /Armenian Book/](#)
[«Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան»](#) /Digital Library at AUA - American University of Armenia/

Most websites provide a diverse range of useful links, ranging from dictionaries to links to university or other specialist websites. Some contain only one or two links.

Summary

In summary, it is imperative to acknowledge the significance of the appropriate design and layout of the library website to captivate users

and attract new ones. Additionally, it plays a vital role in showcasing the various activities and resources offered by the library. The existence of established international standards for the arrangement and design of library websites facilitates the accurate representation of unique opportunities by each library. Ten regional library websites in the Republic of Armenia are similar, as the same system was used for their creation. Regional library websites help their users be informed about activities, events, and updates that they organize and make. However, there are a lot of issues regarding the design and layout of these websites that need urgent solutions.

All websites need to give higher consideration to regularly updating their content. The lack of continuous updating of pages of the regional libraries' content leads to a reduction in the user interest in these web pages. It is imperative to specify the timeframe of the events. Attention should be directed toward font size, font color, and background color of the sites, and enhance the vibrancy of the page to make it more engaging. Incorporate more visually appealing and captivating images. Ensure that the placement of quizzes is prominent. Users should be motivated to share their insights on books they have read on the library's webpage. Display the location and contact information prominently across all web pages. Organize the layout of the website based on the preferences of the users. Some libraries offer various facilities such as studios and language courses for their members, and details about these activities should be posted on the website homepage. This approach will aid in drawing individuals towards the library.

21-րդ դարի գրադարան

References (Օգտագործված գրականության ցանկ)

NAIDENKO 2015 – Найдено, Д. (2015), *Методика создания web-сайта библиотеки. Методические указания по изучению курса «Менеджмент библиотечного дела»*, Ростов-на-Дону, 29 [Naydenko, D. (2015), *Metodika sozdaniya website biblioteki. Metodicheskie ukazanie po izucheniyu kursa “Menedzhment biblitechnogo dela”*, Rostov-na-Donu, 29];

NIELSEN 1999 – Nielsen, J. (1999), *Designing Web Usability: The Practice of Simplicity*, CA, United States New Riders Publishing, 432;

SHEVCHENKO 2019 – Шевченко, Л. (2019), Дизайн и удобство библиотечных веб-сайтов, *Научно-техническая информация. сер. 1. Организация и методика информационной работы /Всероссийский институт научной и технической информации РАН*, 21-33 [Shevchenko, L. (2019), *Dizayn I udobstvo biblioteknikh veb-saytov, Nauchno-tekhnicheskaya informatsiy. Ser. 1. Organizatsiy I metodika informatcionnoy raboti /Vserossiyskii institut nauchnoy I tekhnicheskoy informatsii RAN*, 21-33];

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԿԱՅՔԷՋԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԵՎ ՁԵՎԱՎՈՐՄԱՆ ՉԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԸ

ՍՈՆԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Խնկո Ապրո անվան ազգային մանկական գրադարան

Բանալի բառեր՝ Գրադարան, կայքէջ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, սոցիալական ցանցեր, օգտատեր, չափորոշիչներ:

Ամփոփելով՝ նշենք, որ գրադարանի կայքէջի ճիշտ կառուցվածքն ու ձևավորումը կարևոր է՝ օգտագործողը գրավելու, նոր ընթերցող գտնելու կամ գրադարանի գործունեությունը ճիշտ լուսաբանելու առումով: Գոյություն ունեն գրադարանային կայքէջի ձևավորման միջազգային չափորոշիչներ, որոնք հնարավորություն են տալիս յուրաքանչյուր գրադարանի ճիշտ ներկայացնել սեփական հնարավորությունները: ՀՀ տասը մարզային գրադարաններն ունեն կայք-

էջեր, որոնք բոլորն իրար նման են, քանի որ ստեղծվել են նույն համակարգի հիման վրա: Մարզային գրադարանների կայքէջերով հնարավոր է պատկերացում կազմել նրանց գործունեության, միջոցառումների կամ համալրումների մասին, սակայն կան կայքէջի ձևավորման բազմաթիվ խնդիրներ, որոնք հրատապ լուծման կարիք ունեն:

Բոլոր կայքերը պետք է ավելի շատ ուշադրություն դարձնեն իրենց բովանդակության կանոնավոր թարմացմանը: Կայքում թարմ նյութերի բացակայությունը հանգեցնում է նրա ակտիվության և կայքի նկատմամբ հետաքրքրության նվազմանը: Հետևողական պետք է լինել միջոցառումները թարմացնելու հարցում: Անհրաժեշտ է նաև ուշադրություն դարձնել այնպիսի առանձնահատկությունների, ինչպիսիք են տառատեսակի չափը, գույնը և ֆոնի գույնը: Պետք է բարձրացնել էջի աշխուժությունը՝ այն ավելի գրավիչ դարձնելու համար, ներառել տեսողականորեն ավելի գրավիչ պատկերներ, համոզվել, որ վիկտորինաները տեղադրված են աչքի ընկնող հատվածում: Օգտատերերը պետք է մոտիվացված լինեն գրադարանի հիմնական վեբ էջով կիսվել որոշակի նյութերի վերաբերյալ իրենց մտքերով: Էջերն ու նյութերը պետք է շարունակաբար թարմացվեն և համալրվեն: Կայքի հասցեն և կոնտակտային տվյալները ցանկալի է տեղադրել կայքի բոլոր էջերում: Կայքի դասավորությունը պետք է բխի օգտատերերի նախասիրություններից: Որոշ գրադարաններ առաջարկում են տարատեսակ ծառայություններ իրեն օգտատերերի համար, ինչպես օրինակ՝ լեզվի դասընթացներն ու զանազան խմբակները, որոնք պետք է տեղակայել կայքի գլխավոր էջի վրա, որպեսզի այն անմիջապես գրավի օգտատերերի ուշադրությունը:

**ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
ԽՆԴԻՐՆԵՐՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ**

21-ՐԴ ԴԱՐԻ ՄԱՐՏԱՀՐԱՎԵՐՆԵՐԻՆ ԸՆԴԱՌԱՋ*

ՀՏԴ: 02(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-30

ՄԱՐԻՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ

Արմավիրի մարզային գրադարան

ORCID: [0009-0007-5756-2935](https://orcid.org/0009-0007-5756-2935)

Արմավիրի մարզային գրադարանը, մարզում գործող քաղաքային և համայնքային գրադարանները պահպանում, տարածում են ազգային և համաշխարհային բազմադարյան գրական-մշակութային ժառանգությունը, հասարակությանը հասանելի են դարձնում գիտական նոր նվաճումները, հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխություններն ու զարգացումները:

Սույն ուսումնասիրությամբ ներկայացնում ենք Արմավիրի մարզային գրադարանի ձեռքբերումներն ու խնդիրները 21-րդ դարի տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման համատեքստում: Հատկապես կարևորում ենք Արմավիրի մարզային գրադարանի թվային մոդելի ձևավորման գաղափարը, ինչը խիստ կարևոր է գրադարանների հեփազա գործունեությունը ճիշտ կազմակերպելու համար:

The regional library of Armavir, the urban and community libraries operating in the region preserve and spread the centuries-old national and

* Հոդվածը ներկայացվել է 09.01.2024, գրախոսվել է 18.03.2024, ընդունվել է տպագրության 07.06.2024:

The article was submitted on 09.01.2024, reviewed on 18.03.2024 accepted for publication on 07.06.2024.

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

world literary and cultural heritage, make available to the public new scientific achievements, changes and developments in social and political life.

In the frame of this study, we present the achievements and problems of libraries operating in Armavir region in the context of the development of information technologies of the 21st century. We especially emphasize the idea of creating a digital model of the Armavir regional library, which is very important for properly organizing the future activities of the libraries.

Բանալի բառեր՝ Արմավիրի մարզային գրադարան, գրադարանային գործառույթներ, գրադարանային վիճակագրություն, տեղեկատվական տեխնոլոգիաներ, գրադարանի թվային մոդել:

Ինչպես հղել՝ Անտոնյան, Մ. (2024), Ամավիրի մարզային գրադարանների խնդիրներն ու զարգացման միտումները. 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ, *Լրագրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 30-43. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-30)

How to cite (APA style): Antonyan, M. (2024), Problems and development trends of the Armavir regional library: facing the challenges of the 21st century, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 30-43. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-30](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-30)

Ներածություն

Հայաստանի Հանրապետության զարգացման առաջնահերթություններում հետանկախության տարիներին խիստ կարևորվեց մարզերի տնտեսական, սոցիալական, մշակութային զարգացման խնդիրը: Մշակութային զարգացման համատեքստում առանձնացան գրադարանները՝ որպես մշակութային, գիտական, տեղեկատվական պաշարների համակարգողներ: Նման դիրքորոշումը պատճառաբանված էր, քանի որ XXI-րդ դարը հասարակության լայն շերտերին թելադրեց նոր վերաբերմունք և պահանջներ, հնարավորություն տվեց մի շարք ոլորտների, այդ թվում՝ գրադարաններին յուրացնել տեխնոլոգիական զարգացման արդյունքները՝ դառնալով ավելի ար-

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

դիական, գրավիչ ու պահանջված (ՀՈՎՍԵՓՅԱՆ 2016, 34-38): Ընդգծվեց հատկապես ՀՀ մարզերի գրադարանների աշխատանքների վերաձևակերպման հարցը: Նրանց առջև ծառացավ զարգացման նոր մարտահրավերներին դիմակայելու դժվարագույն խնդիրը (ԳԱՍ-ՊԱՐՅԱՆ 2023, 36-37):

Մարզային գրադարանները տասն են, գործում են ՀՀ մշակույթի նախարարության ենթակայությամբ: Յուրաքանչյուրը նախարարության քաղաքականությունը տեղում իրականացնող մարմին է, մեթոդական առումով համակարգում է տվյալ տարածքի բոլոր համայնքային գրադարանները (ԲՈՒԴՈՒՄՅԱՆ 2019): Մարզային գրադարաններն ապահովում են մարզի բնակչության գրադարանային-տեղեկատվական մատչելիությունը, համալրում են գրադարանային տեղեկույթի էլեկտրոնային շտեմարանը, օգտվում են ցանցի հնարավորություններից, ապահովում են մարզի կազմակերպությունների գրադարանային ծառայության մեթոդական, մասնագիտական և տեղեկատվական ծառայությունը (ՀՀ ՕՐԵՆՔԸ 2012, հոդվ. 6):

Արմավիրի մարզային գրադարանը. խնդիրներն ու առաջնահերթությունները¹

Արմավիրի մարզային գրադարանը հիմնադրվել է 1938 թ Հոկտեմբերյանի Լենինի անվան փողոցի վրա գտնվող այգում, 200 միավոր գրականությամբ և Մարուսյա Միրզոյանի գլխավորությամբ: Հետագա տարիներին այն ղեկավարել են Գայանե Մինասյանը, Այդա Ղազարյանը, իսկ 2022 թվականից այս պատասխանատու պաշտոնը զբաղեցրել է Արևիկ Սարգսյանը:

1941 թ. բացվել է գրադարանի մանկական բաժինը, իսկ գրքային ֆոնդը հարստացվել է փոստի միջոցով առաքվող գրքային կապոցներով և պարբերականներով: 1950 թ. այն կոչվել է Հոկտեմ-

¹ Արմավիրի մարզային գրադարան <http://armavir.reglib.am/> (07.06.2024)

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

բերյանի քաղաքային գրադարան և տեղափոխվել շրջսովետի գործկոմի շենք՝ Սպանդարյան փողոց: Գրքային ֆոնդը կազմել է 7947 միավոր գիրք, ունեցել է 784 ընթերցող, 20 շրջիկ կետ, 6 ինքնակրթական խմբակ և 11 գրքատար, համալրվել է 18 անուն թերթով: Գրադարանը հանդիսացել է գյուղական գրադարանների մեթոդական կենտրոն՝ նրանց օգնելով միջգրադարանային բաժնույթի կարգով: Հանրապետական ստուգատեսի անցկացման կապակցությամբ առաջադրվել է պարգևատրման: ՀԿԿ ԿԿ-ի և ՀՍՍՀ Մինիստրների սովետի 1974 թ. օգոստոսի 1-ի թիվ 474 որոշման համաձայն 1976 թ. Հոկտեմբերյանի գյուղական գրադարանները միավորվել են՝ ստեղծելով Գրադարանների կենտրոնացված համակարգ, իսկ այս գրադարանը դարձել է միավորված համակարգի կենտրոնական գրադարան՝ ենթակայության տակ ունենալով 52 մասնաճյուղ-գրադարաններ, որից 1-ը՝ կենտրոնական, 6-ը՝ քաղաքային, 3-ը՝ մանկական, 42-ը՝ գյուղական: 1976 թ. կենտրոնական գրադարանում բացվել են համալրման, մշակման, սպասարկման, մանկական, մեթոդ-մատենագիտական աշխատանքների, ֆոնդերի պահպանման և միջգրադարանային, բաժինները, ինչպես նաև ընթերցասրահը: Ընթերցողների սպասարկումը կազմակերպվել է միջգրադարանային բաժնույթի միջոցով: Գրադարանում մատուցվել է կազմարարական ծառայություն, կազմակերպվել են նաև նկարչական, գեղարվեստական ձևավորման խմբակներ:

1995 թ. դեկտեմբերի 4-ին ՀՀ վարչատարածքային բաժանման մասին օրենքով (ՀՀ ՕՐԵՆՔԸ 1995, հոդվ. 3) Արմավիրի, Էջմիածնի, Բաղրամյանի շրջանի բազայի վրա ձևավորվել է Արմավիրի մարզը: 1996 թ. հոկտեմբերի 1-ից ՀՀ կառավարության որոշմամբ գյուղական գրադարանները անջատվել են միասնական ցանցից և ենթարկվել համայնքին: 1997 թ. հունվարի 1-ին ՀՀ կառավարության

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ապրիլի 30-ի որոշման համաձայն մարզկենտրոնում տեղակայված համակարգի կենտրոնական գրադարանը դարձել է հանրապետական գրադարան: 2003 թ. հունվարի 1-ից ՀՀ կառավարության 2002 թ. հունիսի 6-ի 886 որոշման համաձայն գրադարանը վերանվանվել է Արմավիրի մարզային գրադարան (ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ 2002):

Արմավիրի մարզային գրադարանը մարզում գրականության և տեղեկատվության սպասարկման ամենախոշոր կենտրոնն է: Գրադարանը պահպանում և տարածում է ազգային և արտասահմանյան բազմադարյան գրական-մշակութային ժառանգությունը, բնակչությանը հասանելի դարձնում գիտական նվաճումները, հասարակական-քաղաքական կյանքում տեղի ունեցող փոփոխությունները, զարգացումները: Բովանդակությամբ ու սպասարկման որակով գրադարանը մարզում լավագույնը դառնալու համար մեծ աշխատանքներ է իրականացնում՝ հասարակության մեջ անփոխարինելի դարձնելով գրադարանի դերն ու նշանակությունը, որ այն ոչ թե զուտ գրքի պահպանման վայր է, այլև գիտելիքի փոխանակման կարևոր միջոց:

Գրադարանը զբաղվում է համայնքային գրադարանների տեղեկատվական, մատենագիտական և մասնագիտական խորհրդատվությունների տրամադրման աշխատանքներով: Այս կառույցի նպատակն է պահպանել և ընթերցողներին տրամադրել ամբողջ հավաքածուն, կատարել մատենագիտական-տեղեկատվական սպասարկում, բավարարել ընթերցողների տեղեկատվական պահանջները, ուսումնասիրել մերժումները, պլանավորել գրականության համալրման հարցերը, ներդնել նոր մոտեցումներ ու մեթոդներ՝ բնակչության տեղեկատվական պահանջները ապահովելու, ընթերցողների ընթերցանությունը կազմակերպելու գործում:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանում ստեղծվել են հարուստ մատենագիտական տեղեկատու քարտարաններ՝ «Մասնագիտությունների քարտարան», «Մարզի գործարար մարդիկ», «Արմավիրի մարզ» և այլն, որոնք օգնում են ընթերցողներին տեղեկություն ստանալ մարզում գտնվող հիմնարկ-ձեռնարկությունների, գործարար մարդկանց մասին:

Յուրաքանչյուր տարի մշակվում են տվյալ և հաջորդ տարիների ռազմավարական ծրագրերը, որոնք հնարավորություն են տալիս առանձնացնել խնդիրները և ընդգծել առաջնահերթությունները:

2001 թ. իրականացվել է «Եվրասիա» հիմնադրամի կողմից հայտարարված «Գրադարանները որպես հանրային հաղորդակցության կենտրոններ» դրամաշնորհային ծրագիրը (գրանտի համարը Y01-80040): 2002 թ. Եվրասիա հիմնադրամի կողմից իրականացվեց «Գրադարանները իբրև հանրային հաղորդակցության կենտրոններ» ծրագիրը՝ կարևորվելով գրադարանի դերը՝ իբրև կրթության, մշակույթի, տեղեկատվության և հասարակական երկխոսության կենտրոն: Ծրագրի շրջանակում Արմավիրի մարզային գրադարանը բնակչությանը մատուցեց ամբողջական տեղեկատվություն, ինչը մեծապես նպաստեց մարզում գրադարանի դերի բարձրացմանը, ամրապնդեց կապը տեղական ինքնակառավարման մարմինների հետ: Գրադարանի սպասարկման ոլորտում ներգրավվեցին բազմաթիվ նոր ընթերցողներ, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչներ: Ծրագիրը նպաստեց բարձրացնելու մարզում քաղաքացիական ակտիվությունը՝ գրադարանի շուրջ համախմբելով ակտիվ քաղաքացիներին, հասարակական կառույցներին, տեղական ինքնակառավարման մարմիններին և ՀԼՄ-ներին: Դրամաշնորհի շնորհիվ գրադարանը համալրվեց նոր համակարգիչներով և տեխնիկական սարքավորումներով, ունեցավ ինտերնետ կապ, գրադարանավարները մասնակցեցին վերապատրաստման դասընթացների, հավաքածուն համալրվեց

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

այլալեզու 220 միավոր արժեքավոր գրականությամբ (ՂԱԶԱՐՅԱՆ 2002, 34):

2006 թ. Արմավիրի մարզային գրադարանը Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի հետ համատեղ կազմակերպեց սեմինար-խորհրդակցություններ մարզի գրադարանավարների համար: Խորհրդակցությանը մասնակցեցին 20 համայնքային գրադարանների վարիչներ: Սեմինարի ընթացքում կարևորվեց այն փաստը, որ համագործակցությունը մասնագիտական զարգացման նոր սկիզբ է հանդիսանում, ինչպես նաև մեծ դեր է խաղում գրադարանների ժամանակակից իմիջի ձևավորման գործում և հեռանկար է բացում սպասարկման նոր մոտեցումների և լուծումների համար: Փորձի փոխանակման միջոցով ամրապնդվում է ընթերցող-գրադարան կապը: Գրադարանը զարգացող օրգանիզմ է և, բնականաբար, ելնելով ժամանակի պահանջներից, փոփոխվում են գրադարանների աշխատանքին ներկայացվող պահանջները, դրանցում մեծ տեղ են գրավում տեղեկատվության նորագույն աղբյուրները: Սեմինարի նպատակն էր նպաստել համայնքային գրադարանների՝ ժամանակին համահունչ ընթանալուն: Գրադարանավարի խնդիրն է միշտ և նպատակային ձևով ցույց տալ իրենց մասնագիտության տարբեր ասպեկտները:

2009 թ. Արմավիրի մարզային գրադարանը Սիվիլիթաս հիմնադրամի հետ իրականացրեց «Գրադարանները, որպես քաղաքացիական հասարակության կենտրոններ» դրամաշնորհային ծրագիրը, ինչի շնորհիվ վերանորոգվեց գրադարանի մի հատվածը, համակարգիչներով, օդորակիչով և այլ տեխնիկական սարքավորումներով, գրադարանային կահույքով, գրականությամբ: Ծրագրի շրջանակում կազմակերպվեց քննարկումների բաց սեղան, որի շուրջ հավաքվեցին ոլորտի մասնագետները:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Գրադարանը ստեղծել է գործնական հարաբերություններ Արմավիրի մարզի համայնքապետերի հետ՝ համայնքային գրադարանների բազմապիսի խնդիրների լուծման նպատակով (ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ 2008, 87):

Գրադարանում գործում են Սպասարկման, Համալրման և մշակման, Մատենագիտության, Մանկական, Գրադարանային գործի ավտոմատացման, էլեկտրոնային սպասարկման և տեղեկատվության, Գրադարանային հավաքածուի կազմակերպման, օգտագործման և պահպանման, Տնտեսական բաժինները և ընթերցասրահը:

Նշենք, որ 1998 թ. գրադարանը «Բաց հասարակության ինստիտուտի» օժանդակության հիմնադրամի հայկական մասնաճյուղի կողմից ստացել է երկու համակարգիչ որոնցով նյութերը մուտքագրվել են Հայաստանի գրադարանների համահավաք էլեկտրոնային գրացուցակ: Գրադարանը հագեցած է ժամանակակից համակարգչային սարքավորումներով և կապի արագընթաց միջոցներով՝ մեծ ծավալի աշխատանքներ իրականացնելու համար:

Արմավիրի մարզային գրադարանը 21-րդ դարի մարտահրավերներին ընդառաջ

20-րդ դարի վերջից սկսած տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը ստիպեց մի շարք կառույցների վերանայել առանցքային գործառույթները, վերափոխվել և հարմարվել ժամանակակից պահանջներին (ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002, 168): Քաղաքային գրադարաններում աշխատանքներն ավելի արագ կատարվեցին, մինչդեռ մարզային գրադարաններում խնդիրներն առավել շատ էին: Ընդառաջ գնալով մարտահրավերներին՝ Արմավիրի մարզային գրադարանը հաղթահարեց խոչընդոտների մի մասը, ինչի արդյունքում այսօր համարվում է տեխնիկապես բավական զինված մշակութային կառույց:

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Արմավիրի մարզային գրադարանը ընդգրկված է հայաստանյան բոլոր գրադարաններն իրար կապող էլեկտրոնային գրացուցակի ձևավորման աշխատանքների մեջ:

Նշենք, որ 2001 թ. Հայաստան ներմուծվեց իսրայելական «Էքսլիբրիս» կազմակերպության «Aleph 500» համակարգը, և Հայաստանի գրադարանների ավտոմատացման այս փուլում 2000-2003 թթ. գրադարանները համատեղեցին ջանքերն՝ իրենց առջև դրված խնդիրների լուծման համար: Մարզային գրադարանները (այդ թվում՝ Արմավիրի մարզային գրադարանը), ևս միացան համահավաք գրացուցակի ձևավորման աշխատանքներին: Միջազգային համագործակցության շնորհիվ Հայաստանում ձևավորվեց գրադարանավարների մի նոր սերունդ, որն ուներ տեխնոլոգիական հմտություններ և կարողություններ: Համագործակցելով Ազգային գրադարանի հետ՝ հայաստանյան գրադարանների միացյալ ավտոմատացման ցանցի գործընթացը ապահովելու համար 2015 թվականից գրքերի մուտքը իրականացվեց Aleph ծրագրով, որը համեմատաբար ավելի ճկուն ու հարմար էր: 2017 թվականից սկսած՝ գրականությունը սկսեցին մուտքագրել KOHA ծրագրով:

Գրադարանների համահավաք գրացուցակը հնարավորություն ընձեռեց ընթերցողներին հասանելի դարձնել հայաստանյան գրադարանների գրքային հավաքածուները: Ավելին, այն հասանելի դարձավ նաև ամբողջ աշխարհին: Ներկայում «Հայաստանի էլեկտրոնային գրադարան» միավորման անդամներ են բոլոր համալսարանական, ճյուղային, հանրային և մարզային գրադարանները, այդ թվում՝ Արմավիրի մարզային գրադարանը:

Բացի գրականության էլեկտրոնային քարտարանի ստեղծման աշխատանքներից, Արմավիրի մարզային գրադարանը մասնակցում է նաև սքանավորած էջերի մշակման աշխատանքներին,

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

որը կատարվում է համապատասխան ծրագրերով՝ համագործակցելով Ազգային գրադարանի հետ:

Արմավիրի մարզային գրադարանն այսօր քայլում է ժամանակի պահանջներին համահունչ, յուրացնում է թվային աշխարհի նորությունները, որպեսզի կարողանա ապահովել ընթերցողի հետ կապը էլեկտրոնային և ավանդական բոլոր հնարավոր տարբերակներով:

Ընդգծենք սոցիալական մեդիայի տարբեր ճյուղերի կարևորությունը գրադարանային ոլորտում ընդհանրապես: Այսօր գրադարանի գործունեությունը անհնար է պատկերացնել առանց սոցիալական ցանցերի ներգրվածության, ինչը գրադարանավարից պահանջում է ունենալ համապատասխան գիտելիքներ՝ գրաֆիկական և տեսախմբագրիչ որոշակի ծրագրերի իմացություն, վեբ ծրագրավորում, մարքեթինգային գործիքների կիրառում և այլն (ՄԵՍՐՈՊՅԱՆ 2018, 59-62; ԱՇՈՒՂՅԱՆ 2023, 39-48):

Սոցիալական մեդիայի գրադարանային գործում կիրառելիության ոլորտը բավականին ընդգրկուն է: Կայքերում զուտ ներկայացված լինելը արդեն ինչ-որ քայլ է, գրադարանային հանրության, ընթերցողների հետ կապը պահելու միջոց: Դիմագրքում իրենց գործունեությունն են լուսաբանում գրեթե բոլոր գրադարանները, որոնց միջոցառումները, շնորհանդեսները, ցուցահանդեսները (անգամ սակավաթիվ հնամաշ ֆոնդի պայմաններում), անդրադարձը հոբելյարներին հուշում է, որ գրադարանավարը տեղեկատվության լուսաբանման ճիշտ ուղի է ընտրել:

Արմավիրի մարզային գրադարանն անմասն չէ այս ամենից: Այն ունի իր կայքէջը, Դիմագիրքը և այլն, որոնք նպաստում են համացանցում ներկայացված լինելուն (ՈՍԿԱՆՅԱՆ 2020):

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

Արմավիրի մարզային գրադարանի զարգացումն անհնար է դիտարկել առանց համապատասխան տեխնիկական վերազինման և սարքավորումների արդիականացման: Ժամանակակից հասարակությունն ավելի ու ավելի է կիրառում տեղեկատվական տեխնոլոգիաները (SS), իսկ ժամանակակից գրադարանը տեղեկատվական, մշակութային, կրթական, հետազոտական հաստատություն է՝ տեղեկատվության, մշակույթի, գիտության, ժամանցի սոցիալական ինստիտուտ խելացի, տեղեկատվական կազմակերպություն: Ցանկացած նման գործունեություն այս կամ այն չափով կապված է գրադարանների նյութատեխնիկական բազայի հետ: Սարքավորումները պարբերաբար թարմացնելու խնդիր ունեն, հակառակ դեպքում գրադարանը չի կարողանա պահել ընթերցողի հետ առցանց կապը:

Ամփոփում

Այսպիսով, Արմավիրի մարզային գրադարանն այսօր 21-րդ դարի պահանջներով առաջնորդվող և այդ պահանջները բավարարող կառույցներից մեկն է, որն արդեն իսկ գրանցել է որոշ ձեռքբերումներ: Միևնույն ժամանակ, տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացմանը զուգահեռ, առաջանում են բազմաթիվ խնդիրներ, որոնք լուծման կարիք ունեն: Արմավիրի մարզի գրադարանների (այդ թվում՝ մարզային գրադարանի) զարգացման համար անհրաժեշտ է պարբերաբար կազմակերպել մասնագիտական քննարկումներ, վերապատրաստման դասընթացներ, որոնք հնարավորություն կտան ուսումնասիրել մեծ գրադարանների փորձը և այն ներդնել մարզի գրադարանների զարգացման հայեցակարգում:

Անհրաժեշտ է մշակել մարզի գրադարանների զարգացման հայեցակարգ, որի կենտրոնում պետք է լինի մարզային գրադարանը: Պետք է կետ առ կետ սահմանել խնդիրներն ու դրանց լուծման

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ուղիները, հատուկ ժամանակահատվածը և հստակ հետևել ժամանակացույցին: Հետևողական աշխատանքը կհանգեցնի արդյունքի:

Անհրաժեշտ են ֆինանսական ներդրումներ: Արմավիրի մարզային գրադարանն արդեն ունի որոշակի փորձ՝ մասնակցելու որոշակի ծրագրեր և ստանալու ֆինանսավորում: Միանշանակ այստեղ պետք է ավելանա պետական աջակցությունը, առանց որի հնարավոր չէ խոսել զարգացման ծրագրերի մասին:

Գրադարանն այսօր բավականաչափ հագեցած է տեխնիկապես, սակայն տեխնիկական վերազինումը շարունակում է մնալ առաջնային ուղղությունների մեկն է, որը հնարավորություն կտա նավարկել թվային աշխարհում:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՅՅԵԼՈՒԹՅՈՒՆ 2008 – Այցելություն Արմավիրի մարզ (2008), *Հայկական գրադարան. Տարեգիրք* (Երևան), 10, 87 [Ghazaryan, A. (2008), Aytsetutyun Armaviri marz, *Armenian Library: Yearbook*, 10, 87];

ԱՇՈՒՂՅԱՆ 2023 – Աշուղյան, Ա. (2023), Սոցիալական մեդիան և գրադարանները, *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի* (Երևան), 2(2), 39-48 [Ashughyan, A. (2023), Social media and Libraries, *Herald of the Armenian Library Association* (Yerevan), 2(2), 39-48];

ԲՈՒԴՈՒՄՅԱՆ 2019 – Բուդումյան, Վ. (2019), Մարզային գրադարանների բյուջեն վերջին տարում կրկնապատկվել է: Հարցազրույց [Budumyan, V. (2019), Marzayin Gradaranneri Bujen verjin tarum krknapatkvel e] <https://infocom.am/hy/article/8380> (07.06.2024);

ԳԱՍՊԱՐՅԱՆ 2023 – Գասպարյան, Լ. (2023), Սյունիքի մարզում գործող գրադարանների վիճակագրական վերլուծություն (2010-2021 թթ.), *Լրափու Հայկական գրադարանային ասոցիացիայի* (Երևան), 1(1), 35-55 [Gasparyan, L. (2023), Libraries operating in Syunik region: statistical analysis (2010-2021), *Herald of the Armenian Library Association* (Yerevan), 1(1), 35-55];

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ԶԱՐԳԱՐՅԱՆ 2002 – Զարգարյան, Տ. (2002), *Թվային գրադարաններ*, Երևան, Հեղ. հրատ., 168 [Zargaryan, T. (2002), *Tvayin Gradaranner*, Yerevan, Hegh. Hrat., 168];

ՀՀ ՕՐԵՆՔԸ 1995 – ՀՀ օրենքը ՀՀ վարչատարածքային բաժանման մասին [HH Orenqy HH Varchataratsqayin bazhanman masin] (07.11.1995) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=59732> (07.06.2024)

ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՈՒՄ 2002 – ՀՀ Կառավարության որոշումը պետական ոչ առևտրային կազմակերպություններ ստեղծելու մասին [HH Karavarutyanyan voroshumy petakan voch arevtrayin kazmakerputyun-ner steghtselu masin] (06.06.2002) <https://www.arlis.am/documentview.aspx?docid=9614> (07.06.2024)

ՀՀ ՕՐԵՆՔԸ 2012 – ՀՀ օրենքը գրադարանների և գրադարանային գործի մասին [HH Orenqy gradaranneri ev gradaranayin gwrtsi masin] (21.03.2012) <https://www.arlis.am/DocumentView.aspx?docID=75198> (07.06.2024)

ՀՈՎՍԵՓՅԱՆ 2016, 34-38 – Հովսեփյան, Մ. (2016), Հայկական գրադարանային ասոցիացիայի դերը ՀՀ գրադարանների նշանակության և կարևորության բարձրացման գործում, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(2), 34-38 [Hovsepyan, M (2016), The role of the Armenian Library Association in bridging the libraries in the Republic of Armenia, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(2), 34-38];

ՂԱԶԱՐՅԱՆ 2002 – Ղազարյան, Ա. (2002), Արմավիրի մարզի հանրապետական գրադարանը, *Հայկական գրադարան. Տարեգիրք* (Երևան), 6, 34-35 [Ghazaryan, A. (2002), Armaviri marzi hanrapetakan gradarany, *Armenian Library: Yearbook*, 6, 34-35];

ՄԵՍՐՈՊՅԱՆ 2018 – Մեսրոպյան, Ս. (2018), Կայքն ու սոցիալական մեդիաները որպես Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատանքների հանրայնացման միջոց, *Բանբեր Հայաստանի գրադարանների* (Երևան), 1(4), 59-73 [Mesropanyan, S. (2018), The Website and Social media as a means of publicizing the work of the Khnko Aper National Children's Library, *Bulletin of Armenian Libraries* (Yerevan), 1(4), 59-73];

ՈՍԿԱՆՅԱՆ 2020 – Ոսկանյան, Շ. (2020), Սոցիալական մեդիան՝ գրադարանի գործընկեր [Voskanyan, Sh. (2020), Sotsialakan median gradarani gwrtsynker] <https://bit.ly/3nTCcOy> (07.06.2024)

**THE PROBLEMS AND DEVELOPMENT TRENDS OF ARMAVIR
REGIONAL LIBRARY
FACING THE CHALLENGES OF THE 21ST CENTURY**

MARINE ANTONYAN
Armavir Regional Library

Keywords: Armavir Regional Library, academic functions, library statistics, information technologies, digital model of the library.

The Armavir Regional Library is one of the structures today guided by the requirements of the 21st century and meeting these requirements, which has already registered some achievements. At the same time, along with the development of information technologies, many problems arise that need to be solved. For the development of the libraries of Armavir region (including the regional library), it is necessary to regularly organize professional discussions, training courses, which will provide an opportunity to study the experience of large libraries and to introduce it into the development concept of libraries of the region.

It is necessary to develop a concept for the development of regional libraries, the center of which should be the regional library.

Financial investments are necessary. The Armavir Regional Library already has some experience in participating in certain programs and receiving funding: definitely, state support should be increased here, without which it is impossible to talk about development programs.

Technical re-equipment of the library, which will enable it to navigate in the digital world, is very important.

**ՍՈՒՐԲ ՀԱԿՈՐ ՄԱՏՈՒՌ-ՍՐԲԱՏԵՂԻՆ
ԵՎ ՆՐԱՆՈՒՄ ԱՌԿԱ ՄԱՅՐ ԺԱՄԱԳՐՔԻ
ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋ ***

ՀՏԴ: 281.6(091)+655.1(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-44

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**Մադենադարան. Մեսրոպ Մաշտոցի անվան
հին ձեռագրերի ինստիտուտ**

ORCID: [0009-0006-7502-376X](https://orcid.org/0009-0006-7502-376X)

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գեղաշեն գյուղում է գտնվում Սուրբ Հակոբ մատուռ-սրբատեղին և նրանում առկա տպագիր Մայր Ժամագիրքը: Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ գավառի Խացտուր (Հացտուր) գյուղից տեղահանված Տեր-Խլդաթյանների ընտանիքը Վերին Գեղաշենում հաստատվել է 1828 թ., գաղթի տարիներին: Այն անվանվել է Սուրբ Հակոբ՝ ի պատիվ սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի: Արևմտյան Հայաստանի տեղահանված Տեր-Խլդաթյանների ընտանիքը Վերին Գեղաշենում հաստատվել է 1828 թ.: Ի թիվս մյուս հնությունների՝ Ս. Հակոբ սրբատեղիում է գտնվում նաև 1862 թ. էջմիածնի Մայր տաճարի՝ «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» անունը կրող տպարանում տպագրված «Ժամագիրք Արենի»-ն: «Ժամակարգության Հայաստանեաց Սուրբ Եկեղեցույ» գիրքը (այսուհետ՝ Ժամագիրքը) բովանդակային իմաստով բաղկացած է երեք գրքից, երրորդ գիրքն էլ իր հերթին՝ երկու հատորից, համապատասխանաբար երկու տիպոգրաթերթից: Սույն տպագրությունն առանձնանում է տպագրական նրբություններով, այդ ժամանակաշրջանում նույն տպարանում հրատարակված գրքերին բնորոշ

* Հոդվածը ներկայացվել է 01.04.2024, գրախոսվել է 24.05.2024, ընդունվել է տպագրության 03.06.2024:

The article was submitted on 01.04.2024, reviewed on 24.05.2024 accepted for publication on 03.06.2024.

առանձնահատկություններով: Տպագիրը պատկանում է անհատի և չի պահպանվում որևէ հաստատությունում: Սույն տպագրության ևս մեկ օրինակի ի հայտ գալով՝ հարստանում է հայ տպագիր ժառանգության պահոցը:

In the village of Verin Getashen Gegharkunik region of the RA, there is the temple of Saint Hakob and the Horologion. In 1828 Stepannos Ter-Khlghatyan, who is the ancestor of the Petrosyan family, resettled Western Armenia, Alashkert region, founded the village of Ghastur (Astur), as a place of pilgrimage. The temple of St. Hakob is named after the Patriarch St. Hakob of Mtsbnat (Western Armenia). The Ter-Khlghatyan family, resettled from Western Armenia, settled in Verin Getashen in 1828. Among other valuables in the temple of St. Hakob is the main book of Horologia, which in the 1862 was published by the printing house of the Etchmiadzin Cathedral named after "St. Grigor the Illuminator". The Chronology entitled "Horologia of the Holy Church of Armenia" consists of three books, the third book, in turn, consists of three volumes, with corresponding two title pages. The Horologia is unique in its printing style and a typical feature of for books published in 1862. Despite the fact that publication belongs to an individual and is not stored in any institution, nevertheless, with the presence of the Horologia the treasury of printed books of Armenian has been replenished and enriched with one more copy.

Բանալի բառեր՝ Արևմտյան Հայաստան, Խաստուր գյուղ, Գեղարքունիքի մարզ, Վերին Գետաշեն գյուղ, տեղահանություն, Ս. Հակոբ սրբատեղի, Մայր Ժամագիրք, Պետրոսյան ընտանիք:

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Ս. (2024), Սուրբ Հակոբ մատուռ-ուխտատեղին և նրանում առկա Մայր Ժամագրքի ուսումնասիրության շուրջ, *Լրադրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 44-59.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-44](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-44)

How to cite (APA style): Grigoryan, S. (2024), As part of the study of the temple of St. Hakob and the main book of Horologia, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 55-59.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-44](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-44)

Ներածություն

Հայ հոգևոր արժեքների խտացման ու քրիստոնեական մտքի արգասիքն են հայոց հավատքի կենտրոնները՝ եկեղեցիները, վանքերը, աղոթատեղիները, մատուռները և այլն: Դարերի հոլովույթում բազմաթիվ զրկանքներ ու փորձություններ կրելով դրանք այսօր էլ շարունակում է իրենց կարևորագույն առաքելությունը՝ հավատացյալներին փոխանցել հոգեղեն արժեքների գանձարանը: Ցայսօր, այդ հոգևոր կենտրոնների պատմության, ճարտարապետության, մշակութային առանձնահատկությունների վերաբերյալ շարունակաբար կատարվում են ուսումնասիրություններ և մատուցվում նորարար հնչեցմամբ:

Մեր խնդրո առարկա ուսումնասիրությունը նմանատիպ մատուռ-սրբատեղիի և նրանում պահվող տպագիր ժամագիրք Ատենիի քննությունն է:

Վերին Գետաշեն գյուղը և Սուրբ Հակոբ աղոթափայտի սրբեղծման պատմությունը

ՀՀ Գեղարքունիքի մարզի Վերին Գետաշեն (ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1986, 845) գյուղում է գտնվում Սուրբ Հակոբ մատուռ-սրբատեղին: Վերին Գետաշեն գյուղը հիմնադրվել է 1828-1829 թթ.: Բնակեցված է հիմնականում Արևմտյան Հայաստանի Ալաշկերտ (ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1986, 63-64) գավառի Խաստուր (Հացտուր) գյուղից տեղահանված բնակչությամբ¹ (ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ 1988, 682; ԼԱԼԱՅԵԱՆ 1908, 146; ՎՕՊԵՒ 1852, 595-598):

¹ Ըստ ազգագրագետ Ե. Լալայանի՝ Խաստուր գյուղից Վերին Գետաշեն գյուղ է բնակեցվել ընդամենը 148 ընտանիք՝ 651 ար., 596՝ իգ., միասին՝ 1247 մարդ: Այս թվերը զգալիորեն տարբերվում են ազգագրագետ, պատմաբան և պետական գործիչ Ի. Շոպենի վիճակագրական տվյալներից՝ 16 ընտանիք՝ 50 ար., 44՝ իգ., ընդհանուր՝ 94 մարդ:

Գյուղը գտնվում է Սևանի ավազան թափվող հայտնի Արգիճի (Իշխանագետ) գետի ձախ ափին՝ բարձրադիր սարավանդի վրա (ՀԱԿՈԲՅԱՆ, ՄԵԼԻՔ-ԲԱԽՇՅԱՆ, ԲԱՐՍԵՂՅԱՆ, 1988, 405; ԼԱԼԱՅԵԱՆ, 1908, 146): Վերին Գետաշենից 15 կմ հարավ-արևմուտք գտնվում են Սպիտակ բանալի (մ.թ.ա. 1-ին հզմ), Տաթև (մ.թ.ա. 2-րդ հզմ) ամրոցները, մ.թ.ա. 1-ին հազարամյակով թվագրվող քարայր-կացարանները: Ներկայում գյուղն առավել հայտնի է 1878 թ. կառուցված Սուրբ Աստվածածին² (ԲԱՐԻՆՈՒԴԱՐՅԱՆ 1973, 200-202) եկեղեցիով և Սուրբ Հակոբ մատուռ-սրբատեղիով³:

Նախկինում եկեղեցու տեսք ունեցող Սուրբ Հակոբ սրբատեղին կառուցվել է 1828 թ., Պետրոսյան ընտանիքի նախապապի՝ Ստեփաննոս Տեր-Խլղաթյանի կողմից, տան հարակից մասում (նախկինում տանը անմիջապես կաած): Այն անվանվել է Սուրբ Հակոբ՝ ի պատիվ սուրբ Հակոբ Մծբնա Հայրապետի⁴ (ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 2002, 521): Արևմտյան Հայաստանից տեղահանված Տեր-Խլղաթյանների ընտանիքը Վերին Գետաշենում հաստատվել է 1828 թ.: Ըստ Սրբուհի Պետրոսյանի⁵՝ նախապապը՝ Ստեփաննոս

² Գյուղի կենտրոնական գերեզմանատան և Սուրբ Աստվածածին եկեղեցու բակի խաչքարերը և տապանագրերը որոշ չափով ուսումնասիրվել են Ս. Բարխուդարյանի կողմից:

³ Գյուղն ունի նաև 9-14 դդ. խաչքարեր, 15-16 դդ. «Ձորի մատուռ» կոչվող աղոթատունը:

⁴ Ս. Հակոբ Մծբնա Հայրապետն Մծբնի ասորի եպիսկոպոս, ճգնավոր էր, ով դասվել է համաքրիստոնեական սրբերի շարքին: Բազում հրաշքների գործելու կարողության շնորհիվ նրան տրվել է «Աքանջելագործ» անունը:

⁵ Իմ երախտագիտությունն եմ հայտնում Վիկտորյա (Նուշիկ) Մնացականյանին՝ աղոթատան մասին տեղեկացնելու համար, Վերին Գետաշենի թիվ 1 միջնակարգ դպրոցի կենսաբանության ուսուցչուհի Սրբուհի Պետրոսյանին՝ աղոթատեղիի և ընտանիքի պատմության վերաբերյալ տեղեկությունները ինձ տրամադրելու համար:

Տեր-Խլղաթյանը, Խաստուրի Սուրբ Հակոբ եկեղեցում եղել է հոգևորական՝ քահանա: Տեղահանության ժամանակ նա Արևմտյան Հայաստանից Վերին Գետաշեն գյուղ է բերել բացառիկ հնություններ՝ չորս խաչքար (ամենահինը՝ 13-րդ դարով թվագրվող), ձեռաց խաչեր (ժամանակին եղել են նկարազարդ, սակայն ներկայում պատկերները քայքայված են), հինգ թաս (արծաթե, պղնձե, պլատինե), ձեռագիր Ավետարան (ներկայում՝ կորած), ավելի ուշ ձեռք բերած տպագիր Մայր Ժամագիրքը, որին անդրադարձել ենք աշխատանքի երկրորդ մասում:

Սուրբ Հակոբ աղոթատեղին և նրանում պահվող Մայր Ժամագիրքը նախապապի՝ Ստեփաննոս Տեր-Խլղաթյանի կողմից ժառանգաբար փոխանցվել է ընտանիքի մյուս անդամներին: Ստեփաննոս Տեր-Խլղաթյանը այն փոխանցել է միակ որդուն՝ Խլղաթին, որն իր հերթին այն կտակել է որդուն՝ Գեղամին: Թեև Գեղամն ունեցել է հինգ որդի (Արամ, Էդուարդ, վաղ հասակում մահացել են, Անդրանիկ, Սամսոն, Անուշավան), սակայն մեզանում ընդունված ժառանգության կարգի համաձայն՝ այն փոխանցել է փոքր որդուն՝ Անուշավան Պետրոսյանին: Յայսօր մատուռ-սրբատեղին և տպագիր Մայր Ժամագիրքը գտնվում է Հենրիկ (Անուշավան Պետրոսյանի որդին) Պետրոսյանի զավակներ Մասիս, Սրբուհի Պետրոսյանների հոգաձության ներքո:

Այժմ աղոթատան տեսք ունեցող Սուրբ Հակոբ սրբատեղին մինչ 1930-ական թվականները եղել է կանգուն քարակերտ եկեղեցի: Հայաստանում խորհրդային կարգերի հաստատումից հետո եկեղեցիների նկատմամբ դրսևորված սոսկալի վերաբերմունքից անմասն չի մնացել նաև սույն եկեղեցին: Եկեղեցու փոքրադիր հատվածի պահպանությունը կապված է զարմանահրաշ մի պատմություն հետ: Համաձայն ականատեսների վկայության՝ եկեղեցին քանդելու հրա-

ման ստացած վարպետներն այն քանդելու պահին, հասնելով Արևմտյան Հայաստանից բերված սուրբ մասունքների պահպանման հատվածին, թուլացել են և ընկել շեմին: Ըստ եղած պնդումների՝ եկեղեցու ոգին պատժել է կործարարներին, ինչից վախեցած՝ այլևս չեն համարձակվել ավերել մնացյալ մասը: Մատուռ-սրբատեղիի պահպանված հատվածը բաժանված է երկու մասի: Բուն աղոթատեղին, ժամանակի «գերիշխող ոճով» պայմանավորված (ուղղանկյուն հատակագծային հորինվածքով, հազարաշեն փայտե տանիքով)⁶, կենտրոնում երկու փայտե սյուների վրա ամրացված կառույց է, որի գլխավոր պատի ստորին հատվածում ագուցված են հնամենի խաչքարերը: Դռան ուղղահայաց մասում՝ պատին ամրացված խաչքարերից վեր, ունի կամարաձև փորվածք, որը ամրակցված է կարմիր ներկանյութով ներկված և երեք մասի բաժանված քառանկյուն փայտյա պատյանով: Միջին և ստորին դարակները, աջ և ձախ կողմերում, ավարտվում են փեղկերով: Այն նախատեսված է հնամենի ձեռաց խաչերը, արծաթյա թասերը և այլ թանկարժեք մասունքները անվնաս պահելու համար: Մատուռ-սրբատեղիի վերջին նորոգություն-թարմացումը տեղի է ունեցել 2007 թ., ընտանիքի անդամների կողմից, մասնավորապես՝ մոր՝ Կարինեի և որդու՝ Մասիս Պետրոսյանի անմիջական հովանավորությամբ: Նորոգման հետևանքով աղոթատեղին լուրջ փոփոխություն չի կրել, չնչին տարբերություններ կան նախորդի համեմատ: Նորացումից բացի, նախկինում՝ անմիջապես բնակելի տանը միակցված հատվածից այն տարանջատվել է: Կենտրոնական նշանակություն ունի մատուռի հազարաշեն փայտե տանիքով կառուցված նախասրահը, որը անկյուններում ամրակալված է փայտե սյուների վրա: Նախասրահը բոլոր ժամանակներում

⁶ Հազարաշեն տանիքը, հետագա վնասումից փրկելու համար, 2007 թ. ամրակայվել է մետաղյա ծածկով:

եղել է սրբատեղիի անբաժան մասը: Այն ուխտավորների համար սպասասրահի դեր է կատարում, քանի որ հավատացյալների բազմամարդ հոսքը նշված ուխտատեղի երբեմն շատ է լինում, հատկապես եկեղեցական տոն օրերին: Աղոթատեղին բացառիկ դեր ունի ոչ միայն ընտանիքի անդամների, այլև տեղացիների շրջանում: Այն առավել հայտնի է իր խնդրակատար և զորեղ հատկությամբ: Իրադարձությունների և պատմությունների մի ողջ շղթա կա կապված սրբատեղիի հրաշագործ բնույթի հետ: Համազյուղացիների և այցելուների համոզմամբ՝ հավատացյալների աղոթք-խնդրանքները անպատասխան չեն մնում: Հաճախ է պատահում՝ երկար ժամանակ զավակ չունեցող զույգերը, սրբատեղիի նկատմամբ ամենախորը հավատով լցված, հաճախում են աղոթատեղի, զավակ պարգևելու խնդրանքով դիմում Ս. Հակոբին: Արու զավակ ունենալու դեպքում անվանակոչում Հակոբ՝ սրբատեղիի անվամբ պայմանավորված: Բազում դեպքեր կան (այսօր էլ շարունակվում են), երբ հավատացյալները որևէ տեղ ճանապարհվելիս, ի նշան հաջողության և օրհնության, ուխտի են գալիս Ս. Հակոբ: Հավատացյալների կողմից լայն տարածում ունի սրբատեղիի՝ վախերից, հիվանդություններից բուժելու, աղետներից ու դժբախտություններից ազատելու կարողությունը: Քիչ չեն դեպքերը, երբ այս կամ այն պատահարներից փրկվելիս, հավատացյալները գալիս են սրբատեղի և մատաղ անում աղոթատան հարակից մասում՝ ի նշան երախտագիտության: Հատկանշական է, որ ցայսօր էլ տարեցների օրհնանքներում և մաղթանքներում, հղվող աղոթքներում, մշտապես հիշատակվում է սուրբ Հակոբը՝ որպես պահպանիչ և ապաքինող սուրբ. «Պաբե սուրբ Հակոբը քոմակ (օգնական) լինի քեզ», «Ձորավոր սուրբ Հակոբը պաշտպան ու պահպան լինի իմ թոռներին» կամ «Պաբե Սուրբ Հակոբը պահպան լինի Ձեզ», «Է՛ն պաբե սուրբ Հակոբն եմ կանչել՝ թոռներիս բախտավո-

րության համար» «Պաբե սուրբ Հակոբի զորությանը մեռնեմ» և այլ: Տեղացիները՝ սրբատեղիի նկատմամբ հավատով և ակնածանքով լցված, խնդրանքների կատարման նպատակով հաճախ ընծա են մատուցում Ս. Հակոբին: Այսօր աղոթատան ներսույթը ողողված է Աստվածամոր և Հիսուս Քրիստոսին վերաբերվող զանազան (հին և նոր) նկարներով, առարկաներով, որոնք բերվում են հավատացյալների կողմից՝ որպես երախտագիտություն, փակցվում մատուռի պատերին կամ տեղադրվում աղոթատան նախատեսված մասերում:

Այսպիսով, բարեհամբավ Սուրբ Հակոբ աղոթատեղին, շնորհիվ իր պահպանիչ, բուժիչ հատկության, օգնելու անսպառ կարողության, ձեռք է բերել առանձնակի նշանակություն և դարձել պաշտամունքի սիրելի վայր հավատացյալների և տեղացիների համար:

Մայր Ժամագրքի տպագրության և ուսումնասիրության շուրջ

Մեր ուսումնասիրության երկրորդ կարևոր բաղադրիչը Սուրբ Հակոբ աղոթատեղիում պահվող տպագիր «Ժամագիրք Առնին»-ն (1862 թ.) է⁷: 15-րդ դարից մեկնարկած համաշխարհային տպագրության զարգացման ընթացքից անմասն չմնաց հայ գրատպությունն ու հայ գիրքը: Պայմանավորված այդ ժամանակահատվածում Հայաստանի պատմական, աշխարհաքաղաքական ծանր դրությամբ՝ հայ տպագրությունը սկզբնավորվեց և զարգացավ օտար միջավայրում՝ Վենետիկում, Կ. Պոլսում, Հռոմում, Փարիզում, Նոր Զուլայում, Ամստերդամում, Ս. Ղազարում, Թիֆլիսում և այլուր (ՈՍԿԱՆՅԱՆ, ԿՈՐԿՈՏՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ 1988; ԴԵՎՐԻԿՅԱՆ 2014; ՃԵՄՃԵՄԵԱՆ 1989; ԹԷՈՐԴԻԿ 1912; ԼԷՕ 1902; ԼԵՎՈՆՅԱՆ 1946): Պատմական Հայաստանում հայկական տպագրությունը սկզբնավորվեց առաջին հայերեն գրքի տպագրությունից 260 տարի անց, երբ Սիմեոն

⁷ Սրբատեղին ունեցել է ձեռագիր Ավետարան, որը կորսվել է:

Երևանցի Կաթողիկոսը 1771-1772 թթ. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում հիմնադրեց «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» տպարանը: Սկզբնական փուլում հայալեզու գրքերը գլխավորապես կրոնական բովանդակությամբ ունեին: Տպագրվում էին ավետարաններ, սաղմոսարաններ, ժամագրքեր և այլն: Նմանօրինակ ժամագրքերից մեկին էլ անդրադառնում ենք սույն հոդվածում:

«Ժամագիրք Ատենի»-ն⁸ (ՃԻԶՄԷՃԵԱՆ 1957, 423; ՏԷՐ-ԽԱԶԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968, 194; ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԲԱՑԱՏՐԱԿԱՆ ԲԱՌԱՐԱՆ 1972, 261) տպագրվել է Ս. Էջմիածնի Մայր տաճարի տպարանում, 1862 թ.: Հայ եկեղեցին կիրառել է ժամագրքի երկու դրսևորում՝ ժամագիրք և Մայր ժամագիրք, որը կոչվում է նաև Ատենի⁹ (ՕՐՄԱՆԵԱՆ 1979, 125):

Սուրբ Հակոբ աղոթատանը պահվող ժամագրքի օրինակը դասվում է Մայր ժամագրքի շարքին: Մեծությամբ 35x22,5 սմ գիրքն ունի գրության երկայուն շարվածք՝ 26x16,7 սմ, որը գլխավորապես շարադրված է բոլորգրով: Այն կաշեկազմ է (մուգ շագանակագույն կաշի), միջուկը՝ ստվարաթուղթ, աստառը՝ թուղթ: Կառուցվածքային

⁸ Ժամագիրքը արարողությունների ժամանակ կատարվող և երգվող աղոթքների, մաղթանքների, երգեր ու սաղմոսներ պարունակող ժողովածու է, որը ներառում է նաև քարոզներ, Հին և Նոր Կտակարանների ընթերցվածներ: Ըստ Մաղաքիա արք. Օրմանյանի՝ ժամագիրք անունը բավականին հին ծագում ունի և կազմված է՝ «Ժամ», «Ժամասացություն» բառերից: Այն Հայ Առաքելական Սուրբ եկեղեցու ամենավաղ և ամենաշատ գործածվող ծիսամատյաններից է, որն իր մեջ ամփոփում է մեծ մասամբ ժամերգությունների կատարման կարգը: Հնում ծառայել է նաև որպես դասագիրք:

⁹ Ատենի ժամագիրքը մեծադիր և ծավալուն բնագիր է, որը ներառում է Սաղմոսարան, բուն ժամագիրք ու Տոնացույց: Ձեռագ ժամագիրքը փոքր, ութածալ, միայն ժամագիրք պարունակող և երկու դասերում դրվող գիրք է: Դրանք միմյանցից տարբերվում են և՛ ծավալով, և՛ գործածման եղանակով:

առումով բաղկացած է երեք տարբեր մասերից՝ տարբեր էջադրությամբ (92, 143, 178): Ունի վնասված հատվածներ, որի արդյունքում Ա. Փեղկի կազմը, կազմաստառը, տիտղոսաթերթը, ինչպես նաև՝ 1-25 էջերը բացակայում են: Պակասավոր էջեր կան սկզբից, մեջտեղից և վերջից: Որոշ էջերում նշմարվում են պատռված, իսկ որոշ թերթերի դեպքում՝ պոկված հատվածներ: Լուսանցակողերը սևացած են, եզրերին՝ մաշվածությունից առաջացած մանր պատռվածքներ: Թերթերին առկա են՝ կեղտաբծեր, մաշվածության, խոնավության և յուղի հետքեր: Ստորին եզրի աջ անկյունում տեսանելի են մատնահետքեր, պատռվածքի հետքեր: Պահպանվածության տեսանկյունից սույն օրինակի ընդհանուր վիճակը կարելի է գնահատել բավարար:

Հայոց ժամագրքերի երգերի մեծ մասը Ներսես Շնորհալու հորինածներն ու գրածներն են (ՄԱԼԽԱՍԵԱՆՅ 1944, 136): Առաջին անգամ հայ եկեղեցի է ներմուծվել և որոշ առումներով հայացվել Սահակ Պարթևի, Մեսրոպ Մաշտոցի և իրենց ավագ աշակերտների կողմից: Դրանով էլ պայմանավորված՝ ժամագրքի տիտղոսաթերթին հիշատակվում են սուրբ Սահակի, սուրբ Մեսրոպի, նրանց աշակերտներ՝ սուրբ Գյուտ Արահեզացու, սուրբ Հովհան Մանդակունի կաթողիկոսների և Ներսես Շնորհալի հայրապետի անունները:

«Ժամագիրք Ատենի»-ն բաղկացած է երեք գրքից, երրորդ գիրքն իր հերթին՝ երկու հատորից: Բացի Սաղմոսարանից, մնացյալ գրքերն ունեն առանձին տիտղոսաթերթեր: Առկա է նաև մեկ ընդհանուր տիտղոսաթերթ, ուր հիշատակվում են ներառված բոլոր գրքերի անունները¹⁰:

¹⁰ Տիտղոսաթերթերի վերականգնված հատվածներն ըստ գրքի թվային տարբերակի՝ http://greenstone.flib.sci.am/gsd/collect/haygirq/book/jamakarg_ejm_1862.pdf (03.06.2024):

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տխողոսաթերթ Ա. [ԺԱՄԱԿԱՐԳՈՒԹԻՒՆ / ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑ ՍՈՒՐԲ ԵԿԵՂԵՑԻՈՅ / ՅՈՐՈՒՄ ՊԱՐՈՒՆԱԿԻՆ ԵՐԵՔ ԳԻՐՔ / ՍԱՂՄՈՍ ԴԱԻԹԻ / ՈՐ Է ԱՂԾԹՔ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ԱՌԱՍՏՈՒԱԾ / ԵՒ ՄԱՐԳԱՐԷՈՒԹԻՒՆ ՎԱՍՆ ՄԱՐԴԵՂՈՒԹԵԱՆՆ ՔՐԻՍՏՈՍԻ / ԱՏԵՆԻ ԺԱՄԱԳԻՐՔ / ՈՐ Է ՄԱՏԵԱՆ ՀԱՍԱՐԱԿԱՅ ԱՂԾԹԻՅ / ԵՒ ՊԱՇՏԱՄԱՆ / ՏՕՆԱՑՈՅՑ / ՈՐ Է ՅՈՒՅԱԿ ՏՕՆԻՅ ԵՒ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՈՅ / ԸՍՏ ՆՈՐՈԳ ԲԱՐԵԿԱՐԳՈՒԹԵԱՆ ՍՐԲՈՅ ԱԹՈՒՈՅՆ ԷՋՄԻԱԾԻՆ / Ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԱ /]:

Տխողոսաթերթ Բ. [ԺԱՄԱԳԻՐՔ ԱՏԵՆԻ / ԱՐԱՐԵԱԼ / ՍՈՒՐԲ ԵՒ ԱՍՏՈՒԱԾԱՇՆՈՐՀ ԹԱՐԳՄԱՆՉԱՅՆ / ՍԱՀԱԿԱՅ ԵՒ ՄԵՍՐՈՎՊԱՅ / ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՅ / ԳԻԻՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ / ԵՒ ՍՐԲՈՅՆ / ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ / Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԱ /]:

Տխողոսաթերթ Գ. [ՏՕՆԱՑՈՅՑ / ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ / ՅՈՐՈՒՄ ՆՇԱՆԱԿԻՆ / ՏՕՆՔ ԵՒ ՊԱՀՔ ԸՆԹԵՐՑՈՒԱԾՔ ԵՒ ԱՐԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ ՀԱՅԱՍՏԱՆԵԱՅՑՍ Ս. ԵԿԵՂԵՑԻՈՅ / ՍԿԶԲՆԱԽՈՐԵԱԼ / Ի ՍՐԲՈՅ ԼՈՒՍԱԽՈՐԶԷՆ ՄԵՐՄԷ / Ի ՍԿԶԲԱՆ ԼՈՒՍԱԽՈՐՈՒԹԵԱՆ ԱԶԳԻՍ ՀԱՅՈՅ / ԵՒ ԿԱՐԳԱԽՈՐԵԱԼ / ՍՐԲՈՅՆ ՍԱՀԱԿԱՅ ՊԱՐԹԵԻԻ / ԵՒ ԵՐԱՆԵԼԻ ՀԱՅՐԱՊԵՏԱՅՆ ՄԵՐՈՅ / ԳԻԻՏՈՅ ԵՒ ՅՈՎՀԱՆՆՈՒ ՄԱՆԴԱԿՈՒՆԻՈՅ / ԵՒ ՀՈՒՍԿ ԱՊԱ / ՍՐԲՈՅՆ ՆԵՐՍԻՍԻ ՇՆՈՐՀԱԼԻՈՅ / ԻՍԿ Ի ՄԵՐ ԺԱՄԱՆԱԿՍ / ՏԵԱՌՆ ՍԻՄԷՈՆԻ ՍՐԲԱԶԱՆ ԿԱԹՈՒՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՅ ԲԱԺԱ/ՆԵԱՅ ԵՐԿՈՒՍ ՀԱՏՈՐՍ / Ի ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԲ /]:

Տխողոսաթերթ Դ. [ՏՕՆԱՑՈՅՑ / ՀԱՏՈՐ ԵՐԿՐՈՐԴ / ՅՈՐՈՒՄ ԱՆՓՈՓՈՒՍ ԵՒ ԱՆՇԱՐԺ ԵՂԱՆԱԿԱԻ ԿԱՐԳԱԽՈՐԻՆ / ՇԱՐԺԱԿԱՆ ԵՎ ՏԵՂԱՓՈՒՍ ՏՕՆՔ / ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՅ ԽՈՐԱՆՕՔ / Ի ՎԵՐԱՅ ԵՐԵՍՈՒՆ ԵՒ ՎԵՅ / ՀԱՅԿԱԿԱՆ ԳՐՈՅ / Ի

ՍՈՒՐԲ ԷԶՄԻԱԾԻՆ / 1862=ՌՅԺԱ /] (ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք, 2021, 109-110):

Սույն տպագրությունն առանձնանում է Ս. Էջմիածնի տպարանին բնորոշ զարդամոտիվներով և ոճային առանձնահատկություններով: Տիտղոսաթերթերին առկա են զարդանկարներ: Գրադաշտն իր հերթին ունի էջախորագրեր, զարդանախշեր, գլխագրեր, բուսական գլխազարդեր, բուսական վերջնազարդեր:

Սուրբ Հակոբ սրբատեղիում պահվող օրինակը եզակի չէ (ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999, 86, հմր. 1079): Մեր հետազոտության արդյունքում պարզվեց, որ բացի հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկում նշված օրինակներից, սույն տպագրության երկու օրինակ առկա է Գեղարքունիքի մարզի, Մարտունու շրջանի մեկ այլ գյուղում՝ Վարդաձորում¹¹: Հիշյալ վայրերը արտացոլված չեն հայ գրքի մատենագիտությունների մեջ՝ որպես սույն տպագրության պահպանության վայր:

Ամփոփում

Այսպիսով, սույն ուսումնասիրությամբ պատմական կտրվածքով ներկայացվեց Սուրբ Հակոբ մատուռ-սրբատեղին և այնտեղ պահպանվող Մայր Ժամագիրքը: Մատուռը սրբատեղի է հարակից գյուղերի և հայ ուխտավորների համար ու կարևոր դեր ունի մեր պատմության և մշակույթի պահպանման գործում: Սուրբ Հակոբ մատուռում պահվող Մայր Ժամագիրքը առանձնահատուկ է տպագրության պատմության տեսանկյունից: Սույն ուսումնասիրությամբ հնարավոր եղավ պարզել այս կարևոր տպագրության օրինակների պահ-

¹¹ Վարդաձոր գյուղում գտնված օրինակները նույնպես ուսումնասիրվել են և ներառվելու են հրատարակության պատրաստվող «Վարդաձոր գյուղի ձեռագիր և տպագիր ժառանգությունը» գրքի մեջ:

պանման ևս երկու վայր՝ Սուրբ Հակոբ սրբատեղին և Վարդաձոր գյուղը:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԳՐԻԳՈՐՅԱՆ, ՊԵՏՈՅԱՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ և այլք 2021 – Գրիգորյան, Մ., Պետոյան, Ս., Գրիգորյան, Գ., Նազարյան, Գ., Ոսկանյան, Շ., Սուվախչյան, Հ., Գալստյան, Ա. (2021), *Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը՝ հայ գրադարանության կենտրոն. Հրապարակությունների մատենագիտություն 1772-1920*, Ս. Էջմիածին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատ., 743, 1 չի. էջ [Grigoryan, M., Petoyan, S., Grigoryan, G., Nazaryan, G., Voskanyan, Sh., Suvakhchyan, H., Galstyan, A. (2021), *Mother See of Saint Etchmiadzin, center of Armenian printing. Bibliography of publications 1772-1920*, S. Etchmiadzin, Mother See of Saint Etchmiadzin pbl., 743, 1 p];

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1973 – Բարխուդարյան, Ս. (կազմ.) (1973), *Դիվան հայ վիմագրության, պր. IV. Գեղարքունիք. Կամոյի, Մարտունու և Վարդենիսի շրջաններ*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ հրատ., 525 [Barkhudaryan, S. (comp.) (1973), *Divan Hay Vimagrutyan*, vol. IV, *Gegharquniq. Kamoyi, Martunu ev Vardenisi shrjanner*, Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 525];

ԴԵՎՐԻԿՅԱՆ 2014 – Դևրիկյան, Վ. (2014), *Հայ գիրքը աշխարհի խաչմերուկներում, մաս Բ. Լվովից Ամստերդամ (17-րդ դար)*, Երևան, Զանգակ, 400 [Devrikyan, V. (2014), *Hay Girky Ashkharhi Khachmeruknerum*, vol. 2. *Lvovits Amsterdam (17-rd dar)*, Yerevan, Zangak, 400];

ԹԷՈՐԴԻԿ 1912 – Թեոդիկ (1912), *Տիպ ու տառ*, Կ. Պոլիս, տպ. Վ. եւ Հ. Տեր-Ներսիսյան, 193 [Teodik (1912), *Tip u tar*, K. Polis, tp. V. ev H. Ter-Nersesyan, 193];

ԼԱԼԱՅԵՏԻԱՆ 1908 – Լալայեան, Ե. (1908), Նոր Բայազետի գաւառ կամ Գեղարքունիք, *Ազգագրական հանդէս* (Թիֆլիս), 2(18), 109-153 [Lalayan, E. (1908), *Nor Bayazeti gavar kam Gegharkunik, Azgagrakan handes (Tiflis)*, 2(18), 109-153];

ԼԵՎՈՆՅԱՆ 1946 – Լևոնյան, Գ. (1946), *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, ԳԱ հրատ., 255 [Levonyan, G. (1946), *Hay Girqy ev Tpagrutyan arvesty*, Yerevan, Academy of Sciences, 255];

ԼԵՎՈՆՅԱՆ 1958 – Լևոնյան, Գ. (1958), *Հայ գիրքը և տպագրության արվեստը*, Երևան, Հայպետհրատ, 253 [Levonian, G. (1958), *Hay Girgy ev Tpagrutyan arvesty*, Yerevan, Armenian State Publishing House, 253];

ԼԷՕ 1902 – Լեօ (1902), *Հայկական տպագրություն*, հտ. երկրորդ. XVIII դար, առաջին մաս, Թիֆլիս, տպ. Վրաց. հրատ. ընկ., 610 [Leo (1902), *Haykakan tpagrutyun*, vol. 2, XVIII dar. first part, Tiflis, tp. Vrats. hrat. ynk., 610];

ՀԱԿՈՐՅԱՆ 1986 – Հակոբյան, Թ., Մելիք-Բախշյան, Ստ., Բարսեղյան, Հ. (1986), *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, հտ. 1 (Ա-Դ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 991 [Hakobyan, T., Melik-Bakhshyan, ST., Barseghyan, H. (1986), *Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories*, vol. 1 (A-D), Yerevan, Yerevan's University pbl., 991];

ՀԱԿՈՐՅԱՆ 1988 – Հակոբյան, Թ., Մելիք-Բախշյան, Ստ., Բարսեղյան, Հ., *Հայաստանի և հարակից շրջանների տեղանունների բառարան*, (1988), հտ. 2 (Դ-Կ), Երևան, Երևանի համալսարանի հրատ., 991 [Hakobyan, T., Melik-Bakhshyan, St., Barseghyan, H. (1988), *Dictionary of Toponymy of Armenia and Adjacent Territories*, vol. 1 (A-D), Yerevan, Yerevan's University pbl., 991];

ՃԵՄՃԵՄԵԱՆ 1989 – Ճեմճեմեան, Ս. (1989), *Հայ տպագրությունը եւ Հռոմ (ժէ. դար)*, Վենետիկ, Ս. Ղազար, 207 [Chemchemian, S. (1989), *Hay tpagrutyuny ev Hrom* (17 dar), Venice, St. Lazar, 207];

ՃԻԶՄԷՃԵԱՆ 1957 – Ճիզմեճեան, Պ. (1957), *Հայերէն աշխարհաբար լեզուի լիակատար բառարան*, հտ. երկրորդ, Հալէպ, տպ. Անի, 1460 [Chizmechian, P. (1957), *Complete Dictionary of the Armenian World Language*, vol. 2, Aleppo, pbl. Ani, 1460];

ՄԱԼԽԱՍԵԱՆՅ 1944 – Մալխասեանց, Ս. (1944), *Հայերէն բացառական բառարան*, հտ. 2 (Զ-Կ), Երևան, Հայպետհրատ, 512 [Malkhaseants, S. (1944), *Hayeren batsatrakan bararan*, vol. 2 (Z-K), Yerevan, Haypetrat, 512];

ՈՍԿԱՆՅԱՆ 1988 – Ոսկանյան, Ն., Կորկոտյան, Ք., Սավալյան, Ա. (1988), *Հայ գիրքը 1512-1800 թվականներին*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 864 [Voskanyan N., Korkotyan,

Q., Savalyan, A. (1988), *The Armenian Book in 1512-1800*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 864];

ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999 – Ոսկանյան, Ն., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Գյուլումյան, Օ., Սահակյան, Ա., Թադևոսյան, Ս. (1999), *Հայ գիրքը 1851-1900 թվականներին*, Երևան, Գիրք, 860 [Voskanyan, N., Savalyan, A., Soghomonian, M., Gylumyan, O., Sahakyan, A., Tadevosyan, S. (1999), *The Armenian Book in 1851-1900*, Yerevan, Girk, 860];

ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ, ԳԱՆԳՐՈՒՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ 1968 – Տեր-Խաչատուրեան, Ա., Գանգրունի, Հ., Տոնիկեան, Փ., (1968), *Հայոց լեզուի նոր բառարան*, Պէյրութ, Կ. Տոնիկեան եւ որդիք, 924 [Ter-Khachaturian, A., Gangrouni, H., Tonikian, P., (1968), *Hayots lezui nor bararan*, Beirut, K. Tonikyan ev Vordik, 924];

ՔՐԻՍՏՈՆՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ 2002 – «Քրիստոնյա Հայաստան» հանրագիտարան (2002), Երևան, Հայկական հանրագիտարան, 1076 [“Christian Armenia” Encyclopedia, Yerevan, Armenian Encyclopedia pbl., 1076];

ՕՐՄԱՆԵԱՆ 1972 – Օրմանեան, Մ. (1979), *Ծիսական բառարան*, Անթիլիաս, Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւն, 195 [Ormanian, M. (1979), *Tsisakan bararan*, Antelias, Metsi Tann Kilikio Katoghikosutyun, 195];

Шопен 1852 – Шопен, И. (1852), *Исторический памятникъ состоя- ния Армянской-области въ эпоху ея присоединения къ Россійской-имперіи*, Санктпетербургъ, тип. Имп. Академии наук 1232 [Chopin, I. (1852), *Historical monument of the state of the Armenian region in the era of its annexation to the Russian Empire*, Sankt Petersburg, Academia of Sciences, 1232].

AS PART OF THE STUDY OF THE TEMPLE
OF ST. HAKOB AND THE MAIN BOOK OF HOROLOGIA

SATENIK GRIGORYAN

*Matenadaran, the Mesrop Mashtots
Research Institute of Ancient Manuscripts*

Keywords: Western Armenia, Khastur village, Gegharkunik province, Verin Getashen village, resettlement period, St. Hakob temple, Horologion, Petrosyan family.

In this study, the temple of Saint Hakob and the Horologion were presented in a historical context. The temple of St. Hakob is a holy place for the neighboring villages and Armenian pilgrims and has an important role for our history and culture. The Horologion kept in St. Jacob's Chapel is special from the point of view of the history of printing. With this study, it was possible to identify two more places of preservation of examples of this important print: the temple of Saint Hakob and Vardadzor village.

**ԳՐԻԳՈՐ ԽԱԼԴԱՐՅԱՆԻ ՏՊԱՐԱՆԻ
ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԳՐԱՊԱՏՄԱԿԱՆ ԱՐԺԵՔԸ***

ՀՏԴ: 02(479.25)(091)+93(=919.81)(470)

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-60

ԴՈՆԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

**Սանկր Պետերբուրգի պետական համալսարանի
Արևելագիտության ֆակուլտետ
Բանասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0009-0005-0658-0821](https://orcid.org/0009-0005-0658-0821)

Ռուսաստանում հայկական տպագրության սկզբնավորումն ու զարգացումը կապվում է Գրիգոր Խալդարյանի և Հովսեփ Արղությանի անունների հետ, ովքեր ջանք ու եռանդ չեն խնայել՝ այն ամուր և կայուն հիմքերի վրա դնելու համար: Մեզ հասած հրապարակությունները փաստում են, որ տպագրության պատմության մեջ Խալդարյան տպարանն ունեցել է սեփական ոճն ու ձեռագիրը:

Սույն հետազոտության մեջ ներկայացնում ենք Ռուսաստանում առաջին հայկական տպարանի գործունեությունը՝ արժևորելով այն հայ տպագրության տեսանկյունից: Ուշադրությունը կենտրոնացրել ենք կոնկրետ հրապարակությունների վրա, որոնք կարևոր են տվյալ ժամանակաշրջանի ռուսահայ տպագրարվեստի ձեռքբերումներն ընդգծելու համար:

The beginning and development of Armenian printing in Russia is associated with the names of Grigor Khaldaryan and Hovsep Arghyun, who spared no effort to put it on a solid and stable foundation. The publications that

* Հոդվածը ներկայացվել է 09.05.2024, գրախոսվել է 17.06.2024, ընդունվել է տպագրության 29.05.2024:

The article was submitted on 09.05.2024, reviewed on 17.06.2024 accepted for publication on 29.05.2024.

have reached us prove that the Khaldarian printing house had its own style and handwriting in the Armenian printing history.

In this research, we present the activity of the first Armenian printing house in Russia, evaluating it from the point of view of Armenian printing. We have focused attention on specific publications, which are important for emphasizing the achievements of Russian-Armenian printing art of the given period.

Քանայի բռներ՝ Գրիգոր Խալդարյան, տպագրական գործ, թարգմանական գործունեություն, հիշատակարան, գրական ժառանգություն:

Ինչպես հղել՝ Մկրտչյան, Դ. (2024), Գրիգոր Խալդարյանի տպարանի հրատարակությունների գրապատմական արժեքը, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 60-75.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-60](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-60)

How to cite (APA style): Mkrtchyan, D. (2024), Historical value of Grigor Khaldaryan's printing house publications, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 60-75. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-60](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-60)

Ներածություն

Հայ հասարակական, ազգային-ազատագրական շարժման գործիչ, ռուսահայոց հոգևոր առաջնորդ Հովսեփ արք. Արղությանը Ռուսաստանում հայ տպագրական գործի հիմնադիրներից մեկն է: Նրա ջանքերով 1780 թ.¹ Ռուսաստանում հիմնադրվել է հայկական առաջին տպարանը, իսկ Ս. Պետերբուրգում տպագրական գործի կազմակերպիչ դարձել է Գրիգոր Խոջամալի Խալդարյանը²: Ուշագրավ է այն փաստը, որ տպարանը բացվել է Ս. Կատարինե եկեղեցու օժոմից անմիջապես հետո: Հետագայում՝ 1800 թվականից, այս-

¹«Դիան»-ում, որպես տպարանի հիմնադրման տարեթիվ, նշված է 1783, իսկ Հովսեփ արք. Արղությանի մահվան տարեթիվը՝ 1801-ի փոխարեն 1800 (*Կե՛ս ԴԻԻԱՆ* 1911, 32, տիտղթ.):

² Աղանյանցի մոտ Խալդարյան ազգանվան փոխարեն մի քանի անգամ հանդիպում ենք «Ելդարյան» գրելաձևը (*Կե՛ս ԴԻԻԱՆ* 1911, 487-488):

տեղ գործել է հայկական դպրոց, իսկ 1812 թվականից այն դարձել է տպարանի մշտական վայր:

Մինչ Գ. Խալիբարյանի տպարանը, Հովսեփ արք. Արղությանը բանակցություններ է վարել Ղուկաս Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և Ամստերդամի հայերի հետ՝ այնտեղի հայկական տպարանը գնելու և Ս. Պետերբուրգ տեղափոխելու համար, սակայն հաջողություն չի ունեցել (ԴԻՎԱՆ 1911, 488): 1779 թ. նա ծանոթացել է Նոր Զուլայում ծնված, Հնդկաստանում որոշ ժամանակ առևտրական գործունեություն ծավալած, այնուհետև Լոնդոն տեղափոխված Գ. Խալիբարյանի հետ, ով Անգլիայում արդեն իսկ ծավալել էր տպագրական գործունեություն՝ հայրենակիցների շրջանում լուսավորություն տարածելու նպատակով (ԺԱՄԱԳԻՐՔ 1783, յիշատակարան): Գ. Խալիբարյանն Արղությանի հորդորով Լոնդոնի տպարանը տեղափոխել է Ս. Պետերբուրգ, իսկ հետո՝ տպարանի համար պատվիրել նոր տառատեսակներ (ГРИГОРЯН 1974, 92):

Հովսեփ արք. Արղությանի ջանքերով ստեղծված տպարանը գործել է Ս. Պետերբուրգում, Նոր Նախիջանում և Աստրախանում: Դեռևս 1782 թ. սկզբին Արղությանը գրել է ոմն պարոն Ալեքսանի, որ Նոր Նախիջևանի Ս. Խաչ եկեղեցուն կից պետք է տպարան հաստատի (ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967, 220, *դե'ս* նաև ՄՄ, ձեռ. 4496, թ. 46), նույն թվականի մայիսին Գ. Խալիբարյանին գրած նամակում, հիշատակելով տպարանի խնդիրներն ու թերությունները, ընդգծել է այն Նոր Նախիջևան տեղափոխելու իր ցանկությունը (ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967, 220, *դե'ս* նաև ՄՄ, ձեռ. 4496, թ. 346): Մինչև 1785 թ. նա ամեն կերպ օժանդակել է տպարանի գործունեությանը, սակայն առաջացած խնդիրների ու դժվարությունների պատճառով 1785 թվականից համոզել է Գ. Խալիբարյանին՝ տպարանը տեղափոխել Նոր Նախիջևան (ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967, 220, *դե'ս* նաև ՄՄ, ձեռ.

4496, թ. 271): Նա հաջողություն չի ունեցել այս հարցում, քանի որ տպարանատերը վճռական էր իր որոշման մեջ: 1787 թ. օգոստոսին մահացել է Գ. Խալդարյանը՝ տպարանը թողնելով պարտքերի մեջ (ԵՂԻՇԷ 1787, 413): Արդությանի հորդորով Ս. Պետերբուրգ է մեկնել Թադեոս վրդ. Մարությանը՝ տպարանի գործունեությունը ղեկավարելու, խնդիրները լուծելու, այն գնելու գործընթացը կազմակերպելու համար (ԴԻԻԱՆ 1911, 14): Մինչև 1790 թ. Արդությանը կարողացել է գտնել միջոցներ՝ տպարանը գնելու և Նոր Նախիջևան տեղափոխելու համար (ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967, 221-222), և արդեն 1790 թ. հունիսին Նոր Նախիջևանի Ս. Խաչ վանքիում տպագրվել է առաջին գիրքը: 1790-1795 թթ. տպարանն ակտիվ գործունեություն է ծավալել. այս շրջանը կարելի է բնորոշել ամենաբեղունը տպարանի գործունեության պատմության մեջ (ՇԱՀԱԶԻԶ 1901, 47-49: ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967, 223-224): 1796 թ. Արդությանը տպարանը տեղափոխել է Աստրախան, սակայն այստեղ նրա գործունեությունն արդյունավետ չի եղել: Արդությանի և Թադեոս վարդապետի մահից հետո՝ 1800 թ., այն դադարել է գործել:

Տպարանի հիմնադիրների և գործունեության վերաբերյալ մեզ է հասել հսկայածավալ գիտական ժառանգություն (ՏԷՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ 1864; ԱՄԻՐՋԱՆՅԱՆ 2017; ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967; ԵՆՈՔՅԱՆ 2018; ԱՎԵՏԻՍՅԱՆ 1996 և այլն): Սույն հետազոտական աշխատանքն իրականացվել է՝ այդ գիտական ժառանգության ուսումնասիրության, մի շարք վավերագրերի հիմքի վրա:

Գրիգոր Խալդարյանի տպարանի պետերբուրգյան շրջանի հրապարակությունները³

³ Սույն ուսումնասիրության շրջանակում ուսումնասիրել ենք Ս. Պետերբուրգի տարբեր գրադարաններում առկա բոլոր օրինակները, ինչպես նաև «Հայ գիրք» շտեմարանում ներառված թվային տարբերակները:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Խալդարյան տպարանը Ս. Պետերբուրգում գործել է 1781-1788 թթ.: Տպագրել է թե՛ կրոնական, թե՛ աշխարհիկ բովանդակությամբ գրքեր:

Առաջին գիրքը՝ «Աբբենարանը», հրատարակվել է 1781 թ. դեկտեմբերի 15-ին (ԱՅԲԲԵՆԱՐԱՆ 1781, տիտղթ.; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 532-533), որին կարճ ժամանակ անց՝ 1782 թ. հունվարի 6-ին, հետևել է երկրորդը՝ «Կրթություն քրիստոնեական»-ը (ԿՐԹՈՒԹԻՒՆ 1782, տիտղթ.; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 538-539): Երկրորդ գրքի տպագրության օրն ընտրվել է նպատակադրված՝ Ս. Ծննդյան տոնի խորհուրդը զուգահեռելով գրքի տպագրության խորհրդին:

Խորհրդանշական է նաև երկու գրքերի՝ «Աբբենարան»-ի՝ որպես ազգային կրթության դասագրքի և «Քրիստոնեական»-ի՝ որպես հոգևոր կրթության ձեռնարկի իրար հաջորդելը: Ազգային և կրոնա-եկեղեցականի նման փոխակապակցվածությունը բնորոշ է եղել Ս. Պետերբուրգի հայ համայնքին ողջ պատմության ընթացքում: Պատահական չէ, որ 1780 թ. Արղությանը օծել է Ս. Կատերինե եկեղեցին, իսկ 1781 թ. նրան կից սկսել է գործել քաղաքի հայկական տպարանը:

Առաջին երկու գրքերից հետո Գ. Խալդարյանին պարզ է դարձել, որ իր ձեռքի տակ եղած տառատեսակները բավարար չեն հետագա գործունեությունը շարունակելու և տպագրության տեսանկյունից բարդ գրքեր տպագրելու համար: Որոշ բարդությունների ի հայտ գալով պայմանավորված՝ երրորդ գրքի տպագրության համար պահանջվել է տևական շրջան: Նա Լոնդոնից Ս. Պետերբուրգ է հրավիրել փորագրիչին, պատվիրել նոր տառատեսակներ, ձեռք բերել նոր սարքավորումներ, որոնք հնարավորություն են տվել ձեռնամուխ լինել երրորդ գրքի՝ Ժամագրքի տպագրությանը: Աշխատանքները մեկնարկել են 1783 թ. նոյեմբերի 10-ին և տևել են մեկ

տարի՝ մինչև 1784 թ. նոյեմբերի 11-ը (ԺԱՄԱԳԻՐՔ 1783, յիշատակարան; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 546-548): Ի տարբերություն նախորդ 2 տպագրությունների, որոնք գրքույկներ են՝ բաղկացած 32 և 24 էջերից, Ժամագիրքը ծավալուն է՝ բաղկացած 577 զարդափակ էջից և 7 փորագիր պատկերից:

Տպագրության պատմության մեջ «Ժամագրքի» տպագրությունը համարվում է տեխնիկապես բարդ գործընթաց: Որքան էլ հայ տպագրիչները գիտակցել են Ժամագրքի կարևորությունը Հայ առաքելական եկեղեցու համար, այնուամենայնիվ, այն տպագրել են մի քանի գիրք հրատարակելուց հետո: Յուրաքանչյուր Ժամագիրք ներառել է հայ եկեղեցու Ժամակարգությունն՝ ըստ օրվա ինը Ժամերի, իսկ վերջում զետեղվել են աղոթքներ, ծիսական բացատրական նյութեր, որոնց կիրառությունը կարևոր էր հայ գաղթօջախներում:

Ի տարբերություն նախորդ երկու գրքերի՝ Խալդարյան տպարանում հրատարակված Ժամագիրքն ունի հիշատակարան, որից տեղեկություններ ենք քաղում Գ. Խալդարյանի անձի, տպարանի հիմնադրման, Հովսեփ արք. Արղությանի ջանքերի մասին: Տպագրիչը հիշում է իր բոլոր հարազատներին՝ սկսած Նոր Զուղայից, չի մոռանում իրեն օժանդակած և գրքի տպագրության գործում ներդրում ունեցած անձանց: Ի տարբերություն ձեռագիր հիշատակարանների՝ այստեղ նկատելի է նոր շրջանի ազգային մտածողությունը. գիրքը տպագրվել է ի ծառայություն «պատուելի ազգին իմոյ»:

Հիշատակարանի վերջում ընդգծված է Գ. Խալդարյանի ծրագիրը՝ տպագրել եկեղեցական գրականություն՝ նախորդող շրջանի հայրերի մեկնություններով, ինչպես նաև հայոց պատմությանն ու ազգային խնդիրների վերաբերվող գործեր: Այստեղ հիշատակված է նաև տպարանի աշխատակիցը՝ պատանի Մկրտումը, որի աշխատանքի միջոցով մանրամասնվում է գրքի տպագրության ընթացքը՝

տպատառերի ծովում, դրանցից կապարյա տառատեսակների պատ-
րաստում, ստացված տառատեսակներով գրքի էջերի շարվածք,
գրքի տպագրությունից հետո էջերի շարվածքի ցրում (հարկավոր էր
ընդհանուր շարվածքից հատ-հատ վերցնել յուրաքանչյուր տառը և
այն դնել տառերից յուրաքանչյուրի համար նախատեսված արկղի
մեջ):

Ի տարբերություն նախորդ տարիների, 1785 թ. Խալդարյան
տպարանի գործունեությունն առավել արդյունավետ է եղել. տպա-
գրվել է երեք գիրք՝ «Յիսուս Որդի» (ՇՆՈՐՀԱԼԻ 1785; ՈՍԿԱՆՅԱՆ
1988, 574-575), «Սկզբունք քաղաքական ուսմանց» (ՍԿԶԲՈՒՆՔ
1785; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 576), «Պատմութիւն Սուրբ Գրոց» (ՊԱՏ-
ՄՈՒԹԻՒՆ 1785; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 575): Նրանցից առաջինը ծա-
վալուն տպագրություն է, իսկ հաջորդ երկուսը գրքույկներ են: Երեք
գրքերի տիտղոսաթերթերին արձանագրված է «Հրամանաւ կառա-
վարչացն բարեկարգութեանց», ինչը փաստում է, որ երեք տպագրու-
թյունն էլ իրականացվել է Ղուկաս Ա Ամենայն Հայոց Կաթողիկոսի և
Հովսեփ արք. Արղությանի արտոնությամբ: «Յիսուս Որդի»-ն տպա-
գրվել է Հովհաննես Լազարյանի (Եղիազարյանի) անմիջական ֆի-
նանսական աջակցությամբ. դա արտացոլվել է գրքի տիտղոսաթեր-
թին. «Արդեամբք և ծախիւք բարեպաշտ և ազնուատոհմ Աղազա-
րեանց Եղիազարեան ազնիւ պարոն Յօհաննէսին» և գրքի հիշատա-
կարանում: «Սկզբունք քաղաքական ուսմանց» գրքույկի տպագրու-
թյան ծախսերը հոգացել է թարգմանիչը. «Ծախիւք՝ հոգեսէր բարե-
պաշտի, սորին թարգմանողի, ոց յայտնի ի վերջաբանութեան» (տե՛ս
տիտղթ.), իսկ երրորդ գրքինը՝ ինքը՝ տպագրիչը. «Ծախիւք և տպիւք
պարոն Գրիգորին»: Երեք գրքերն էլ ունեն հիշատակարաններ, սա-
կայն ի տարբերություն ավանդական ձևաչափի՝ «Յիսուս Որդի» գրքի
հիշատակարանը չափածո է:

Նշենք, որ Ներսես Շնորհալու «Յիսուս Որդի» չափածո ծավալուն ստեղծագործությունն առ այսօր համարվում է հայ միջնադարյան գրականության ամենակարևոր երկերից մեկը, որի տպագրությունը պատիվ էր բերում յուրաքանչյուր տպարանի: Առաջին անգամ այն հրատարակվել է Վենետիկում՝ 1643 թ. (ՇՆՈՐՀԱԼԻ 1643) և մինչև 1785 թ. ունեցել է ութ տպագրություն (ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022, 117): Բովանդակային առումով Խալդարյան տպագրությունը ամբողջովին համապատասխանում է Վենետիկի 1643 թ. առաջին տպագրությանը:

«Պատմութիւն Սուրբ Գրոց» և «Սկզբունք քաղաքական ուսմանց» գրքույկները թարգմանություններ են և որպես կրթական ձեռնարկներ՝ նախատեսված են մանուկների դաստիարակության համար: Առաջին գրքույկի թարգմանիչը Հարություն Դավթեան Զուղայեցին է, իսկ երկրորդ գրքույկինը՝ Աննա Դիլանյանը: 18-րդ դարի վերջին կնոջ կողմից կատարված թարգմանությունը տպագրելը եզակի երևույթ էր հայ տպագրության պատմության մեջ:

«Պատմութիւն Սուրբ Գրոց» գրքի առաջաբանում նշվում է, որ գիրքը սրբագրել է Ստեփաննոս Սահակեանը, ով նաև թարգմանությունը համեմատել է բնագրի հետ (ՊԱՏՄՈՒԹԻՒՆ 1785, 4): Կարելի է ենթադրել, որ այս շրջանից սկսած՝ Ռուսաստանում ձևավորվել են սկզբունքներ, թե ինչպես պետք է աշխատել թարգմանությունների հետ և, ամենակարևորը, անպայման պետք է խմբագրել տպագրությունները: Առաջին անգամ ուշադրություն է դարձվել թարգմանության որակին, բնագրային համապատասխանությանը, գրական շարադրանքին (ՍԿԶՐՈՒՆՔ 1785, 546): Թարգմանական արվեստի և գրականության տեսության հետ կապված հարցերի արծարծումը գտնում ենք նաև տպարանի հաջորդ հրատարակություններում:

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Տպարանի գործունեության բարձրակետը 1786 թվականն է, երբ տպագրվել են հինգ գիրք՝ «Աւետարան Ճաշու-Տօնացոյց» (ԱԻԵ-ՏԱՐԱՆ 1786; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 589-591), Իլիա Մինեադիսի «Վէմ գայթակղութեան» (ՄԻՆԵԱԴԻՍ 1786; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 591), Ղազար Զահկեցու «Գիրք աղօթից որ կոչի Աստուածաղերս» (ԶԱՀԿԵՅԻ 1786; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 591-592), Ներսես Շնորհալու «Աղօթք» (ՇՆՈՐՀԱԼԻ 1786; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, էջ 592), «Տարեցոյց եւ օրացոյց» (ՏԱՐԵՑՈՅՑ 1786; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 593):

Առաջին երեք գրքերը ծավալուն տպագրություններ են, իսկ Շնորհալու աղոթքները՝ 29 էջից բաղկացած գրքույկ: Բոլորի մասին մեզ հասել են մատենագիտական տվյալներ, որոնք ամբողջացվել են փաստացի գրքերի նկարագրությամբ, մինչդեռ «Տարեցոյց եւ օրացոյց» գրքի մատենագիտական նկարագրությունը կատարվել է ըստ Գ. Զարբհանյանի և Թեոդիկի փոխանցած տեղեկությունների (ԶԱՐԲՀԱՆՅԱՆ 1883, 724; Թեոդիկ 1912, 178): Ցավոք, գրքի փաստացի բացակայությունը թույլ չի տալիս ամբողջացնել մատենագիտական նկարագրությունը:

Գրքերի տպագրությունն իրականություն է դարձել բարերարների հովանավորությամբ, ինչն արտացոլվել է նաև անվանաթերթերին: Ըստ այդմ՝ «Աւետարան»-ը տպագրվել է Նոր Զուղայից Աղամալ Խոջամիրյանի դուստր Սոփիա տիկնոջ և Նոր Զուղայից Աստվածատուր Բաչխումյանցի, «Վէմ գայթակղութեան»-ը՝ Մարգար Մանիչարյանց Ասատրյանի, «Գիրք աղօթից որ կոչի Աստուածաղերս»-ը՝ Հովհաննես վրդ. Նոր Զուղայեցու կողմից: Շնորհալու աղոթքների տպագրության հովանավորը նշված չէ, իսկ Տարեցոյցինը նշել չենք կարող՝ գրքի բացակայության պատճառով:

Հինգ գրքից երկուսը թարգմանություններ են՝ «Վէմ գայթակղութեան»-ը՝ հունարենից հայերեն, իսկ Շնորհալու աղոթքները՝ հա-

յերենից ռուսերեն: Երկու գրքերն էլ թարգմանել է Գրիգոր Խալդարյանը: Նշենք, որ առաջին անգամ տպարանը տպագրել է մի գիրք, որը ոչ թե թարգմանություն է որևէ օտար լեզվից, այլ, հակառակը, հայերենից ռուսերեն: Սրանով պայմանավորված՝ անվանաթերթը ևս երկլեզու է՝ հայերեն և ռուսերեն, իսկ տպագրության վայրի, տպարանի տվյալները նշված են միայն ռուսերեն:

Բոլոր գրքերի վրա արտացոլված է տպագրության արտոնությունը՝ հայերեն. «Հրամանաւ կառավարչացն բարեկարգութեանց» և ռուսերեն՝ «Печатана с дозволения Указного»: Հինգ գրքերից երեքն ունեն հիշատակարաններ:

«Աւետարան Ճաշու»-ն և «Տօնացոյց»-ը մեկ տպագրություն է: Գրքերն ունեն առանձին տիտղոսաթերթեր, սակայն շարունակվող էջակալություն: Տիտղոսաթերթերին նշված է, որ Ավետարանը տպագրվել է փետրվարի 5-ին, իսկ Տօնացոյցը՝ օգոստոսի 14-ին, ինչի կարելի է ենթադրել, որ տպագրությունը տևել է շուրջ կես տարի: Այս հրատարակությունը անչափ կարևոր էր եկեղեցական ամենօրյա արարողությունների կատարման համար: Եկեղեցական արարողակարգն արդեն կանոնավորվել էր Ս. Պետերբուրգի հայկական համայնքում, և անհրաժեշտություն կար հրատարակել սույն գործը: Բնագրին նախորդող առաջաբանում նշված է, որ գրքի մեկենասն այն նախաձեռնել է՝ աչքի առաջ ունենալով Սիմեոն Ա Երևացի Ամենայն Հայոց Կաթողիկոսի կազմած և հրատարակած «Տօնացոյց»-ի գործածության կարևորությունն ու հարմարությունը (ԱԻԵՏԱՐԱՆ 1786, 3): Նույն տեղում տպագրիչը խնդրում է ներողամիտ լինել առկա սխալների համար, ինչը փաստում է նրա՝ տպագրության գործին ամենայն պատասխանատվությամբ մոտենալու հանգամանքը: Նման մտահոգությունը պայմանավորված էր նաև Ս. Պետերբուրգի գաղթօջախում տպագրության միջոցով ևս հայերենը անաղարտ պահելու

մտահոգությամբ: Նույնը շեշտված է հույն հեղինակ Իլիա Մինեադիսի «Վէմ գայթակղութեան» գրքի թարգմանության հիշատակարանում, ուր Արղությանը դիմել է Կ. Պոլսի Պատրիարք Իսահակ եպիսկոպոսին՝ խնդրելով թարգմանությունն ուղղել ձեռագրերի գրչական սխալներից, որին ի պատասխան՝ Պատրիարքը Ս. Պետերբուրգ է ուղարկել ուղղված տարբերակը:

Մինեադիսի գրքի տպագրությունը խիստ անհրաժեշտ էր, որովհետև այն պահանջված էր, իսկ Կ. Պոլսի Պատրիարքին դիմելը ցույց է տալիս, որ Պետերբուրգի հայ համայնքը մեկուսացված կյանքով չէր ապրում, այլ ժամանակի գրական կյանքի մի մասն էր: Սա հաստատվում է նաև Ղազար Զահկեցու գրքի հրատարակությամբ: Այն առաջին անգամ տպագրվել էր Կ. Պոլսում 1742-1744 թթ., իսկ Արղությանը հանձնարարությամբ վերահրատարակվում է երեք անգամ՝ Ս. Պետերբուրգում (1786 թ.) և տպարանը Նոր Նախիջևան տեղափոխելու հետո (1792, 1793 թթ.):

1787 թ. տպագրվել է երկու գիրք՝ «Ժամագիրք»-ը (ԺԱՄԱԳԻՐՔ 1787; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 604-605) և Եղիշեի «Պատմութիւն Վարդանանց»-ը (ԵՂԻՇԷ 1787; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 604): Նույն թվականի օգոստոսին մահացել է Գ. Խալդարյանը՝ կիսատ թողնելով Եղիշեի Պատմության տպագրությունը: Այն ամբողջացրել և տպագրել են նրա մահից հետո: Միաժամանակ Արղությանը փորձել է տպարանը տեղափոխել Նոր Նախիջևան: Մինչ այդ, 1788 թ. Ս. Պետերբուրգում տպագրվել է երեք գիրք՝ Գ. Խալդարյանի «Գիրք որ կոչի շաւիղ լեզուագիտութեան» և Շնորհալու «Հաւատով խոստովանիմ» (որպես մեկ տպագրություն, ԽԱԼԴԱՐԵԱՆ, ՇՆՈՐՀԱԼԻ 1788; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 617-619), Կղեոպատրա Սարաֆյանի «Բանալի գիտութեան» (ՍԱՐԱՖԵԱՆ 1788; ՈՍԿԱՆՅԱՆ 1988, 619-621), Ներսես Շնորհալու «Գիրք որ կոչի ընդհանրական» և Ներսես Լամբրո-

նացու «Դրուատ պատմագրաբար» (որպես մեկ տպագրություն, ՇՆՈՐՀԱԼԻ, ԼԱՄԲՐՈՆԱՅԻ 1788; ՈՍԿԱՆՅԱՆ 621-628): Բոլոր գրքերը պատրաստվել էին Գ. Խալդարյանցի կենդանության օրոք, սակայն տպագրել չէին հասցրել: Այս առումով խիստ արժեքավոր է 1788 թ. Շնորհալու «Ընդհանրական»-ի հիշատակարանը, ուր մանրամասն ներկայացվում է և՛ տպարանի, և՛ տպարանատիրոջ գործունեությունը:

Ամփոփում

Ս. Պետերբուրգում հայ գրական կյանքը ձևավորվել է 1760-ական թվականներից, երբ տեղի հայ համայնքը Լազարյանների գլխավորությամբ և Ռուսաստանի Հայոց թեմի աջակցությամբ սկսել է համահայկական ընդգրկում ունեցող հարցադրումներ առաջադրել: Գրական և մշակութային կյանքի աշխուժացմանը զուգահեռ Հովսեփ արք. Արղությանի և Գրիգոր Խալդարյանի ջանքերով Ս. Պետերբուրգում հաստատվում է տպարան, ուր 1781 թ. հրատարակվում է առաջին գիրքը: Տպարանի գործունեության պետերբուրգյան շրջանը շարունակվում է մինչև 1788 թ., այնուհետև տպարանը տեղափոխվում է Նոր Նախիջևան, ավելի ուշ՝ Աստրախան: Տպագրվել է 16 գիրք՝ կրոնական և աշխարհիկ բովանդակությամբ: Տպագրություններն աչքի են ընկնում հայ տպագրարվեստին բնորոշ առանձնահատկություններով:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՄԻՐՋԱՆՅԱՆ 2017 – Ամիրջանյան, Հ. (2017), Հովսեփ արքեպիսկոպոս Արղությանը՝ Ռուսաստանի հայոց թեմի առաջնորդ (1773-1800), ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն. Գիտական աշխատություններ (Գյումրի), 20, 139-145 [Amirjanyan, H. (2017), Hovsep archepiskopos Arghutyany Rusastani hajots temi arajnord (1773-1800), *Scientific Works of Shirak Center for Armenological Studies of NAS RA* (Gyumri), 20, 139-145];

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԱՅԲԲԵՆԱՐԱՆ 1781 – *Այբբենարան* (1781), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 32 [Aybbenaran (1781), St. Peterspurq, tp. Grigor Khaldaryants, 32];

ԱՎԵՏԻՍՅԱՆ 1996 – Ավետիսյան, Գ. (1996), Հայ տպագրության սկզբնավորումը Ռուսաստանում, *Բանբեր Երևանի համալսարանի* (Երևան), 3(90), 144-147 [Avetisyan, G. (1996), Hay tpagrutyan skzbnavorumy Rusastanum, *Bulletin of Yerevan University*, 3(90), 144-147];

ԱՒԵՏԱՐԱՆ 1786 – *Աւետարան Ճաշու: Soṭawgnjg* (1786), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 258, 74 [Avetaran Chashu: Tonatsuyts (1786), St. Peterspurq, tp. Grigor Khaldaryants, 258, 74];

ԲԱՐԽՈՒԴԱՐՅԱՆ 1967 – Բարխուդարյան, Վ. (1967), Ռուսահայերի առաջին տպարանը, *Պատմա-քանասիրական հանդես* (Երևան), 4, 219-229 [Barkhudaryan, V. (1967), Rusahayeri arajin tparany, *Historical-Philological Journal* (Yerevan), 4, 219-229];

ԴԻՎԱՆ 1911 – Աղանեանց, Գ. (կազմ.) (1911), *Դիւան հայոց պատմութեան, մաս I*, Թիֆլիս, տպ. Ն. Աղանեանցի, 556 [Aghanyants, G. (comp.) (1911), *Divan hayots patmutyan, mas I*, Tiflis, tp. N. Aghanyantsi, 556];

ԵՂԻՇԷ 1787 – Եղիշե (1787), *Պատմութիւն Վարդանանց*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 413 [Eghishe (1787), *Patmutyun Vardanants*, St. Peterspurq, tp. Grigor Khaldaryants, 32];

ԵՆՈՔՅԱՆ 2018 – Ենոքյան, Ա. (2018), Ռուսահայ առաջին տպարանի հրատարակությունները և դրանց նկարազարդման առանձնահատկությունները, *Բանբեր Մատենադարանի* (Երևան), 25, 101-122 [Yenokyan, A. (2018), The history of book illustration in the first Armenian printing house in Russia, *Bulletin Of Matenadaran* (Yerevan), 25, 101-122];

ԶԱՐԲԸԱՆԱԼԵԱՆ 1883 – Զարբհանալեան, Գ. (1883), *Հայկական մատենագիտութիւն*, Վենետիկ, տպ. Մխիթարեան, ԺԶ, 754 [Zarbhanean, G. (1883), *Haykakan matenagitutyun*, Venice, tp. Mkhitaryan, 754];

ԹԷՈՂԻԿ 1912 – Թեոդիկ (1912), *Տիպ ու տառ*, Կ. Պոլիս, տպ. Վ. Եւ Հ. Տեր-Ներսեսեան, 193 [Teodik (1912), *Tip u tar*, K. Polis, tp. V. ev H. Ter-Nersesyan, 193];

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ԺԱՄԱԳԻՐՔ 1783 – *Ժամագիրք* (1783), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 577 [*Zhamagirq* (1783), St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 577];

ԺԱՄԱԳԻՐՔ 1787 – *Ժամագիրք* (1787), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 320 [*Zhamagirq* (1787), St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 320];

ԽԱԼԴԱՐԵԱՆ, ՇՆՈՐՀԱԼԻ 1788 – Խալդարեան, Գ., Շնորհալի, Ն. (1788), *Գիրք որ կոչի Շափղ լեզուագիտութեան. հայ-ռուսերէն բառարան*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 168 [*Khaldaryan, G., Shnorhali, N. (1787), Girq vor kochi Shavigh lezvagitutyan: hay-ruseren bararan*, St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 168];

ԿՐԹՈՒԹԻՒՆ 1782 – *Կրթութիւն քրիստոնէական* (1782), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 24 [*Krtutyun qristoneakan* (1782), St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 32];

ՄԻՆԵԱԴԻՍ 1786 – Իլիա Մինեադիս (1786), *Վէմ զայթակողութեան*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 176 [*Ilia Mineadis (1786), Vem gaytakghutyan* (1786), St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 176];

ՇԱՀԱԶԻԶ 1901 – Շահազիզ, Ե. (1901), *Նոր-Նախիջեանի Ս. Խաչ վանքը*, Թիֆլիս, տպ. Մ. Շարազէի եւ ընկ., 96 [*Shahaziz, E. (1901), Nor-Nakhijevani S. Khach vanqy, Tiflis, tp. M. Sharadzei ev ynk., 96*];

ՇՆՈՐՀԱԼԻ 1643 – Շնորհալի, Ն. (1643), *Յիսուս Որդի*, Վենետիկ, տպ. Սալիգաթաուի, 527 [*Shnorhali, N. (1643), Hisus Vordi*, Venice, tp. Sali-gataui, 527];

ՇՆՈՐՀԱԼԻ 1785 – Շնորհալի, Ն. (1785), *Յիսուս Որդի*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 438 [*Shnorhali, N. (1785), Hisus Vordi*, St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 438];

ՇՆՈՐՀԱԼԻ 1786 – Շնորհալի, Ն. (1786), *Աղօթք*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 29 [*Shnorhali, N. (1786), Aghotq*, St. Petersburg, tp. Grigor Khaldaryants, 29];

ՇՆՈՐՀԱԼԻ, ԼԱՄԲՐՈՆԱՏԻ 1788 – Շնորհալի, Ն., Լամբրոնացի, Ն. (1788), *Գիրք որ կոչի ընդհանրական: Դրուսար պարամագրաբար*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 336 [*Shnorhali, N., Lambronatsi, N. (1788),*

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

Girq vor kochi yndhanrakan: Drvat patmagrabar, St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants, 336];

ՈՍԿԱՆՅԱՆ, ՍԱՎԱԼՅԱՆ, ՍՈՂՈՄՈՆՅԱՆ, ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆ, ՍԱՀԱԿՅԱՆ, ԹԱԴԵՎՈՍՅԱՆ 1999 – Ոսկանյան, Ն., Սավալյան, Ա., Սողոմոնյան, Մ., Գյուլումյան, Օ., Սահակյան, Ա., Թադևոսյան, Ս. (1999), *Հայ գիրքը 1851-1900 թվականներին*, Երևան, Գիրք, 860 [Voskanyan, N., Savalyan, A., Soghomonian, M., Gylumyan, O., Sahakyan, A., Tadevosyan, S. (1999), *The Armenian Book in 1851-1900*, Yerevan, Girk, 860];

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ 1785 – *Պատմութիւն Սուրբ Գրոց* (1785), թարգմ.՝ Յարութիւն Դաւթեանց, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 752 [*Patmutyun Surb Grots* (1785), St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants, 72];

ՋԱՀԿԵՏԻ 1786 – Ղազար Ջահկեցի (1786), *Գիրք աղօթից որ կոչի Աստուածադերս*, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 279 [Ghazar Jahketsi (1786), *Girq aghotits vor kochi Astvatsaghers*, St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants, 279];

ՍԱՐԱՖԵԱՆ 1788 – Սարաֆեան, Կ. (1788), Բանալի գիտութեան, թարգմ.՝ Մ. Սարաֆեան, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 295 [Sarafyan, K. (1788), *Banali gitutyen*, targm. M. Sarafyan, St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants, 295];

ՍԿԶԲՈՒՆԲ 1785 – *Սկզբունք քաղաքական ուսմանց* (1785), թարգմ.՝ Ա. Դիլանչեան, Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց, 43 [*Skzbunq qaxaqakan usmants* (1785), targm. A. Dilanchean, St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants, 43];

ՎԱՐԴԱՆՅԱՆ 2022 – Վարդանյան, Ա. (կազմ.) (2022), *Հայ գիրքը Թուրքիայում: Պրակ Ա.*, Երևան, Անտարես, XXI, 514, 9 [Vardanyan, A. (2022), *Armenian Book in Turkey, Vol. 1*, Yerevan, Antares, XXI, 514, 9].

ՏԱՐԵՑՈՅՑ 1786 – *Տարեցոյց եւ օրացոյց* (1786), Ս. Պետերբուրգ, տպ. Գրիգոր Խալդարեանց [*Taretsoyts ev oratsoyts* (1786), St. Peterspurğ, tp. Grigor Khaldaryants];

ՏԵՐ-ԱԲՐԱՀԱՄԵԱՆ 1868 – Տէր-Աբրահամեան, Յ. (1868), *Յովսէփ Չորրորդ Երկայնաբազուկ Արղութեանց: Ընդհանրական առաջնորդ ոռախաքնակ հայոց*, Ս. Պետերբուրգ, 24 [Ter-Abrahamyan, H. (1868), *Hovsep Chor-*

rord ErKaynabazuk Arghutyants: Yndhanrakan arajnord rusiabnak hajots, St. Petersburg, 24];

ГРИГОРЯН 1974 – Григорян, К. (1974), *Из истории русско-армянских литературных и культурных отношений*, Ереван, изд-во АН АрмССР, 368 [Grigoryan, K. (1974), *Iz istorii russko-armyanskikh literaturnikh i kultur-nikh otnoshenii*, Yerevan, izd. AN ArmCCR, 368]:

LITERARY AND HISTORICAL VALUE OF GRIGOR KHALDARYAN'S PRINTING HOUSE'S PUBLICATIONS

DONARA MKRTCHYAN

Faculty of Oriental Studies of St. Petersburg State University
Ph. D. (Philological Sciences)

Keywords: Grigor Khaldaryan, printing work, translation activity, reference book, literary heritage.

The Armenian literary life in St. Petersburg has been formed since the 1760s, when the local Armenian community led by the Lazarians and with the support of the Armenian Diocese of Russia began to raise questions that included pan-Armenian issues. Along with revitalization of literary and cultural life, with the efforts of Arch. Hovsep Arghtyun and Grigor Khaldarian, a printing house was established in S. Petersburg, where the first book was printed in 1781. The printing house continued his activity in St. Petersburg until 1788, after which was moved to New Nakhichevan, and later to Astrakhan. 16 books with religious and secular content were printed. The prints are distinguished by the features characteristic of Armenian printing art.

**ՀԱԽՀ ԱՐՏԳՈՐԾԺՈՂԿՈՄԱՏԻ «ԲԻԼԵՏԵՆ»-Ի
ՆՈՐԱՀԱՅՏ ՀԱՄԱՐԸ***

ՀՏԴ: 070(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-76

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Պալատության ինստիտուտ
Պալատական գիտությունների թեկնածու**

ORCID: [0009-0009-3062-2285](https://orcid.org/0009-0009-3062-2285)

Խորհրդային շրջանում Հայաստանում հրատարակված պարբերական մամուլի վերաբերյալ առկա են մատենագիտական ցանկեր և ուսումնասիրություններ: Սրանով հանդերձ՝ ի հայտ են գալիս 1920-ական թվականներին հրատարակված պարբերականների նոր համարներ, որոնք առ այսօր պարբեր պատճառներով հասանելի չեն եղել հետազոտողներին:

Սույն հետազոտության մեջ ներկայացնում ենք ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղեկատու բաժնի հրատարակած «Բիլետեն»-ի 1922 թ. մարտի 15-ին տպագրված համարը, որը հայտնաբերել ենք Հայաստանի ազգային արխիվում: Նշենք, որ սույն պարբերականի որոշ համարներ պահպանվում են Հայաստանի ազգային և ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարաններում:

There are bibliographic lists and studies on the periodical press published in Armenia during the Soviet period. Along with this, new issues of periodicals published in the 1920s, which have not been available to researchers for various reasons until now, are appearing.

In this research, we present the 1922 "Bulletin" published by the reference department of the People's Commissariat of Foreign Affairs of the

* Ներկայացվել է 20.06.2024, ընդունվել է տպագրության 26.06.2024:
The article was submitted on 20.06.2024, accepted for publication on 26.06.2024.

USSR. the issue printed on March 15, which we found in the National Archives of Armenia. It should be noted that some issues of this periodical are preserved in the National Library of Armenia and the National Academy of Sciences of Armenia.

Ինչպես հղել՝ Սուքիասյան, Հ. (2024), ՀՍԽՀ Արտգործօղկումատի «Բիւլետեն»-ի նորահայտ համարը, *Լրագու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 76–82. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-76](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-76)

How to cite (APA style): Sukiasyan, H. (2024), The new issue of the “Bulletin” of the Committee of Foreign Affairs of Arm.SSR, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 76-82. [https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-76](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-76)

1920 թ. դեկտեմբերին Հայաստանի խորհրդայնացումից հետո փակվեցին նախկինում տպագրվող պարբերականները, և սկսեցին հրատարակվել միայն կոմունիստական-խորհրդային ուղղվածություն ունեցող թերթեր և ամսագրեր: Խորհրդային Հայաստանի իշխանությունները առաջնահերթ էին համարում պարբերականների հրատարակումը՝ կոմունիստական-խորհրդային գաղափարները բնակչության լայն շրջանակում տարածելու տեսակետից:

Ի շարս մամուլի այլ ենթաճյուղերի՝ Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետությունում (ՀՍԽՀ) 1920-ական թվականների սկզբից սկսեցին հրատարակվել նաև գերատեսչական պարբերականներ: Նման հրատարակություններ ունեին ժողովրդական կոմիսարիատներից շատերը: Գերատեսչական պարբերականի առջև խնդիր էր դրված տվյալ ոլորտի գործունեությունը լուսաբանելուն զուգահեռ ներկայացնել Խորհրդային Հայաստանի քաղաքական ուղղվածությունը, պետության և կոմունիստական կուսակցության վարած քաղաքականությունը:

Այս պարբերականների թվին է դասվում 1921–1922 թթ. ՀՍԽՀ արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատի տեղեկա-

տու բաժնի հրատարակած «Բյուլետեն»-ը: Այն արտաքին տեսքով և նյութերի ընտրությամբ որոշակի նմանություն ունի Խորհրդային Ռուսաստանի արտգործոժողկոմատի «Бюллетень народного комиссариата иностранных дел РСФСР» պարբերականի հետ, սակայն, ի տարբերություն վերջինի, այստեղ, Խորհրդային Հայաստանի արտաքին քաղաքականությանն ու արտաքին գործերի ժողկոմատի գործունեությանը զուգահեռ, մեծ չափով լուսաբանվում էին նաև Արտգործոժողկոմատի գործառույթներին չվերաբերող տարբեր հարցեր (սոցիալ-տնտեսական հարաբերություններ, գյուղատնտեսություն, կրթամշակութային կյանք և այլն), հրատարակվում տարբեր կոչեր, հայտարարություններ: Ի դեպ, պարբերականի նյութերի մի մասն արտատպված էր «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթի համարներից, որոշ հոդվածներ էլ «Բիւլետեն»-ում տպագրվելուց հետո արտատպվել են «Խորհրդային Հայաստան»-ում:

Պարբերականի առաջին էջում, որը միաժամանակ շապիկն է, նշված է անվանումը («Հայաստանի Սոցիալիստական Խորհրդային Հանրապետություն: Արտաքին գործերի ժողովրդական կոմիսարիատ: Ինֆորմասիոն բաժին: Բիւլետեն»), կարգախոսը («Պրոլետարներ բոլոր երկրների, միացէ՛ք»), հերթական համարը, տպագրության վայրը (Երեւան), հրատարակման ամիսը կամ ամսաթիվը: Խմբագրակազմի, հոդվածագիրների, տպաքանակի, տպարանի մասին նշում չկա:

Խորհրդային Հայաստանի մամուլն ուսումնասիրողները և մատենագետները բավարար ուշադրության չեն հատկացրել սույն պարբերականին՝ սահմանափակվելով սոսկ հիշատակումով կամ մեկ-երկու նախադասությամբ (ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 113; ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 345; ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 139; ԱՎԱԳՅԱՆ 1989, 139-194):

ՀՄԽՀ արտգործժողկոմատի տեղեկատու բաժնին ու նրա հրատարակած պարբերականին անդրադառնալու առիթներ նախկինում արդեն ունեցել ենք (ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2008ա, 87-93; ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2008բ, 235-243; ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2010, 295-304; ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2014, 172-183): Մեր ուսումնասիրությունները ցույց են տվել, որ հրատարակվել է պարբերականի 10 համար: Առաջին համարը տպագրվել է 1921 թ. հունիսին, վերջինը՝ Արտաքին գործերի ժողկոմատի լուծարման գործընթացի մեկնարկին՝ 1922 թ. մարտին: Պարբերականի համարները խմբագրում և հիմնական կազմակերպչական աշխատանքը կատարում էր ժողկոմատի տեղեկատու բաժնի վարիչ, կոմունիստ Գեղամ Անտելեայանը, ով նաև հրատարակվող վերլուծական նյութերի որոշ մասի հեղինակն էր: Պարբերականի նյութերը մեքենագրում էր Արտգործժողկոմատի աշխատակից էվելինա Աբրահամյանը: Այն տպագրվում էր Ռազմժողկոմատի զինվորական շտաբի տպարանում:

Սույն պարբերականի վերջին՝ 10-րդ համարը հայ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում չի հիշատակվում: Այն առկա չէ նաև ՀՀ գրադարաններում: Մեր գիտահետազոտական աշխատանքների ընթացքում Հայաստանի ազգային արխիվի թիվ 114 ֆոնդում (ՀՄԽՀ արտաքին գործերի կոմիսարիատ) հայտնաբերել ենք այդ համարը: Այն հրատարակվել է 1922 թ. մարտի 15-ին, բաղկացած է 32 էջից, պահպանվածությունը բավարար է¹: Հետազոտողներին հասանելի դարձնելու նպատակով պարբերականի լուսապատճենը փոխանցել ենք ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանին՝ Համահայկական թվանշային գրադարանում տեղադրելու նպատակով: Այն հասանելի է հետևյալ հղումով՝

¹ ՀԱԱ, ֆ. 114, ց. 2, գ. 5, թթ. 87-102 շրջ.: Արխիվային գործում պահվում են նաև պարբերականի նախորդ համարները:

[https://arar.sci.am/dlibra/publication/406820#structure:](https://arar.sci.am/dlibra/publication/406820#structure)

Բովանդակություն

Բիլլետեն 10, Երեւան, 15 մարտի 1922 թ.

1. Հայաստանի Կոմ. Կուս. Համահայաստանեան Առաջին Համագումարը, էջ 1-2:

2. Հայաստանի Կոմ. Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի գործունէութիւնը և կուսակցութեան քաղաքականութիւնը, էջ 2-3:

3. Քաղաձքներ՝ ընկ. Մեասնիկեանի զեկուցումից, էջ 3-5:

4. Հայաստանի Խորհուրդների Առաջին Համագումարը, էջ 5-6:

5. Համագումարի օրակարգը, էջ 7:

6. Քաղաձքներ՝ ընկ. Մեասնիկեանի զեկուցումից Ժողովրդական Կոմիսարների Խորհրդի գործունէութեան մասին, էջ 7-12:

7. Քաղաձքներ՝ Հողժողովոմ ընկ. Արամայիս Երզնկեանի զեկուցումից, էջ 13-15:

8. Քաղաձքներ՝ Սոցիալիստական Ապահովութեան Ժողովրդական Կոմիսար ընկ. Թառոմեանի զեկուցումից, էջ 15-16:

9. Քաղաձքներ՝ Պարենաւորման Ժողովրդական Կոմիսար ընկ. Իւանեանի զեկուցումից, էջ 16-17:

10. Քաղաձքներ՝ ընկ. Պիչիկեանի Կօօպերացիայի մասին արած զեկուցումից, էջ 18:

11. Քաղաձքներ Արտաքին գործերի Ժող. Կոմիսար ընկ. Ազքանազ Մռավեանի զեկուցումից, էջ 18-20:

12. Համագումարի վերջին նիստը, էջ 20-21:

13. Կենտրոնական Գործադիր Կոմիտէի կազմը, էջ 21-22:

14. Հայաստանի Բանւորների, Գիւղացիների և Կարմիր Զինւորների Պատգամաւորական Խորհուրդների Առաջին Համագումարի ՈՂՋՈՅՆ ԴԻՄՈՒՄԸ Համառուս. Կենտ. Գործ. Կոմիտէի նախագահ ընկ. Կալինինին, էջ 22-23; Հայաստանի Խորհուրդների Առաջին Համագումարի

մարի Դիմումը Հայկական Կարմիր Բանակին, էջ 23; Հայաստանի բան-
ւորների, գիւղացիների և Կարմիր Ձինւորների Անդրանիկ Համագումարի
դիմումը Հայաստանի բանւորներին և աշխատաւոր մասսաներին, էջ 24;
ԵՂԲԱՅՐԱԿԱՆ ԴԻՄՈՒՄ. Հայաստանի բանւորների, գիւղացիների և
Կարմիր Ձինւորների Պատգամաւորական Խորհուրդների Առաջին Հա-
մագումարի ԿՈՉԸ Տաճկաստանի աշխատաւորներին, էջ 25; ԴԻՄՈՒՄ
Գաղութների Հայ աշխատաւորութեան, էջ 25-27:

15. Անդրկովկասի Սօցիալիստական Խորհրդային Հանրապետու-
թիւնների ֆեդերատիւ պայմանագրի նախագիծը, էջ 27-29:

16. Սովը Հայաստանում, էջ 29-30:

17. Դաշնակցականների սև գործունէութիւնը Հայաստանում, էջ
30-31:

18. Թեհրանի մեր ներկայացուցչութիւնը, էջ 31:

19. Ճենովայի Կոնֆերանսը և Խորհրդային Հայաստանը, էջ 31:

20. Արտասահմանեան Հայ գաղութները և օգնութեան գործը, էջ
31-32:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱՎԱԳՅԱՆ 1989 – Ավագյան, Ս. (1989), *Համառոտ ակնարկներ Սո-
վետական Հայաստանի պարբերական մամուլի պատմության (1920–1930
թթ.)*, Երևան, Հայաստան, 209 էջ [Avagyan, S. (1989), *Hamarot aknarkner So-
vetakan Hayastani parberakan mamuli patmutyan (1920-1930 tt.)*, Yerevan,
Hayastan, 209 p.];

ԲԱԲԼՈՅԱՆ 1986 – Բաբլոյան, Մ. (կազմ.) (1986), *Հայ պարբերա-
կան մամուլը (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 470 [Babloyan, M. (comp.)
(1986), *Hay Parberakan Mamuly. Matenagitakan Hamahavak Ts'uts'ak*), Yere-
van, Academy of Sciences of Arm.SSR, 470];

ԼԵՎՈՆՅԱՆ 1934 – Լևոնյան, Գ. (կազմ.) (1934), *Հայոց պարբերա-
կան մամուլը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, XXXI, 228, 3 [Levonyan, G.

(comp.) (1934). *Hayots' Parberakan Mamuly (1794-1934)*, Yerevan, Pethrat, XXXI, 228, 3];

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970 – Կիրակոսյան, Ա. (կազմ.) (1970), *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 621 [Kirakosyan, A. (comp.) (1970). *Hay Parberakan Mamuly (1794-1967)*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 621];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2008ա – Սուքիասյան, Հ. (2008), ՀՍԽՀ արտգործ-ժողկոմատի տեղեկատու բաժնի բյուլետենը (1921–1922 թթ.), *Լրաբեր հասարակական գիտությունների* (Երևան), 3(3), էջ 87-93 [Sukiasyan, H. (2008), HSKHH artgortszhoghkromati teghekatu bazhni byuleteny (1921-1922 tt.), *Herald of the Social Sciences* (Yerevan), 3(3), pp. 87-93];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2008բ – Սուքիասյան, Հ. (2008), ՀՍԽՀ արտգործ-ժողկոմատի «Բյուլետենը» հակադաշնակցական գաղափարաքարոզչական պայքարում (1921–1922 թթ.), *Բանբեր Հայաստանի արխիվների* (Երևան), 2(112), էջ 235-243 [Sukiasyan, H. (2008), HSKHH artgortszhoghkromati “Byuleteny” hakadashnaktsakan gaghaparaqarozchakan payqarum (1921-1922 tt.), *Bulletin of Armenian Archives* (Yerevan), 2(112), pp. 235-243];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2010 – Սուքիասյան, Հ. (2010), ՀՍԽՀ արտգործ-ժողկոմատի տեղեկատու բաժնի գործունեությունը (1921–1922 թթ.), *Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու* (Երևան), 11, էջ 295-304 [Sukiasyan, H. (2010), HSKHH artgortszhoghkromati teghekatu bazhni gortsuneutyuny, *The problems of the history of Armenia: a collection of scientific articles* (Yerevan), 11, pp. 295-304];

ՍՈՒՔԻԱՍՅԱՆ 2014 – Սուքիասյան, Հ. (2014), ՀՍԽՀ արտաքին գործերի ժողկոմատի հրատարակչական գործունեությունը 1921–1922 թվականներին, *Հայոց պատմության հարցեր. գիտական հոդվածների ժողովածու* (Երևան), 15, էջ 172-183 [Sukiasyan, H. (2014), The publishing activity of the people's commissariat of foreign affairs of SSRA in 1921-1922, *The problems of the history of Armenia: a collection of scientific articles* (Yerevan), 15, pp. 172-183];

**«ԺԱՄԱՆԱԿ» ԱՆՎԱՆՈՒՄԸ ԿՐՈՂ ՄԻ ՀԱՎԵԼՎԱԾԻ
ՏՊԱԳՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԹՎԻ ԱՌՆՉՈՒԹՅԱՄ***

ՀՏԴ: 93(=919.81)(56)+070

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-83

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան

ORCID: [0000-0002-2644-2507](https://orcid.org/0000-0002-2644-2507)

ԱՆՈՒՇ ԹՐՎԱՆՅ

«Արեւելք» լրատուական կենտրոն

ORCID: [0009-0007-0117-3308](https://orcid.org/0009-0007-0117-3308)

2019 թ. Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան «Հայկական համայնքների բաժանմունքը», ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հետ համատեղ, առաջարկեց թվայնացնել Մխիթարեան միաբանութեան Վիեննայի Մենաստանի գրադարանում պահվող հայերեն թերթերի և հանդեսների մինչև 1920 թ. հրատարակված լրակազմերը: Աշխատանքների կատարման ընթացքում ի հայտ եկավ Պոլսի «Ժամանակ» օրաթերթի մի հավելված, որը ներառված չի եղել մատենագիտական համահավաք ցանկերից ոչ մեկում: Սույն հոդվածի նպատակն է ճշտել այդ հավելվածի տպագրության տարեթիվը:

In 2019 digitization of the Armenian newspapers and periodicals being preserved in the Mekhitarist Monastery of Vienna started. The purpose of this article is to summarize the results of the project's first stage. During the work, a satirical Supplement of the daily newspaper "Zhamanak" (Istanbul) was described, which was not indicated in any of the union bibliographic lists. The purpose of this article is to correct the date of publication of that Supplement.

* Ներկայացվել է 22.03.2024, ընդունվել է տպագրության 21.05.2024:
The article was submitted on 22.03.2024, accepted for publication on 21.05.2024.

Ինչպես հղել՝ Զարգարյան, Տ., Թրվանց Ա. (2024), «Ժամանակ» անվանումը կրող մի հավելվածի տպագրության տարեթվի առնչությամբ, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 83-89.
[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-83](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-83)

How to cite (APA style): Zargaryan, T., Trvants, A. (2024), Bibliographic correction on the publication date for the “Jamanak” newspaper’s satirical supplement, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 83-89.
[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-83](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-83)

«Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի» հանդեսի 2023 թ. 2-ում «Մխիթարեան միաբանութեան Վիեննայի մենաստանի պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում» հոդվածում (ԶԱՐԳԱՐՅԱՆ, 2023, 5-29) նկարագրված էր «Ժամանակ» անվանումով մի հավելված, որն ըստ պոլսահայ գրող Թորոս Ազատեանի՝ Պոլսի «Ժամանակ» օրաթերթի գունավոր հավելվածն է եղել: 1925 թ. Պոլսի «Ժամանակ» օրաթերթի հիմնադիրները սկսել են թերթը ժողովրդականացնելու ծրագիր, որի շրջանակներում նույն թվականին հրատարակել են «Ժամանակ»-ի երգիծական հավելվածը (ԱԶԱՏԵԱՆ 1948, 190):

Հավելվածի՝ մեզ հասանելի երկու թողարկումների էջերից ոչ մեկում առկա չէ տպագրության տարեթիվը: Որոշակի մատենագիտական պրպտումներից հետո տպագրության տարեթիվը նշվեց 1932? թ.:

Հոդվածի հրապարակվելուց հետո, քննարկումների արդյունքում, կատարվեց տպագրության թվականի փոփոխություն՝ նշելով 1925? թ.:

Սույն փոփոխության համար հիմք հանդիսացան հետևյալ նոր եզրահանգումները.

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ա. 1928 թ. Թուրքիայում իրականացված բարեփոխման արդյունքում որոշում կայացվեց անցում կատարել լատինագիր այբուբենի՝ դրանով իսկ վերջ դնելով արաբատառ այբուբենի օգտագործմանը: Օրենքն ուժի մեջ մտավ 1928 թ. նոյեմբերի 3-ից: Նոր այբուբենի կիրառման համար կարճ անցումային շրջան սահմանվեց, որից հետո օրենքով արգելված էր արաբական տառերի օգտագործումը: Նշենք, որ «Ժամանակ» օրաթերթի 1928 թ. օգոստոսի 21-ի թիվ 6546-ից սկսած՝ թերթի արաբատառ անվանումն արդեն փոխարինել էր լատինտառ JAMANAK-ով: Մինչդեռ մեզ մոտ առկա «Ժամանակ» օրաթերթի սույն հավելվածի երկու թողարկումներում էլ վերնագրային հատվածում թերթի անվանումը նշված է հայերեն և արաբատառ: Այսինքն, հավելվածները տպագրվել են մինչև 1928 թ. սեպտեմբեր ամիսը:

բ. Հավելվածի համարներում կան հոդվածներ, որոնցում անդրադարձ է արվում տեղապահին: Այդ շրջանում Պոլսի պատրիարքական տեղապահ է եղել Գէորգ արք. Արսլանեանը, ինչի մասին վկայություն կա «Ժամանակ» օրաթերթի թիվ 9192 թողարկման մեջ (30-ը ապրիլ 2010 թ.)՝ «Պատմութեան մէջ պատուականներ» խորագրի ներքո. «Զաւէն Պատրիարք Տէր Եղիաեանի 1922 թուականին արտասահման մեկնումէն յետոյ Գէորգ արքեպիսկոպոս Արսլանեան Պատրիարքական Տեղապահի փափով եւ պատասխանատու պաշտօնը վարած է շուրջ հինգ տարի (1922-1927), անվթար պահպանելով ու պաշտպանելով ազգային իրերու կարգը»:

Գէորգ արք. Արսլանեանից առաջ և հետո եղել են պատրիարքներ՝ հետևյալ հերթականությամբ.

- Զաւէն արք. Տէր Եղիաեան (1913-1915) եւ (1918-1922):
- Գաբրէլ արք. Ճէվահիրճեան կաթողիկոս-պատրիարք փոխանորդ (1916-1918):

- Մեսրոպ Ա. Մշեցի Նարոյեան Պատրիարք (1927-1944):

Հիմք ընդունելով վերոնշյալը՝ «Ժամանակ» օրաթերթի հավելվածի հրատարկության թվականը սահմանում ենք 1922-ից մինչև 1927 թվականը ներառյալ, որպեսզի համընկնի Գեորգ արք. Արսլանեանի՝ տեղապահ լինելու ժամանակահատվածի հետ:

գ. Հավելվածի երկու թողարկումների Ա երեսներին առկա են ծաղրանկարներ, որոնցում պատկերված է 1925-1928 թթ. Անգլիայի ներխուժումը Չինաստան (տե՛ս նկ. 1):

Այսպիսով, կարող ենք փաստել, որ մեր ձեռքի տակ եղած Հավելվածի երկու թվերը 1925-1927 թթ. թողարկումներ են:

Վարկածը շրջանառության մեջ կարող ենք դնել ևս մի փաստարկով. Թորոս Ազատեանի գրքի 190-րդ էջում առկա է Հավելվածի թիվ 6 թողարկման նկարը (տե՛ս նկ. 2), որում ներկայացված է երկխոսություն կնոջ և տղամարդու միջև: Երկխոսության մեջ կինն արձագանքում է. «...որովհետև փետրուարը 28 օր է»: 1925, 1926, 1927 թթ. փետրվար ամիսը եղել է 28 օր, իսկ 1924 և 1928 թթ.՝ 29 օր է եղել:

դ. Թերթելով «Ժամանակ» օրաթերթի թողարկումները՝ 1924 թվականից սկսած, տեսնում ենք, որ հավելվածի մասին ծանուցումները թերթում սկսում են հայտնվել 1925 թվականի մայիսից, և մոտ երկու ամիս՝ ամեն երեքշաբթի, հինգշաբթի և շաբաթ օրերին: Թերթը տպագրել է երգիծական այդ գունավոր հավելվածն ու անվճար տրամադրել թե՛ գնորդներին, թե՛ բաժանորդներին: Հավելվածի յուրաքանչյուր թողարկման մասին մեկ օր առաջ և տպագրության օրը ծանուցվել է ընթերցողներին՝ տեղեկացնելով, որ թերթի հետ պա-

հանջեն նաև օրվա անվճար նվերը՝ պատկերազարդ երգիծական հավելվածը¹ (տե՛ս նկ. 3):

Երկու ամիս հետո ծանուցումներն ընդհատվել են. հետագա տարիների համարներում չկա երգիծական հավելվածի մասին որևէ ծանուցում: Ենթադրվում է, որ այն դադարել է լույս տեսնել:

Թերթում չկա նաև տպագրության դադարի մասին որևէ հայտարարություն, սակայն «Ժամանակ» օրաթերթը ընդմիջումներով իր էջերում տպագրել է երգիծական բնույթի նյութեր՝ այդպիսով ցույց տալով, որ ժանրը հոգեհարազատ է թե՛ թերթին, թե՛ ընթերցողներին:

Հուսանք, որ ժամանակի ընթացքում ի հայտ կգան «Ժամանակ»-ի երգիծական հավելվածի այլ թողարկումներ ևս, ինչի արդյունքում կունենանք ավելի հստակ պատկեր, թե որ թվական(ներ)ին է Հավելվածը լույս տեսել և թե քանի համար է թողարկվել:

Այսպիսով, հիմք ընդունելով վերը շարադրվածները, մենք Հավելվածի տպագրության հնարավոր տարեթիվը սահմանում ենք 1925:

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԱԶԱՏԵԱՆ, Ա. թ. – Ազատեան, Թ. (1948), *Ժամանակ*=*Jamanak: Քառասնամեայ յիշատակարան 1908-1948*, Ստամբուլ, տպ. Պէճիտեան, 224 [Azatyan, T. (1948), *Zhamanak. Qarasnamya hishatakaran 1908-1948*, Stambul, tp. Pechityan, 224];

ԶԱՐԳԱՐՅԱՆ, 2023 – Զարգարյան, Տ. (2023), Մխիթարեան միաբանութեան Վիեննայի մենաստանում պահվող պարբերականների թվայնացման նախագծի առաջին փուլի արդյունքների ներկայացում, *Լրատու Հայկական գրադարանային ասոցիացիայի* (Երևան), 2(2), 5-29 [Zargaryan,

¹ Երգիծական հավելվածի տպագրության օրերի անվանումները՝ Գշ., Եշ., Շբ., համապատասխանում են երեքշաբթի, հինգշաբթի, շաբաթ օրերին: Տե՛ս՝ Վիքիպեդիա <https://tinyurl.com/mvct2h5x> (21.05.2024):

T. (2023), Digitalization of the periodicals being preserved in the Mekitarist monastery of Vienna. Presentation of first phase results, *Herald of the Armenian library association* (Yerevan), 2(2), 5-29]:

Լուսանկարների ցանկ

Նկար 1. Պատկեր «Ժամանակ» օրաթերթի երգիծական հավելվածից՝ Անգլիայի ներխուժումը Չինաստան:

Նկար 2. Պատկեր «Ժամանակ» օրաթերթի երգիծական հավելվածից:

Նկար 3. Ծանուցումներ «Ժամանակ»-ի երգիծական հավելվածի մասին:



Նկ. 1.

**Պատկեր «Ժամանակ» օրաթերթի երգիծական հավելվածից՝
Անգլիայի ներխուժումը Չինաստան**



Նկ. 2.

**Պատկեր
«Ժամանակ» օրաթերթի
երգիծական հավելվածից**

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՎԱՂԸ ՊԱՎԱՆՁԵՑԷՔ ՏՐՈՒԻՉՆԵՐԷՆ
 «ԺԱՄԱՆԱԿ»Ի ԵՐԳԻԾԱԿԱՆ ՊԱՏԱԵՐԱԶԱՐԳ ՆՈՒԷՐԸ ՉՐԻ

Այսօր ցրուիչներէն պահանջեցէք
 «ԺԱՄԱՆԱԿ»Ի ԵՐԳԻԾԱԿԱՆ ՆՈՒԷՐԸ

Կ'ՈՒՉԷՔ ԿՈՒՇՏ ՈՒ ԿՈՒՌ ԽՆԴԱԼ
 Պահանջեցէք ցրուիչներէն ԳԶ., ԵԶ. եւ ԾՔ. օրերը
 «Ժամանակ»ի երգիծական յաւելումաժը
 որ կը արուի բերքին հետ միասին ձրիօրէն: Մեզիծական խիստ նոյն բաժի-
 նով մը եւ ընտանեկան կեանքէ խիստ զուարճալի բերքով մը:
 @

Նկ. 1.

Ծանուցումներ «Ժամանակ»-ի երգիծական հավելվածի մասին

**ՀՀ ԳԱԱ ՀԻՄՆԱՐԱՐ ԳԻՏԱԿԱՆ
ԳՐԱԴԱՐԱՆԻ ՀԱՎԱՔԱԾՈՒՆԵՐԸ.**

ՆՈՐ ՁԵՌՔԵՐՈՒՄՆԵՐ *

ՀՏԴ: 025.29(479.25)

DOI: 10.54503/2953-8092.2024.1(3)-90

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

**ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան
Քանաասիրական գիտությունների թեկնածու**

ORCID: [0000-0002-7989-0514](https://orcid.org/0000-0002-7989-0514)

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուների հետ աշխատանքները մեկնարկել են 2023 թվականից, սակայն սույն հոդվածով ներկայացվող արդյունքները վերաբերվում են 2024 թ. առաջին կիսամյակին:

Նշենք, որ հավաքածուների հետ շարունակական աշխատանքի արդյունքում ի հայտ են գալիս հայերեն տպագիր նոր անուններ կամ առ այսօր ընթերցողին անհասանելի տպագիր նյութեր, որոնց վերաբերյալ տեղեկությունները տեղադրվում են գրադարանի սոցիալական հարթակում:

Սույն մատենագիտական ճշգրտումները նպատակ ունեն արժևորել ձեռքբերումները հայ տպագրության պատմության ամբողջականացման տեսանկյունից:

The works with the collections of the Fundamental Scientific Library of NAS RA are started in 2023, but the presented results refer to the first semester of 2024.

It should be noted that as a result of continuous work with the collections, new Armenian printed names or printed materials inaccessible to the rea-

* Ներկայացվել է 18.05.2024, ընդունվել է տպագրության 24.06.2024:
The article was submitted on 18.05.2024, accepted for publication on 24.06.2024.

der appeared. the information about which is posted on the social platform of the library

These bibliographic corrections aim to value the achievements from the point of view of completing the history of Armenian printing.

Ինչպես հղել՝ Գրիգորյան, Մ. (2024), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուները. նոր ձեռքբերումներ, *Լրալու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(3), 90-102.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-90](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-90)

How to cite (APA style): Grigoryan, M. (2024), Collections of the Fundamental Scientific Library of the NAN RA: new achievements, *Herald of the Armenian Library Association*, 1(3), 90-102.

[https://doi.org/10.54503/2953-8092.2024.1\(3\)-90](https://doi.org/10.54503/2953-8092.2024.1(3)-90)

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանում առկա 28 հավաքածուների հետ աշխատանքները կրում են շարունակական բնույթ, ինչի արդյունքում հայ տպագիր ժառանգությունը դառնում է առավել ամբողջական: Աշխատանքները մեկնարկել են 2023 թ. սկզբից, իսկ առաջին արդյունքները հրապարակել ենք ամսագրի առաջին համարում (ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023, 73-96): 2024 թ. առաջին կիսամյակում գրադարանի գրապահոցի աշխատակիցները, բաժնի վարիչ Հասմիկ Ղազարյանի գլխավորությամբ, շարունակել են հավաքածուների վերահաշվառման աշխատանքները՝ զուգահեռ համեմատելով հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերի հետ: Արդյունքում ի հայտ են եկել կամ նորանուն նյութեր, կամ նյութեր, որոնց մասին մենք տեղյակ էին միայն մատենագիտական աղբյուրներից, սակայն փաստացի դրանց բացակայությունը թույլ չէր տալիս ամբողջացնել մատենագիտական նկարագրությունները: Նախորդ վեց ամիսների ընթացքում ի հայտ եկած նոր նյութերի վերաբերյալ հայտարարությունները հասանելի են դարձել գրադարանի սոցիալա-

կան հարթակի միջոցով: Սույն հոդվածով ներկայացնում ենք այդ ձեռքբերումներից մի քանիսը:

Հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում չներառված տպագրություններ

1. Տէրիսաաստէթ Թիճարէթ օտասընըն թէշքիլի իլէ օտայը մէգքիւրուն վազայիֆինի միւլէյեհին գալէմէ այընըլա պիլ իսթիզան մէրիյեթի ահքեամընա իրատէի Սէնիեէյի հագրէթի Բատիշահի միւլէալլիգ պուրուվմուշ օլան լայիհա իլէ օտայը մէգքիւր նիզամնամէի տախիլիսինէ զէյլէն իլավէսի գարարկիր օլան մէվատտը նիզամիեէ տիր = Կ-Պօլսոյ Վաճառականական սենեկին կազմութեան եւ անոր պարտաւորութեանց նկատմամբ շարադրուած եւ գործադրութիւնը Կայսերական հրամանաւ հաստատուած կանոնագիրն է, եւ ետքէն նոյն սենեկին ներքին սահմանադրութեան վրայ իբրեւ յաւելում որոշուած կանոնագրութիւնն է.- [Կ. Պոլիս]: Տպագրութիւն Մէճմուայը հավատիս լրագրոյ, 1882.- 22 էջ, շարվածքը՝ 21,5x13,5 սմ:

Մեկ մամուլ, մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր, զուգահեռ՝ հայերեն և հայատառ թուրքերեն: Օգտագործված է նաև նոտրգիր: Մանր զարդանախշեր և վերջազարդեր: Շապիկը՝ զարդափակ, հայերեն և հայատառ թուրքերեն, վրան՝ զարդանկար:

Գրքի մատենագիտական նկարագրությունը չի ներառվել հայ և հայատառ թուրքերեն գրքերի մատենագիտական համահավաք ցանկերի մեջ: Տպագրության վայրի տվյալը վերականգնվել է ըստ նշված հասցեի:

Մեզ հայտնի միակ օրինակը պահպանվում է ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Արշակ Ալպոյաճյան» հավաքածուում: Սույն օրինակը տիտղոսաթերթ չունի, վերակազմված է, վրան փակցված է բնօրինակ շապիկը: Գրքի շապիկին, 1-ին, 21-րդ էջերին՝ Արշակ Ալպոյաճյանի դիվանի կնիքը: Գիրքը գտնվում է լավ վիճակում, մասամբ վնասված է վերջին թերթը: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/402063/edition/372128>

2. Հիմնական կանոնագիր Աղքատասէր ընկերութեան հաստատեալ ի 1 մայիս 1886.- Կ. Պոլիս: Ա. հ., 1886.- [16] էջ:

Մեկ մամուլ, մամուլանիշ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Շարվածքը՝ 16x9 սմ:

Մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է գրադարանի «Արշակ Ալայոյան» հավաքածուում: Այն վերակազմված է, չունի շապիկ և տիտղոսաթերթ: Մեզ հասել է 16 էջ, սակայն վստահաբար պետք է ունենա շարունակություն, քանի որ վերջին ցանկը կիսատ է: Պահպանված օրինակի 2-3-րդ էջերը վնասված և վերականգնված են, 3-4-րդ էջերին առկա են կարմիր գրիչով ձեռագիր նշումներ: Գրքի մատենագիտական նկարագրությունն արվել է՝ ըստ մեզ հասած տվյալների, որոնց հիման վրա նշվել է տպագրության վայրն ու տարեթիվը:

Սույն տպագրությամբ հետազոտողին հասանելի են դառնում Կ. Պոլսի Աղքատասիրաց ընկերության հիմնադրման սկզբունքներն ու գործունեության վերաբերյալ մանրամասները: Տե՛

<https://arar.sci.am/dlibra/publication/401935/edition/372051>

3. Կանոնագիր դասուց դպրաց Մայր եկեղեցւոյ եւ այլոց եկեղեցեաց Կոստանդնուպոլսոյ /Հաստատեց Մաղաքիա արք. Կ. Պոլսոյ Պատրարք.- Կ. Պոլիս: Ա. հ., 1904.- 4 չհ. էջ:

Մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Առանց տիտղոսաթերթի և շապիկի: Մատենագիտական տվյալները վերցվել են 2-րդ չհ. էջից. «Հաստատեցաւ Կանոնագիրս ի Կրօնական ժողովոյ Ազգային Կեդրոնական Վարչութեան յաւուր տօնի Սրբոց Դեոնոդեանց յ3 Փետրուարի 1904 տարւոյ, և ըստ այնմ հրամայեմք ի հրատարակութեան ի գործադրութեան: - Ի Պատրիարքարանիս, ի 5 Փետրուարի

1904, Պատրիարք Կոստանդնուպոլսոյ Մաղաքիա արքեպիսկոպոս»:
Շարվածքը՝ 31x16 սմ:

Հայաստանում մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Սույն օրինակը վերակազմված է, չունի շապիկ և տիտղոսաթերթ, երկրորդ թերթը մասամբ պատռված է: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/403901/edition/373670>

4. Համարատուութին Բերայի Պարտուց հատուցման յանձնաժողովի.- Կ. Պոլիս: Տպ. Մ. Յովակիմեան, 1922, 39 էջ, շարվածքը՝ 20x12,5 սմ:

Ութաձալ, մամուլանիշերը՝ արաբական թվանշաններով: Բնագիրը՝ բոլորգիր: Բնագրում՝ մանր զարդանախշեր, աղյուսակներ, նաև մեկ ներդիր թերթ-աղյուսակ. «Քաղուած հաշուեկշռոց Պարտուց հատուցման յանձնաժողովոյ Բերայի, 1 յունիս 1893 է ցվերջ օգոստոս 1921 տարւոյ»: Շապիկին և տիտղոսաթերթին՝ մանր զարդանախշեր:

Գրքի մեզ հայտնի երկու օրինակները պահպանվում են գրադարանի «Արշակ Ալպոյաճյան» հավաքածուում: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/400901/edition/371014>

5. Ծրագիր-կանոնագիր արժանթինաբնակ այնթապցիներու հայրենակցական միութիւն հիմնուած 1929-ին, Պուլէնոս Այրէս.- Պ. Այրէս: Տպ. Մասիս, Ա. Երկանեան, 1929.- 12 էջ, 1 ներդիր:

Մեկ եռաձալ մամուլ, մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Շապիկին, տիտղոսաթերթին և բնագրում՝ զարդանախշեր: Շապիկը՝ զարդափակ: Տպագրության թվականը նշված է տպագրական սխալով՝ 1329: Շարվածքը՝ 15,5x9 սմ:

Մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Սույն օրինակը գտվում է գերազանց վիճակում: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/402573/edition/372628>

6. Հիմնական կանոնագիր ամերիկաբնակ այնթապցիներու միության հաստատուած օգոստոս 17, 1924, Պոսթըն, Մէս: Գ տպագրութիւն.- Պոսթըն: Ա. հ., 1933.- 12 էջ, շարվածքը՝ 12,5x7 սմ:

Մեկ եռածալ մամուլ, մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Առանց տիտղոսաթերթի: Շապիկը՝ գծափակ, վրան՝ նկար. «Այնթապ»:

Գրքի մատենագիտական տվյալները բացակայում են հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկում: Հայաստանում մեզ հայտնի միակ օրինակը պահպանվում է գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Սույն օրինակը գտվում է գերազանց վիճակում: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/403900/edition/373669>

Հայ գրքի համահավաք մատենագիտական ցանկերում աստղանիշով՝ նշված տպագրություններ

1. Իննամսեայ տեղեկագիր Հայ որբախնամ ընկ. Գահիրէի հատուածին գործադիր ժողովին 1918 նոյեմբերէն 1919 յուլիս 31 /Հայ որբախնամ ընկերութիւն.- Գահիրէ: Տպ. Փարոս, 1922.- 26 էջ, 1 ներդիր:

Մեկ վեցածալ մամուլ, մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Շապիկին, տիտղոսաթերթին և բնագրում՝ զարդանախշեր: Շապիկը՝ զարդափակ: Շարվածքը՝ 19,5x13,5 սմ: Գրքի վերջում՝ ներդիր. «Հայ որբախնամ ընկերութիւն, Գահիրէի հատուած, Հաշուեկշիռ, 1918 նոյեմբեր 1-էն մինչեւ 31 յուլիս 1919»:

¹ Աստղանիշով նշվել են այն տպագրությունները, որոնք մատենագետները փաստացի չեն տեսել, իսկ մատենագիտական նկարագրությունը կատարել են տարբեր աղբյուրների հիման վրա:

«Հայ գիրքը 1921-1930 թվականներին» մատենագիտության մեջ գիրքը Ս. Բայրամյանի հաղորդած տեղեկությունների հիման վրա (ՀԱՅ ԳԻՐՔ 2012, 29): Հայաստանում մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Սույն օրինակը բարվոք վիճակում է, վնասված է միայն կազմը: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/402578/edition/372632>

2. Տեղեկագիր Հայ որբախնամ ընկերության Գահիրէի հատուածին վարչական ժողովոյ: Շրջան 1919 օգոստ. 17-էն 1921 դեկ. 31 (Ընդհ. ժողովին ներկայացուած 30 ապրիլ 1922) /Հայ որբախնամ ընկերութիւն.- Գահիրէ: Փարոս, 1922.- 24 էջ, 1 ներդիր էջ, շարվածքը՝ 15,5x9 սմ:

Մեկ վեցածալ մամուլ, մամուլանիշ՝ չունի: Բնագիրը՝ բոլորգիր: Շապիկին, տիտղոսաթերթին և բնագրում՝ զարդանախշեր: Շապիկը՝ զարդափակ: Գրքի վերջում՝ ներդիր. «Հայ որբախնամ ընկերութիւն, Գահիրէի հատուած, Հաշուեկշիռ, 1919 օգոստոս 1-էն մինչեւ 31 դեկտեմբեր 1921»:

«Հայ գիրքը 1921-1930 թվականներին» մատենագիտության մեջ գիրքը նկարագրվել է Ս. Բայրամյանի հաղորդած տեղեկությունների հիման վրա (ՀԱՅ ԳԻՐՔ 2012, 46): Հայաստանում մեզ հայտնի միակ օրինակը պահպանվում է գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Սույն օրինակի կազմը մասամբ վնասված է, սակայն գիրքն ամբողջությամբ բարվոք վիճակում է: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/402576/edition/372630>

3. Սաղմոս Ա. կանոն.- Ա. տ., Ա. հ., Ա. թ.- 48 էջ, շարվածքը՝ 13,5x7,5 սմ:

Տիտղոսաթերթ՝ չունի: Հիշյալ վերնագրով մեզ են հասել բազմաթիվ հրատարակություններ՝ տպագրված տարբեր վայրերում և ժամանակահատվածում: ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարան-

նի հավաքածուների ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկավ ևս մեկը, որը չի համապատասխանում մեզ հայտնի տպագրություններից որևէ մեկին: Սույն գիրքը կազմակից է «Սաղմոս Դաթի» գրքին (Կ. Պոլիս, 1832), չունի տիտղոսաթերթ, բացակայում են առաջին 6 էջերը: Գտնվում է բարվոք վիճակում: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/402064/edition/372129>

Պարբերականներ

1. Մուսայք Մասեաց: Ձայն ընկերասիրական: Հանդես տասնօրեայ /Խմբ. եւ հրատ.՝ Ա. Հայկունի.- Կոստանդնուպոլիս: Ի տպարանի Ճէմիյէթը Իլմիյէի Օսմանիյէի, Տպագրութիւն Ռ. Յ. Քիւրքճեան, 1863.-1864.

Հրատարկվել է 1857 թվականից՝ «Մուսայք Մասեաց» վերնագրով: 1863-1866 թթ. լույս է տեսել «Ձայն ընկերասիրական» ենթավերնագրով: Էջակալությունը՝ շարունակվող, յուրաքանչյուր համարը՝ 8 էջ, ընդամենը՝ 256 էջ (1863, 48 էջ, 1864, (49-256) էջ): Եղել է շաբաթաթերթ, ապա՝ ամսաթերթ, հետո՝ տասնօրեայ:

Պարբերականի մասին տեղեկություններ կան հայ մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում (ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 10; ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 376, 392-393; ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 29-30): Ա. Կիրակոսյանն այն համարել է առանձին անուն, նշել է, որ հավաքածուն պահպանվել է միայն Վիեննայի Մխիթարյան միաբանությունում, ուր կան պակաս համարներ:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Արշակ Ալպոյաճյան» հավաքածուի ուսումնասիրության արդյունքում հայտնաբերվել է պարբերականի 1863-1864 թթ. համարների համահավաք կազմը, որն առավել ամբողջական է. 1864 թ. տպագրված 13, 16, 17, 19, 21, 22, 26, 28, 29-րդ համարները բացակայում են Վիեննայի հավաքածուում: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/370656#structure>

2. Փունջ: Շաբաթաթերթ քաղաքական, գրական եւ ազգային /Տնօրէն տէր՝ Համբարձում Ս. Ալաճաճեան.- Կ. Պոլիս: Տպ. Վարդանեան, 1907.

Թերթը հրատարակվել է որպէս շաբաթաթերթ, հետո դարձել է եռօրյա, ամենօրյա հրատարակությունը, իսկ վերջում՝ կրկին շաբաթաթերթ:

Պարբերականի մասին մատենագիտական տվյալներ կան հայ պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում (ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 34; ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 182; ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 120): Ա. Կիրակոսյանը նշել է, որ 1907 թ. 2-4-րդ համարները պահպանվում են Հայաստանի ազգային գրադարանում: Հետագայում մաշտոցյան մատենադարանում հայտնաբերվել է նույն թվականի 5-րդ համարը:

ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուն ուսումնասիրելիս ի հայտ եկավ շաբաթաթերթի 15-րդ համարը, որը մեզ հասանելի միակ օրինակն է հայաստանյան հավաքածուներում: Այն բաղկացած է 8 էջից: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/341784#structure>

3. Ճմարտութիւն: Կիսամսեայ կրօնական թերթ /Արտօնատէր եւ խմբ.՝ Սոկրատ Յ. Ամիրալեան.- Մարաշ: Տպագր. Կ. Լ. Ամիրալեանի, 1919.

Թերթի մատենագիտական տվյալները ներառվել են Ա. Կիրակոսյանի (ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 378) և Մ. Բաբլոյանի (ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 126) կազմած մատենագիտական ցանկերի մեջ: Պարբերականի մասին հիշատակել է նաև Ա. Տեր Խաչատուրյանը (ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 2014, 174; ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 1966, 451):

Պարբերականի՝ առ այսօր մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուում: Այն բաղկացած է 4 էջից, շարվածքը՝ 28x20 սմ: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/400900/edition/371013>

4. Սիւն: Երկշաբաթաթերթ ազգային, գրական եւ գիտական /Տէր եւ տնօրէն՝ Կիրակոս Տոնիկյան.- Պէյրութ: Տպ. Կ. Տօնիկեանի, 1930.

Պարբերականի մասին մատենագիտական տվյալներ կան հայ պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում (ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 185; ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 436; ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 146): Գ. Լևոնյանը նշել է, որ ամսագիրը հրատարակվել է 1929 թվականից: Ըստ մատենագիտական ցանկերի՝ Հայաստանի ազգային գրադարանում առկա են 1930 թ. 3, 9-րդ և 1931 թ. 10-12-րդ համարները: Ամբողջական փաթեթը պահպանվում է Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի Մատենադարանում:

«Գրիգոր Պողարյան» հավաքածուի ուսումնասիրության արդյունքում ի հայտ եկավ պարբերականի 1930 թ. 2-րդ համարը, որը մեզ հասանելի միակ օրինակն է հայաստանյան հավաքածուներում: Այն բաղկացած է 8 էջից, գտնվում է բարվոք վիճակում: Տե՛ս <https://arar.sci.am/dlibra/publication/404423/edition/373779>

5. Սահակ-Մեսրոպ: Գրական, գիտական եւ գեղարուեստական կիսամսեայ հանդէս /Արտ. եւ պատ. տնօրէն-խմբ.՝ Միհրան Նաճարեան.- Պէյրութ: Տպ. Լիբանան Մաարաթ, 1933.

Ամսագիր հրատարակվել է 1927-1933 թթ.: Հանդեսի մասին մատենագիտական տվյալներ կան հայ պարբերական մամուլի համահավաք մատենագիտական ցանկերում (ԼԵՎՈՆՅԱՆ 1934, 144; ԲԱԲԼՈՅԱՆ 1986, 174; ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 433): Ա. Կիրակոսյանը նշել է, որ 1933 թ. որոշ համարներ առկա են Փարիզի Նուբարյան

մատենադարանում, իսկ ամբողջական փաթեթը գտնվում է Վիեննայի Մխիթարյան միաբանության մատենադարանում:

«Գրիգոր Պողարյան» հավաքածուում հայտնաբերվեց պարբերականի 1933 թ. 3-րդ համարը, որը մեզ հասանելի միակ օրինակն է հայաստանյան հավաքածուներում: Հիշյալ համարի էջակալությունը սկսվում է 26-րդ էջից, ինչը հուշում է, որ 1933 թ. տարբեր համարների էջակալությունը շարունակական է: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/406565/edition/375822>

6. Սուրբ Մեսրոպ: Գրական եւ գիտական պարբերագիրք /Հրատ.՝ Գ. Աֆարեան.- Պէյրուֆ: Տպ. Մասիս, 1946.

Ըստ մատենագիտական ցանկերի (ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970, 444; ԲԱՐԼՈՅԱՆ 1986, 224)՝ պարբերագրքի մեկ օրինակ պահպանվում է Երուսաղեմի մատենադարանում: Հայաստանում մեզ հայտնի միակ օրինակը հայտնաբերվել է «Գրիգոր Պողարյան» հավաքածուում՝ <https://arar.sci.am/dlibra/publication/396188/edition/366595>

7. Պիծակ: Պարբերաթերթ.- Պէյրուֆ: Հրատարակութիւն Բ. Զ. Ը. Ա. Եկեղեցոյ, 1964.

Պարբերաթերթի մասին պահպանվել են սեղմ մատենագիտական տվյալներ, քանի որ որևէ համար առ այսօր ֆիզիկապես հասանելի չի եղել հետազոտողին: Մ. Բաբլոյանը նշել է վերնագիրը, հրատարակչի, տպագրության տարեթվերը, երեք համար և բազմակետ դրել, որովհետև ենթադրել է, որ ամսագիրը շարունակություն է ունեցել (ԲԱՐԼՈՅԱՆ 1986, 279): Ա. Կիրակոսյանի մատենագիտության մեջ անդրադարձ ընդհանրապես չկա, իսկ Ա. Տեր-Խաչատուրյանն ընդգծել է, որ լույս է տեսել 2 համար (ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 2014, 179):

Գրադարանի «Գրիգոր Պողարյան» հավաքածուում հայտնաբերվել է պարբերաթերթի 3-րդ համարը: Սույն օրինակն ունի միայն

շապիկ, որի վրա ձեռագիր նշված է Պէյրուֆ, արձանագրված է նաև արժեքը՝ 50 լ. դ.: Տպագրության տարեթիվն ընդհանրապես նշված չէ, սակայն նյութերի ընթերցումից պարզ է դառնում, որ լույս է տեսել 1964 թ. հավանաբար մարտ ամսին: Բաղկացած է 17 էջից, շարվածքը՝ 25x16,5 սմ: Գտնվում է բարվոք վիճակում: Տե՛ս

<https://arar.sci.am/dlibra/publication/400903/edition/371016>

Օգտագործված գրականության ցանկ (References)

ԲԱԲԼՈՅԱՆ 1986 – Բաբլոյան, Մ. (կազմ.) (1986), *Հայ պարբերական մամուլը (1794-1980)*, Երևան, ՀՍՍՀ ԳԱ, 470 [Babloyan, M. (comp.) (1986), *Hay Parberakan Mamuly. Matenagitakan Hamahavak Ts'uts'ak*], Yerevan, Academy of Sciences of Arm.SSR, 470];

ԳՐԻԳՈՐՅԱՆ 2023 – Գրիգորյան, Մ. (2023), ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի «Էդգարյան» հավաքածուն, *Հրապրու Հայկական գրադարանային ասոցիացիայի*, 1(1), 73-96 [Grigoryan, M. (2023), The "Edgarian" Collection of the Fundamental Scientific Library of NAS RA, *Herald of the Armenian Library Association*, 1(1), 73-96];

ԼԵՎՈՆՅԱՆ 1934 – Լևոնյան, Գ. (կազմ.) (1934), *Հայոց պարբերական մամուլը (1794-1934)*, Երևան, Պետհրատ, XXXI, 228, 3 [Levonyan, G. (comp.) (1934). *Hayots' Parberakan Mamuly (1794-1934)*, Yerevan, Pethrat, XXXI, 228, 3];

ԿԻՐԱԿՈՍՅԱՆ 1970 – Կիրակոսյան, Ա. (կազմ.) (1970), *Հայ պարբերական մամուլի մատենագիտություն (1794-1967)*, Երևան, ՀՍՍՀ Ալ. Մյասնիկյանի անվան հանրապետական գրադարան, 621 [Kirakosyan, A. (comp.) (1970). *Hay Parberakan Mamuly (1794-1967)*, Yerevan, Public Library of Armenian SSR after Al. Myasnikyan, 621];

ՀԱՅ ԳԻՐՔ 2012 – Գյուլումյան, Օ. Գրիգորյան, Ս. (կազմ.) (2012), *Հայ գիրքը 1921-1930 թվականներին*, Երևան, Գիրք, 788 [Gyulumyan, O., Grigoryan, S. (comp.) (2012), *The Armenian Book in 1921-1930*, Yerevan, Girk, 788];

ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 1966 – Տէր-Խաչատուրեան, Ա. (1966), Հայ պարբերական մամուլի բիբլիոգրաֆիա, հեղինակ՝ Յովհ. Պետրոսեան, *Հասկ* (Անթիլիաս), 11-12, 448-453 [Ter Khachaturyan, A. (1966), Hay parberakan mamuli bibliografia, heghinak Hovh. Poghosyan, Hask (Antilias), 11-12, 448-453]:

ՏԷՐ-ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ 2014 – Տէր-Խաչատուրեան, Ա. (2014), Հայ մամուլի մատենագիտական գործեր, Պէյրութ, 2014, 660 [Ter Khachaturyan, A. (2014), Hay mamuli matenagitakan gortser, Beirut, 2014, 660]:

ԵՎՐՈՊԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՕՐԵՐԻ ՃԱՄԲԱՐ *

ՀՏԴ: 02(479.25)

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համակարգմամբ Հայաստանում ավել քան 20 տարի անցկացվում է «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագիրը, որի շրջանակում 2023 թ. Եվրոպայի Խորհուրդը հայտարարել էր «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» դրամաշնորհային մրցույթը: «Եվրոպական ժառանգության օրեր» ծրագրին միացած տարբեր երկրների մշակութային կազմակերպություններ հնարավորություն ունեցան մասնակցել այս մրցույթին:



2023 թ. Եվրոպայի Խորհրդի կողմից հայտարարված «Եվրոպական ժառանգության օրերի պատմություններ» դրամաշնորհային ծրագրին

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության համակարգմամբ դիմել էր նաև Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը՝ ներկայացնելով «Հեքիաթի դեսպաններ» խորագիրը կրող հեղինակային նախագիծը: Աշխարհի տարբեր երկրներից ներկայացված 120 հայտերից մրցութային փուլը հաղթահարել և

* Ներկայացվել է 13.06.2024, ընդունվել է տպագրության 26.06.2024:
The article was submitted on 13.06.2024, accepted for publication on 26.06.2024.

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

լավագույնների ցանկում ընդգրկվել են Հայաստանի, Իտալիայի, Ֆրանսիայի, Հունաստանի, Ուկրաինայի, Գերմանիայի, Լիտվայի, Անգլիայի ներկայացրած նախագծերը:

Նախագիծը Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանն իրականացրել է Լոռու մարզի Սպիտակի քաղաքային գրադարանում և Տավուշի մարզի Աջաջուրի մշակույթի տանը:

Ծրագիրը մեկնարկել է 2024 թ. մարտից. Լոռու մարզի Սպիտակի քաղաքային գրադարանում՝ մարտի 27-ին, Տավուշի մարզի Աջաջուրի մշակույթի տանը՝ մարտի 29-ին՝ «Եվրոպական ժառանգության օրերի ճամբար» խորագրի ներքո:



Ծրագրի առաջին փուլում Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը Սպիտակի քաղաքային և Աջաջուրի համայնքային գրադարաններին նվիրաբերել է շուրջ 400 անուն նորատիպ մանկապատանեկան գրքեր, որոնք տեղադրվել են գրադարանի նորաբաց ընթերցանության անկյուններում:

Այնուհետև, մարզերի վերոհիշյալ գրադարանների 8-14 տարեկան շուրջ 30 ընթերցողների համար իրականացվել են վարպետության դասեր. ապրիլի 25-28-ը Աջաջուրի մշակույթի տանը, իսկ մայիսի 2-5-ը՝ Սպիտակի քաղաքային գրադարանում:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանի աշխատակիցները մանուկ և պատանի ընթերցողների համար անցկացրել են տարբեր երկրների մշակութային ժառանգության և պահպա-

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

նությանն առնչվող միջոցառումներ, եվրոպական մանկապատանեկան գրքերի ընթերցում, թեմատիկ քննարկումներ, ինտերակտիվ վիկտորինաներ, որոնց միջոցով ամրապնդվել են ծրագրի շրջանակում ստացած գիտելիքները: Ծրագրի մասնակից երեխաների համար անցկացրել են նկարչական վարպետության դասեր: Երեխաները նկարչական արվեստի աշխարհում իրենց առաջին քայլերն են արել, սովորել են նկարչական հիմունքները, նոր հմտություններ ձեռք բերել, յուրացրել նկարչական խառը տեխնիկայի նրբությունները, զարգացրել ստեղծագործական միտքն ու կարողությունները:

Ծրագրի ամփոփումն ու փակման արարողությունը տեղի է ունեցել 2024 թ. մայիսի 15-ին, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանում:



Արարողության շրջանակում բացվել է «Մշակույթների երկխոսություն» խորագիրը կրող ցուցահանդեսը, որտեղ ներկայացվել են Սպիտակի և Աջաջուրի գրադարանների՝ ծրագրին մասնակից երեխաների նկարչական աշխատանքները: Ցուցադրվել են ճամբարի օրերին նկարչության դասընթացի շրջանակում երեխաների կողմից ստեղծած դիմանկարները: Որպես ոգեշնչման աղբյուր՝ երեխաներն ընտրել էին իտալացի նկարիչ Ա. Մոդիլյանի և ֆրանսիացի նկարիչ Ֆ. Լեժեի կտավները՝ կիրառելով հայկական մանրանկարչության զարդանախշերի նմուշները:

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Այսպիսով, Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարանը հաջողությամբ իրականացրել է ևս մի նախագիծ:



Ծրագիրը հնարավորություն է տվել մարզերում բնակվող մանուկ և պատանի ընթերցողներին կրթամշակութային դասընթացների միջոցով հաղորդակցվել եվրոպական և հայկական մշակութային ժառանգությանը, ձեռք բերել նոր գիտելիքներ, ընթերցանության և արվես-

տի միջոցով զարգացնել ստեղծագործական կարողություններն ու միտքը:

Հատկանշական է, որ ծրագրի շրջանակում Սպիտակի և Աջաջուրի գրադարանները համալրվել են նորատիպ մանկապատանեկան գրքերով, ինչն ընթերցանության խթանման լավագույն միջոց է:

Խնկո Ապոր անվան ազգային մանկական գրադարան

**ՉԻԿԱԳՈՅԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆԻ
«ԲԵՉԱՉԵԱՆ» ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՄԱՍԻՆ***

ՀՏԴ: 93(=919.81)(73)+02

Չիկագոյի հանրային գրադարանը հիմնադրվել է 1873 թ. և իր 81 մասնաճյուղերով հանրությանն է տրամադրում գրադարանային և տեղեկատվական բնույթի տարաբնույթ ծառայություններ: Ինչպես բոլոր ամերիկյան հանրային գրադարանները, իր նորարարական ծառայությունների և հարուստ հավաքածուների շնորհիվ այս գրադարանը ևս համայնքի բնակիչների շրջանում հանդիսանում է հանդիպումների, ինքնակրթվելու, կարդալու և մտքերի փոխանակման սիրված վայր:

«Բեզազեան» մասնաճյուղը բացվել է 1957 թ. հունվարի 26-ին: Այն Չիկագոյի հանրային գրադարանի համակարգի թվով 17-րդ մասնաճյուղն է, անվանակոչվել է 1945 թ. մարտի 11-ին Ֆիլիպիններում Լուզոնի կղզու համար մղվող ճակատամարտում զոհված 33-ամյա լեյտենանտ Հարոլդ Ա. Բեզազեանի հիշատակին: Գրադարանի շինարարությունը ֆինանսավորել է Հարոլդի հայրը՝ Արսեն Բեզազեանն՝ իր որդու հիշատակը հավերժացնելու նպատակով:

Հարոլդը մեծացել է Չիկագոյի Ափթաուն թաղամասում, սովորել է Օբերլին քոլեջում և ավարտել Կոլումբիայի համալսարանը՝ ստանալով լրագրողի որակավորում: Նա «Chicago Times»-ում աշխատել է որպես թղթակից, իսկ 1941 թ. զինվորագրվել է ԱՄՆ բանակին: Պարգևատրվել է ԱՄՆ բանակի «Մանուշակագույն սիրտ» և «Բրոնզե աստղ» մեդալներով՝ Ֆիլիպիններում և Նոր Գվինեայում մարտա-

** Ներկայացվել է 18.02.2024, ընդունվել է տպագրության 11.03.2024:
The article was submitted on 18.02.2024, accepted for publication on 11.03.2024.*

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

կան գործողություններին մասնակցելու համար: 1934 թ., Կոլումբիայի համալսարանի ժուռնալիստիկայի դպրոցն ավարտելուց հետո, ստացել է Պուլիտցերյան ճանապարհորդական դրամաշնորհ՝ կրթությունը Եվրոպայում շարունակելու համար: 1941 թ. մարտին կամավորագրվել է ԱՄՆ բանակին, ծառայել է Իսլանդիայում և Մեծ Բրիտանիայում: 1943 թ. ստացել է լեյտենանտի կոչում և ուղարկվել է Ֆիլիպիններ՝ վեցերորդ հետևակային դիվիզիայի կազմում մասնակցելու մարտական գործողությունների: Կոլումբիայի համալսարանի պատվո անվանակարգի ցուցակում Հարոլդ Բեզազեանին վերաբերվող գրառում կա¹:

Չիկագոյում հրատարակվող Uptown Update լրատվական կայքի 2019 թ. հունիսի 9-ի թողարկումը նվիրված է Բեզազեան ընտանիքին: Հոդվածում նշված է, որ Ջոն Բ. Բեզազեանը հայ ներգաղթյալ էր, 1895 թ. 20 տարեկան հասակում եկել է ԱՄՆ, սկզբում հաստատվել է Ռոդ Այլենդում, իսկ 1906 թ.՝ տեղափոխվել Չիկագո: Նա և իր կինը՝ Դեյզին, ունեցել են երեք երեխա՝ Փոլը, Ռոզելը և Հարոլդը: Անկախ այն հանգամանքից, որ Ջոն Բեզազեանը անգլերեն չէր խոսում և շատ քիչ փող ուներ, Ջոնը հարստություն է կուտակել անշարժ գույքի վաճառքից, Միսսիսիպիում աճող եղրիզենու (tung tree) ծառերի մեծ ֆերմայից և ներմուծված գորգերի առևտրից: Կուտակելով որոշակի հարստություն՝ Ջոն Բեզազեանը սկսել է զբաղվել բարեգործությամբ:

Հարոլդի զոհվելուց հետո հայրը սահմանել է կրթաթոշակ, որպեսզի Միսսիսիպիի գյուղացի դեռահասները կարողանան հաճախել Միսսիսիպիի նահանգային համալսարան: Շատ դեռահասներ,

¹Columbia University Archives

<https://library.columbia.edu/libraries/cuarchives/warmemorial/world-war-ii/bezazian-harold-arsene.html> (11.03.2024):

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ուվքեր բանվորություն էին արել եղրիզենու ծառերի ֆերմայում, այդպես ստացել են կրթաթոշակը:

2008 թ. «Բեզազեան» կրթաթոշակ ստացողներից մեկը լրագրողին պատմել է հետևյալը. «Դա 1955-ին էր: Հիշում եմ, որ հայրս ինձ տարավ Trailways ավտոկայան: Նա ինձ համար մեկ ուղղությամբ տոմս գնեց դեպի Միսսիսիպի քաղաք և տվեց ինձ 20 դոլար: Բեզազեանի շնորհիվ է, որ իմ ծնողների համար իմ կրթությունը քուլեջում այդքան արժեցավ»:

Ջոնը երեք զբոսայգի է հիմնել Միսսիսիպի նահանգի Գալֆ-փորթ քաղաքի աղքատ և անապահով հատվածներում՝ անվանելով դրանք Հարոլդի անունով: Նա նշել է, որ այդպես է վարվում, քանի որ հիշում է, թե ինչ բան է աղքատ լինելն ու խտրականությունը, ուստի ցանկանում է կյանքը մի փոքր ավելի լավացնել այդ տարածքներում ապրող երեխաների համար: Հարոլդ որդուն նվիրված հուշատախտակներ են տեղադրված այդ երեք զբոսայգիներից յուրաքանչյուրի մուտքի մոտ:

1951 թ. դեկտեմբերին Ջոնը, իր հարսի՝ Ֆլորենս Բեզազեանի հորդորով 50,000 ԱՄՆ դոլար (այսօրվա գումարով 475,000 դոլար) նվիրաբերեց Չիկագո քաղաքին՝ իր որդու հիշատակին գրադարան կառուցելու համար: Նվիրատվության պայմաններից մեկն այն էր, որ նոր գրադարանը պետք է գտնվեր Բրոդվեյում կամ մոտակայքում՝ այն թաղամասում, որտեղ մեծացել է Հարոլդը:

Ջոն Բեզազեանը մահացել է Չիկագոյում՝ գրադարանի բացումից երկու տարի անց, 1959 թ. հունիսին, 84 տարեկան հասակում:

Պատրաստեց՝ Տիգրան Զարգարյանը

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ



Չիկագոյի հանրային գրադարանի «Բեզազեան» մասնաճյուղը



Բեզազեան մասնաճյուղի գրադարան



**2018 թ. հունիսի 16-ին
Բեզազեան գրադարանի
դիմացի փողոցը
անվանակոչվել է
լեյտենանտ
Հարոլդ Բեզազեանի
անունով**

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Գլխավոր խմբագրի սյունակ 3

ՏԵՍՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՊՐԱԿՏԻԿԱ

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ

Թվային տեխնոլոգիաների կիրառումը

մատենագիտական նկարագրություն պատրաստելիս..... 5

21-ՐԴ ԴԱՐԻ ԳՐԱԴԱՐԱՆ

ՍՈՆԱ ՄԵՍՐՈՊՅԱՆ

Գրադարանային կայքէջի կառուցման և

ծնավորման չափորոշիչները..... 19

ՄԱՐԶԱՅԻՆ ԵՎ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆՆԵՐ

ՄԱՐԻՆԵ ԱՆՏՈՆՅԱՆ

Արմավիրի մարզային գրադարանի խնդիրներն ու զարգացման

միտումները..... 30

ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆ

ՍԱԹԵՆԻԿ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Սուրբ Հակոբ մատուռ-սրբատեղին և նրանում առկա

Մայր Ժամագրքի ուսումնասիրության շուրջ..... 44

ԴՈՆԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ

Գրիգոր Խալդարյանի տպարանի

հրատարակությունների գրապատմական արժեքը..... 60

ՄԱՏԵՆԱԳԻՏԱԿԱՆ ՃՇԳՐՏՈՒՄՆԵՐ

ՀԱՄՈ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ՀՍԽՀ Արտգործադրության «Բիլետեն»-ի նորահայտ համարը.... 76

ՏԻԳՐԱՆ ԶԱՐԳԱՐՅԱՆ, ԱՆՈՒՇ ԹՐՎԱՆՅ

«Ժամանակ» անվանումը կրող մի հավելվածի

տպագրության տարեթվի առնչությամբ 83

ՄԱՅԱ ԳՐԻԳՈՐՅԱՆ

<i>ՀՀ ԳԱԱ Հիմնարար գիտական գրադարանի հավաքածուները. նոր ձեռքբերումներ.....</i>	90
--	----

ԳՐԱԴԱՐԱՆԱՅԻՆ ԻՐԱԴԱՐՁՈՒԹՅՈՒՆՆԵՐ

<i>Եվրոպական ժառանգության օրերի ճամբար.....</i>	103
<i>Չիկագոյի հանրային գրադարանի «Բեզազյան» մասնաճյուղի մասին.....</i>	107

CONTENTS

<i>Editor-in-Chief's Column</i>	3
---------------------------------------	---

THEORY AND PRACTICE

TIGRAN ZARGARYAN

<i>Using digital technologies during the preparation of the bibliographic description</i>	5
---	---

21ST CENTURY LIBRARY

SONA MESROPYAN

<i>User-friendly library websites: design and building standards.....</i>	19
---	----

REGIONAL AND COMMUNITY LIBRARIES

MARINE ANTONYAN

<i>The problems and development trends of Armavir regional library: facing the challenges of the 21st century.....</i>	30
--	----

CULTURAL HERITAGE

SATENIK GRIGORYAN

*As part of the study of the temple of St. Hakob
and the main book of Horologia.....* 44

DONARA MKRTCHYAN

*Literary and historical value of
Grigor Khaldaryan's printing house's publications.....* 60

BIBLIOGRAPHIC VERIFICATIONS

HAMO SUKIASYAN

*The newly discovered issue of the "Bulletin" of the
Ministry of the Foreign Affairs committee of the
Armenian Soviet Socialistic Republic.....* 76

TIGRAN ZARGARYAN, ANUSH TRVANTS

Regarding to the date of publication of the appendix "Jamanak"..... 83

MAYA GRIGORYAN

*The collections of Fundamental Scientific Library of NAS RA:
new achievements.....* 90

LIBRARY EVENTS:

European heritage days camp..... 103

The "Bezazean" branch of the Chicago Public Library..... 107

Հայերեն բաժնի խմբագիր
Հայերեն բաժնի սրբագրիչ
Անգլերենի խմբագիր և սրբագրիչ՝
Համակարգչային ձևավորում և էջադրում՝

Նելլի Հայրապետյան
Գոհար Սարգսյան
Նունե Շահումյան
Ռուզաննա Թումանյան

Editor of Armenian section
Proofreader for Armenian section
Editor and proofreader of English
Computer design and pagination

Nelly Hayrapetyan
Gohar Sargsyan
Nune Shahumyan
Ruzanna Sargsyan

Խմբագրության հասցեն՝ 0019, Երևան,
Մարշալ Բաղրամյան պող. 24/6

Address: Marshal Baghramyan ave. 24/6, 0019, Yerevan, Armenia

Ամսագրի պաշտոնական կայքէջը՝
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

Official site of the journal
<https://www.flib.sci.am/journal/Lratu/>

